ALIGN
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄ

# ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՀՀ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ՓԵՏՐՎԱՐ 2016**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱԲԱՆ** .......... 4
**ԳԼՈՒԽ 1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ** .......... 6
Ուղղահայաց համապատասխանեցում .......... 7
Հորիզոնական կամ կառուցողական համապատասխանեցում .......... 17
**ԳԼՈՒԽ 2: ԲՈՒՀԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ** .......... 22
Համապատասխանեցմանը նախորդող գործողություններ .......... 22
Գործողություններ՝ ուղղված համապատասխանության ապահովմանը .......... 25
Համապատասխանեցմանը հաջորդող գործողություններ .......... 31
**ԳԼՈՒԽ 3: Համապատասխանության ապահովման գործընթացի ստուգում** .......... 32
Համապատասխանության ապահովման գործընթացի ստուգման քայլեր .......... 33
**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ** .......... 41
**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ** .......... 44
ՀԱՎԵԼՎԱԾ 1- ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼՈՂ ԲԱՅԵՐ .......... 44
Բլյումի տաքսոնոմիայի նկարագրող բայեր .......... 46
ՀԱՎԵԼՎԱԾ 2- ՄԿԾ-Ի ԵՎ ՈԱՇ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ .... 47
ՀԱՎԵԼՎԱԾ 3- ՈԱՇ. ԿԱՊԸ ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐՅԴՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ .......... 50
ՀԱՎԵԼՎԱԾ 4- ՄԿԾ-Ի ԵՎ ՄՈԴՈՒԼԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՉԱՓԵՐ .......... 55
ՀԱՎԵԼՎԱԾ 5- ՄԿԾ-Ի ՁԵՎԱՉԱՓ – ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՍՏԻՃԱՆ (ԴՈՒԲԼԻՆՅԱՆ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ) .......... 63
ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներ. մակարդակ X .......... 64
ՄԿԾ-ի Ձևաչափ – Մագիստրոսի Աստիճան (Դուբլինյան Նկարագրիչներ) .......... 66
ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներ. մակարդակ X .......... 67
Մոդուլի ուսումնառության արդյունքների չափանիշներ .......... 75
Մոդուլի կառուցողական համապատասխանեցման ձևաչափ .......... 76
ՀԱՎԵԼՎԱԾ 6- ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (Փաթեթ) .......... 77
ՀԱՎԵԼՎԱԾ 7- ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ .......... 78
Դասավանդման ձևերը .......... 78
Դասավանդման և ուսումնառության մեթոդները .......... 80
ՀԱՎԵԼՎԱԾ 8- ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .......... 84
ՀԱՎԵԼՎԱԾ 9-ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ .......... 92

ՀԱՎԵԼՎԱԾ 10- ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ........ 101
ՀԱՎԵԼՎԱԾ 11- ՄԿԾ-Ի ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՓՈՒԼԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ........ 104
1- Մոդուլի/Միավորի Անվանումը, Կրեդիտները և Գնահատման Ձևերը ........ 106
2- ՄԿԾ-ի Առաջարկվող Ժամանակացույց - Փուլ 1 ........ 107
3- ՄԿԾ-ի Առաջարկվող Ժամանակացույց - Փուլ 2 ........ 108
4- ՄԿԾ-ի Առաջարկվող Ժամանակացույց - Փուլ 3 ........ 109
5- ՄԿԾ-ի Առաջարկվող Ժամանակացույց - Փուլ 4 ........ 110
ՀԱՎԵԼՎԱԾ12- ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ՁԵՎԱՉԱՓ ........ 111
Մասնագիտության կրթական ծրագրի բենչմարքինգի ձևաչափ ........ 111
ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների գնահատում ........ 112
Ուսանողների Ուսումնառության Արդյունքներ կամ Բենչմարքներ ........ 114
ՄԿԾ-Ի Բենչմարքինգի Ձևաչափ ........ 117
ՀԱՎԵԼՎԱԾ 13. ԱՐՏԱՔԻՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ (ՆԱԽՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ) ........ 122
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ........ 128

# ՆԱԽԱԲԱՆ

Համապատասխանեցումը, որպես կանոն, ներկայացվում է իբրև մի գործընթաց, որի միջոցով համաձայնեցվում են բովանդակության չափորոշիչները և դրանց գնահատման գործընթացը: Կրթության ոլորտում, համապատասխանեցումը ենթադրում է կոնկրետ մասնագիտության կրթական ծրագերի (ՄԿԾ) բարելավում հաստատության ներքին ղեկավարման մարմնի կողմից՝ իրականացնելով շրջափուլային և շարունակական որակի ներքին ապահովման փաստերով ամրապնդված գործընթաց: Կրթության ոլորտում համապատասխանեցումը, հիմնականում, առնչվում է ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների հետ՝ դիտարկելով տարբեր մակարդակներում և տարբեր տեսանկյուններից, և, հետևաբար, համապատասխանեցում հնարավոր է ապահովել միայն հաստատության կողմից ընդունված և իրականացվող՝ ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցման առկայության պայմաններում:

Հաշվի առնելով կրթության ոլորտում ներգրավված շահառուների մեծ թիվը, ազգային և միջազգային կարգավորումների առավել լայն համատեքստը, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջները, համապատասխանեցումը ենթադրում է մի շարք տրամաբանական հաջորդականության քայլեր և գործողություններ, ինչպես նաև այնպիսի գործիքակազմի կիրառում, որը թույլ կտա փաստաթղթավորել համապատասխանեցմանը միտված ուսումնական ծրագրի մշակման տրամաբանությունը և բովանդակությանը վերաբերող որոշումները:

Մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանեցումն ապահովվում է երկու մակարդակներում/առանցքներում՝ ուղղահայաց և հորիզոնական: Այլ կերպ ասած, ՄԿԾ-երի համապատասխանությունն ապահովում են աստիճանական/հիերարխիկ մակարդակում՝ կիրառելով հովանու և առավել բարձր մակարդակի կարգավորիչ շրջանակներ, ինչպես նաև ներքին մակարդակում՝ երաշխավորելով դասավանդման ու ուսումնառության գործընթացների և գնահատման մեթոդների համահունչությունը («կառուցողական համապատասխանեցում", BIGGS, 1999): Համապատասխանեցման գործընթացը խթանելու համար հաստատությանն անհրաժեշտ է քաղաքականության և ընթացակարգերի փաթեթ:

Համապատասխանության ապահովումը ՄԿԾ-երի ուսումնառության արդյունքների և առկա շրջանակների՝ Որակավորումների Ազգային Շրջանակի (ՈԱՇ), ինչպես նաև ծրագրի

հատկանշական տարրերի միջև, սովորաբար քննության է ենթարկվում համապատասխան հավատարմագրման/ վավերացման գործընթացի միջոցով:

Հետևաբար, սույն *«Մասնագիտության կրթական ծրագրերի և ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի միջև համապտասխանության ապահովման ուղեցույցը»* ներառում է առաջարկություններ ծրագրի համապատասխանեցման մեթոդաբանական և ընթացակարգային հարցերի վերաբերյալ, ինչպես նաև տրամադրում է մի շարք գործիքներ, որոնք կարող են առավել հեշտացնել համապատասխանության ապահովման, ինչպես նաև այդ ուղղությամբ ձեռք բերված արդյունքների գնահատման գործընթացը:

# ԳԼՈՒԽ 1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ

Որակի ներքին ապահովման համատեքստում, ԲՈՒՀ-ն է կրում հիմնական պատասխանատվությունը ՄԿԾ-երի և ՈԱՇ-ի միջև համապատասխանության ապահովման և ստուգման համար: Համապատասխանության ապահովման ձեռնարկված, իրականացված և հիմնավորված գործընթացը նախապայման է ՄԿԾ-ի որակյալ գործունեության համար:

ՄԿԾ-երի համապատասխանեցումը կարող է իրականացվել երկու դեպքում. մասնավորապես, երբ մշակվում է նոր ՄԿԾ, կամ վերանայվում է արդեն իսկ առկա ծրագիրը: Ցանկացած դեպքում, գործընթացը ուղղված է այնպիսի նախանշված ուսումնառության արդյունքների (ՈՒԱ) մշակմանը, որոնք համապատասխանում են ՈԱՇ-ի և այլ նորմատիվ/կարգավորող փաստաթղթերի (օրենսդրություն, հաստատության առաքելություն և այլն) պահանջներին:

Հետևաբար, մենք այս երկու դեպքերը կդիտարկենք որպես իրար շատ նման գործընթացներ, որոնք կարող են ունենալ աննշան տարբերություններ իրականացման ընթացքում, ինչը, սակայն, էապես չի ազդի ձեռնարկվող քայլերի հաջորդականության վրա:

Քանի որ ՄԿԾ-երի համապատասխանության ապահովման սկզբունքները սերտորեն կապված են կամայական ՄԿԾ-ի մշակման, ինչպես նաև մասնագիտության կրթական ծրագրի՝ որպես փաստաթղթի, մշակման սկզբունքների հետ, ապա Ուղեցույցի այս բաժինը հակիրճ կանդրադառնա ՄԿԾ-ի մշակման գործընթացում առաջացող հիմնական խնդիրներին:

Մասնագիտության կրթական ծրագիր (ուսումնական, մասնագիտական կամ արհեստագործական) կոչվում է այն ուսումնական ծրագիրը, որի նպատակը աստիճանի շնորհումն է՝ միտված սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը՝ համադրելով ֆորմալ բուհական դասավանդումն ու պրակտիկան, վերապատրաստումները, մասնագիտական զարգացումն ու աշխատանքի տեղավորումը (հատկապես աշխատանք-ուսուցում ինտեգրման դեպքում):

ՄԿԾ-ն, որպես այդպիսին, հաստատության բովանդակային միավոր է, որն ունի հստակ նախասահմանված և ֆիքսված առաքելություն, նպատակներ և խնդիրներ, ինչպես նաև ներառում է ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքները, որոնք հանդիսանում են ողջ գիտելիքների,

կարողությունների և հմտությունների նախնական հայեցակարգային շրջանակ, որը ծրագիրը հաջողությամբ ավարտած ցանկացած շրջանավարտ պետք է ձեռք բերի:

Ինչպես արդեն նշվեց ավելի վաղ այս փաստաթղթում, համապատասխանեցումը ուսումնական ծրագրի ցիկլիկ և ներքին բարելավման գիտակցված գործընթաց է՝ միտված ապահովելու լիարժեք համահունչություն սահմանված որակավորման և մասնագիտական չափորոշիչների հետ: Այնուամենայնիվ, ՄԿԾ-ի մակարդակում համապատասխանության ապահովման գործընթացի մասին խոսելիս կարևոր է նշել, որ այն պետք է իրականացվի երկու առանցքներում՝

1. Ապահովելու համահունչություն ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքների և ազգային մակարդակում սահմանված չափորոշիչների միջև (ուղղահայաց համապատասխանեցում) (իրականացնելով հնարավոր և, ցանկալի է, կանոնավոր ազգային և միջազգային բենչմարքինգ՝ վերցնելով երկրի ներսում, ինչպես նաև արտասահմանում գոյություն ունեցող լավագույն փորձառությունը), և
2. Երաշխավորելու դասավանդման, ուսումնառության և գնահատման քաղաքականության և գործընթացների, ինչպես նաև կրթական միջավայրի, ռեսուրսների և աջակից ենթակառուցվածքի միջև կապը և տրամաբանական հաջորդականությունը կրթական ծրագրի իրականացման ողջ ընթացքում (հորիզոնական/կառուցողական համապատասխանեցում):

**Ուղղահայաց համապատասխանեցում**

ՄԿԾ-երի ուղղահայաց համապատասխանեցումը պետք է իրականացվի երկու մակարդակներում.

- ՈԱՇ-ի նկարագրիչներ - ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքներ, և
- ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներ – ՄԿԾ-ի միավորի[1] ուսումնառության արդյունքներ:

[1] Այս Ուղեցույցում «միավոր» եզրույթը կիրառվում է որպես առավել վերացական տերմին՝ «մոդուլ» և «դասընթաց» բառերի փոխարեն: Հետևաբար, «միավոր» եզրույթը այս փաստաթղթում վերաբերում է «այն դասավանդման միավորին, որն ունի հստակ սահմանված ուսումնառության արդյունքներ և ավարտվում է ամփոփիչ գնահատմամբ»:

ՌԱՇ-ի և ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների միջև համապատասխանության ապահովման թվացյալ նեղ շրջանակը ներառում է կրթական միջավայրին բնորոշ մեծ թվով բաղադրիչներ, որոնք պետք է հաշվի առնել ուղղահայաց համապատասխանեցման գործընթացում: Մասնավորապես, ՄԿԾ-երը պետք է մշակվեն և համալրվեն կապակցված ուսումնառության արդյունքներով, որոնք պետք է համապատասխանեն ԲՈՒՀ-ի առաքելությանն ու ուղղվածությանը՝ ներառյալ տարածաշրջանային համատեքստը: Սա նշանակում է, որ ուղղահայաց համապատասխանեցման մասին խոսելիս անհրաժեշտ է երաշխավորել չընդհատվող և տրամաբանական կապ/շարունակականություն ՌԱՇ-ի նկարագրիչների և կոնկրետ որակավորման և աստիճանի, հաստատության առաքելության և ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքների միջև:

Վերոնշյալը անհրաժեշտություն է ստեղծում ուսումնական ծրագրի մշակման գործընթացում խորությամբ ընկալելու ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցումը, ինչպես նաև «հավատարիմ լինելու որակի կառավարման ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցմանը», քանի որ սա «հնարավորություն է ստեղծում ապահովելու համապատասխանություն ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների և ՌԱՇ-ում սահմանված արդյունքների միջև»:

ՌԱՇ-ում նկարագրվում է որակավորումների միջև կապը: ՌԱՇ-ը միտված է ինտեգրելու և համակարգելու ազգային որակավորման ենթահամակարգերը, ինչպես նաև բարելավելու թափանցիկությունը, հասանելիությունը, առաջադիմությունը/զարգացումը և տրվող որակավորումների որակը՝ հաշվի առնելով աշխատաշուկայի և քաղաքացիական հասարակության պահանջները: Մասնավորապես, այն նկարագրում է որակավորման մակարդակների հիերարխիան. յուրաքանչյուր որակավորում կապվում է այս մակարդակներից մեկի հետ:

Մեկ այլ մոտեցման համաձայն, ՌԱՇ-ը (բարձրագույն կրթության ոլորտում) միակ նկարագիրն է, որը պարզաբանում և բացատրում է կապը բարձրագույն կրթության ոլորտում շնորհվող որակավորումների միջև՝ ազգային կամ կրթական համակարգի կոնկրետ մակարդակում: ՌԱՇ-ը ներկայացնում է նոր մոտեցում «որակավորում» եզրույթին՝ շեշտադրելով ուսումնառության արդյունքների կարևորությունը և հստակեցնելով, թե ինչ գիտելիքներ,

հմտություններ և կարողություններ պետք է ունենա շրջանավարտը՝ տվյալ որակավորումը ստանալու համար:

Որակավորումների ազգային շրջանակները հասկանալի են միջազգային հանրության համար և հստակ նկարագրում են բոլոր որակավորումներն ու բարձրագույն կրթության ոլորտում այլ ուսումնական նվաճումները՝ ստեղծելով սահուն կապ վերջինների միջև (Կրեդիտների կուտակման և փոխանցման Եվրոպական համակարգի օգտատերերի ուղեցույց)[2]:

Որակավորման նկարագրիչները ընդհանրական սահմանումներ են, որոնք նկարագրում են որոշակի մակարդակում տվյալ որակավորմանը համապատասխանող ուսումնառության արդյունքները՝ սահմանված ըստ գիտելիքների, կարողությունների և հմտությունների, նրանց ծավալը, բարդությունն ու զանազանությունը ՈԱՇ-ի յուրաքանչյուր մակարդակում: Նախանշված արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ ուսումնառության ծավալի հետ կապված դիտարկումները կատարվում են ՄԿԾ-ի մշակման փուլում:

| **ԳԻՏԵԼԻՔ-** այն, ինչ շրջանավարտը գիտի և հասկանում է: Գիտելիքը նկարագրվում է ծավալի, խորության, տեսակի և բարդության առումներով: | | |
|---|---|---|
| Խումբ | Ենթախումբ | Նկարագիր |
| **Գիտելիք** | Ծավալ | Որքա՞ն ընդգրկուն են սովորողի գիտելիքները: |
| | Խորություն | Որքա՞ն խորքային և ամբողջական են սովորողի գիտելիքները: |
| | Գիտելիքի տեսակներ | Ի՞նչ բնույթի կամ որակի գիտելիքների է տիրապետում սովորողը: |
| | | ✓ **Փաստացի գիտելիքներ**՝ տերմինաբանության, առանձնահատուկ մանրամասների և բաղադրիչների իմացություն: |

[2] **Մեկտորալ որակավորումների շրջանակին** վերաբերող խնդիրը բարձրացվել է որոշ բնագավառներում (մասնագիտական գործունեության կլաստերներ՝ հիմնված իրենց տնտեսական գործառույթների, արտադրանքի, ծառայությունների կամ տեխնոլոգիաների վրա) վերջին տարիներին: Նպատակն է սահմանել տարբեր ոլորտների կողմից շնորհվող տեսանելի և հասկանալի որակավորումներ՝ ձևավորելով փոխադարձ վստահություն ազգային և Եվրոպական կառավարությունների հետ:

| | | |
|---|---|---|
| | | ✓ **Կոնցեպտուալ գիտելիքներ՝** դասակարգումների, կատեգորիաների, սկզբունքների և ընդհանրացումների, տեսությունների, մոդելների և կառուցվածքների իմացություն: |
| | | ✓ **Ընթացակարգային գիտելիքներ՝** առարկայական հատուկ հմտությունների, տեխնիկայի և մեթոդների, համապատասխան ընթացակարգերի ճիշտ օգտագործման չափանիշների իմացություն: |
| | | ✓ **Մետա-ճանաչողական գիտելիքներ՝** ռազմավարական գիտելիքների, ճանաչողական առաջադրանքների/խնդիրների իմացություն, ինքնաճանաչում: |

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ - այն, ինչ շրջանավարտը կարող է անել: Հմտությունները նկարագրվում են ծավալի և բարդության առումներով և ներառում են ճանաչողական, տեխնիկական, հաղորդակցման, ստեղծագործական, միջանձնային հարաբերությունների և ընդհանրական հմտություններ:

| Խումբ | Ենթախումբ | Նկարագիր |
|---|---|---|
| **Հմտություն** | Ծավալ | Որքա՞ն լայնածավալ են սովորողի կողմից ցուցադրվող ֆիզիկական, ինտելեկտուալ, սոցիալական և այլ հմտությունները: |
| | Ընտրողականություն | Որքանո՞վ են բարդ խնդիրները, որոնք կարող է լուծել սովորողը՝ օգտագործելով ձեռք բերված հմտությունները, և ինչպե՞ս է սովորողը այդ խնդիրները լուծում: |

| | | |
|---|---|---|
| <u>ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u> – տվյալ համատեքստում գիտելիքների և հմտությունների կիրառումն է: Այն արտահայտվում է ինքնավարության, պատասխանատվության և հաշվետվողականության առումներով: Համատեքստը կարող է լինել կանխատեսելի և անկանխատեսելի, ծանոթ և անծանոթ, առօրեական և ոչ-առօրեական: | | |
| **Խումբ** | **Ենթախումբ** | **Նկարագիր** |
| **Կարողություն** | Ինքնավարություն և պատասխանատվություն | Ինչպե՞ս է սովորողը դրսևորում անձնային և խմբային պատասխանատվություն: Ինչպե՞ս է սովորողը կիրառում ձեռք բերված հմտությունները այլ անձանց հետ շփումը վերահսկելիս կամ ինքնուրույն աշխատելիս: |
| | Ինքնազարգացում | Որքանո՞վ է սովորողը կարողանում գործել նոր միջավայրում, ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ, համալրել արդեն իսկ ձևավորած գիտելիքների և հմտությունների բազան: |
| | Դերը համատեքստում | Արդյո՞ք սովորողը կարող է կիրառել իր գիտելիքներն ու հմտությունները ստեղծված համատեքստում: |
| Աղբյուրը՝ Որակավորումների ազգային շրջանակ, Արաբական Միացյալ Էմիրություններ, Էմիրությունների Որակավորումների Շրջանակ (QFE) http://www.zu.ac.ae/main/files/contents/assessment_resource/support_docs/QFEmirates_OutcomesGuide.pdf (էջ 5) | | |

ՈԱՇ-ի և ՄԿԾ-ի միջև համապատասխանության ապահովման համար անհրաժեշտ է ապացուցել և ներկայացնել փաստեր ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքների[3] և ՈԱՇ-ի նկարագրիչների համահունչության վերաբերյալ: Ուսումնառության արդյունքների կիրառումը հնարավորություն է տալիս հստակ տարբերակել ՄԿԾ-ով շնորհվող որակավորումները, օրինակ՝ բակալավրի/մագիստրոսի աստիճան: Բացի այդ, ուսումնառույթան արդյունքների վրա հիմնված մոտեցումը հնարավորություն է ընձեռում համեմատելու կրթական ծրագրերը միջազգային այլ ծրագրերի հետ, կատարել բենչմարքինգ:

[3] Այստեղ անհրաժեշտ է շեշտադրել տարբերությունը նախանշված ուսումնառության արդյունքների և ձեռքբերված ուսումնառության արդյունքների միջև: Նախանշված ուսումնառության արդյունքները նկարագրում են այն արդյունքները, որոնք ծրագրի համակարգողը կամ դասավարը նախատեսում է, որ սովորողը ձեռք կբերի ուսուցման ավարտին, այն արդյունքները, որոնք առնվազն պետք է ձեռք բերել ուսուցման ընթացքում՝ որակավորում ստանալու համար: Ձեռքբերված ուսումնառության արդյունքները արտահայտում են ստացած գիտելիքների, հմտությունների համախումբը, ինչպես նաև այդ գիտելիքների և հմտությունների կիրառումը և ցուցադրումը՝ որպես ուսումնական գործընթացի արդյունք:

Որպես կանոն, խորհուրդ է տրվում յուրաքանչյուր ՄԿԾ-ով ապահովել ոչ ավել, քան 10-15 ուսումառության արդյունք: Սրանք այն գիտելիքների, հմտությունների և կարողությունների ընդհանրական նկարագիրն են, որոնք ձևավորում է ՄԿԾ-ի շրջանավարտի մասնագիտական վարքագիծը:

Ակտիվ բայերի ցանկը (ներկայացված է Հավելվածում՝ մշակված ըստ ՈԱՇ-ի խմբերի և ենթախմբերի, ինչպես նաև ըստ Բլումի տաքսոնոմիայի), որոնք հնարավոր են դարձնում ուսումնառության արդյունքների ձեռքբերումը պատշաճ կազմակերպված դասավանդման և ուսումնառության գործընթացների միջոցով, ինչպես նաև դրանց չափելիությունը՝ նպատակային գնահատման միջոցով, կարող է օգտակար լինել ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների ձևակերպման ընթացքում:

Այդ բայերի շուրջ մտորելիս օգտակար է նաև կիրառել Սոլո (SOLO) կամ Բլյումի տաքսոնոմիաները (կամ երկուսը միասին): Օրինակ՝ «նկարագրել» բայը, ըստ էության, նշանակում է «թվարկել բավարար քանակի կետեր» և բազմաշերտ է ըստ Սոլո տաքսոնոմիայի, մինչդեռ «բացատրել» բայը հարաբերական է և պահանջում է որոշակի կապող հասկացություններ: Այս բայերը պատկանում են պատմողական/դեկլարատիվ գիտելիքի շարքին. Ի՞նչ գիտեն ուսանողները թեմայի վերաբերյալ: Այս բայերը մեզ չեն հուշում, թե ուսանողը ինչ կարող է անել այդ թեմայի իմացության շնորհիվ, ինչպես օրինակ՝ «նախագծել» բայը: Ճիշտ ընտրված բայը թույլ է տալիս սահմանել նախանշված ուսումնառության արդյունքի համապատասխան մակարդակը:

Հաշվի առնելով ՄԿԾ-ի և ՄԿԾ-ի միավորի ուսումնառության արդյունքների մշակման ռազմավարությունը, ինչպես նաև կարևորությունը ընտրելու այնպիսի գործիքակազմ, որը կապահովի հստակ համապատասխանեցում ուսումնառության արդյունքների և ՈԱՇ-ի նկարագրիչների միջև, անհրաժեշտ է կիրառել Հավելվածներում ներկայացված բայերը, որոնք դասակարգված են ըստ ՈԱՇ-ի խմբերի և ենթախմբերի: Այս բայերի օգտագործումը հնարավորություն կտա հաստատել համեմատաբար ուղիղ կապ ՈԱՇ-ի նկարագրիչների և ՄԿԾ-ի մակարդակում սահմանված ուսումնառության արդյունքների միջև, որոնք և, իրենց հերթին, կարող են բաժանվել ավելի փոքր ուսումնառության արդյունքների ՄԿԾ-ի միավորի մակարդակում:

ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքների ուղղահայաց համապատասխանությունն ապահովելիս անհրաժեշտ է նաև երաշխավորել համապատասխանությունը նշված կետերի հետ.

- ՄԿԾ-ի առաքելություն (որը համահունչ է հաստատության ընդհանուր առաքելությանը),
- ՄԿԾ-ի հիմնական խնդիրներ և նպատակներ, և
- Ծրագրի նախանշված ուսումնառության արդյունքներ,
- Ծրագրի ամբողջականությունը կազմող միավորներ,
- ՄԿԾ-ի առանձին միավորի ուսումնառության արդյունքների կայունություն և հուսալիություն՝ որպես ծրագրի կառուցվածքի մաս կազմող ծավալուն, սակայն համեմատաբար անկախ բաղադրիչ,
- ՄԿԾ-ի առանձին միավորի նախանշված ուսումնառության արդյունքների համապատասխանություն և հիերարխիա, որոնք ձևավորում են ծրագրի առավել ընդհանրական և համապարփակ նախանշված ուսումնառության արդյունքները:

**Հաստատության առաքելությունը** հստակ սահմանված և համապարփակ է. հրապարակված առաքելությունը հատուկ է սույն հաստատությանն ու համապատասխանում է բարձրագույն կրթության պահանջներին: Առաքելությունը ծածկում է դասավանդման, ուսումնառության, հետազոտության և հանրային ծառայությունների բնագավառները: Առաքելությունը առավել ընդհանրական, բայց հակիրճ փաստաթուղթ է, որն արտահայտում է հաստատության գործունեության նպատակը: Ուսանողների ուսումնառության արդյունքները բխում են հաստատության առաքելությունից: **ՄԿԾ-ի առաքելությունը** պետք է համահունչ լինի հաստատության ընդհանուր առաքելությանը: Սա կարող է առանցքային նշանակություն ունենալ ծրագրի իրական օգտատերերի ավելի լայն շրջանակին ՄԿԾ-ի բովանդակությունը ներկայացնելիս, քանի որ խիստ հետազոտական ուղղվածության հաստատությունը, հավանաբար, միտված չէ իրականացնելու կիրառական հմտություններ զարգացնող ծրագրեր:

ՄԿԾ-ի առաքելությունը, որպես ծրագրի բովանդակության և խնդիրների համապարփակ նկարագիր, սովորաբար, ներկայացվում **է նպատակներում և խնդիրներում**: Սրանք, ավանդաբար, ավելի հակիրճ և փոքր նկարագրիչներ են, որոնք բխում են ՄԿԾ-ի ընդհանուր առաքելությունից և նպատակներից: **Նպատակները** ընդհանրական տերմիններով նկարագրում են ավելի լայն

ուսումնառության արդյունքներն ու հայեցակարգերը (այն, ինչ ցանկանում եք, որ ուսանողը սովորի)։ Նպատակները պետք է ապահովեն համապատասխան շրջանակ՝ ձևակերպելու ծրագրի **առավել կոնկրետ կրթական խնդիրները** (ուսումնական/ վարքագծային), ինչպես նաև պետք է համապատասխանեն ՄԿԾ-ի և հաստատության առաքելությանը։

**Ուսումնական/ վարքագծային նպատակները** նկարագրում են դասավանդման գործընթացի նախանշված նպատակներն ու ակնկալվող արդյունքները, ինչպես նաև ապահովում են հիմք գնահատման գործընթացի համար։ Նպատակները հակիրճ, հստակ սահմանումներ են, որոնք նկարագրում են դասավանդման ուսումնառության արդյունքները, այն է՝ կոնկրետ հմտություններ, արժեքներ և դիրքորոշումներ, որոնք ուսանողները պետք է ցուցաբերեն՝ բավարարելով շեմային/սահմանային նպատակները։ Նպատակները մանրամասն նկարագրում են այն վարքագիծն ու գործելակերպի հստակ տեսակները, որոնք ուսանողները կկարողանան դրսևորել և իրականացնել դասավանդման միավորի ավարտին, ինչպես նաև այն պայմաններն ու չափանիշները, որոնք սահմանում են ուսանողի առաջադիմության անցողիկ/ընդունելի մակարդակը։

ՄԿԾ-ի նպատակները սահմանելիս առավել նպատակահարմար է ուշադրությունը կենտրոնացնել ուսանողի ուսումնառության գործընթացի, այլ ոչ թե դասախոսի դասավանդման կամ այն նկարագրության վրա, թե ինչպես ուսանողը պետք է ցույց տա իր կողմից յուրացված գիտելիքները, հմտություններն ու կարողությունները։ Սովորաբար, ՄԿԾ-ի նպատակները արտացոլված են կրթական ծրագրի նկարագրերում, ուղեցույցերում և այլ փաստաթղթերի փաթեթներում և պետք է հրապարակվեն առցանց և տարածվեն շահառուների շրջանում (պրոֆեսորադասախոսական կազմ, դեկաններ, վարչական կազմ և ուսանողներ)։ ՄԿԾ-ի նպատակները հիմք են հանդիսանում ծրագրի միավորների մշակման համար, ինչպես նաև խթանում են ուսանողակենտրոն ուսուցումն ու հագեցած դասավանդման գործընթացը։

Ինչպես տեսնում եք վերոնշյալ կետերում, ուսումնառության արդյունքները ներկայացված են տարբեր մակարդակներում, մասնավորապես՝

- **ՄԿԾ-ի մակարդակում.** ուսանողը պետք է յուրացրած լինի ծրագիրն ավարտելիս,
- **Միավորի մակարդակում**. ուսանողը պետք է յուրացրած լինի տվյալ միավորն ավարտելիս։

**ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները** շեշտադրում են, թե ուսանողը ինչ պետք է սովորի, այլ ոչ դասավանդումը ինչ «կծածկի»: Բոլոր հիմնական շահառուները՝ ներառյալ պրոֆեսորադասախոսական կազմը, ոլորտային հետազոտությունների ղեկավարները, ուսանողների աջակից անձնակազմը և ուսանողները, պետք է իմանան սա: Դասընթացի և ուսումնական ծրագրի պլանավորումը հիմնված է ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների վրա, ինչի շնորհիվ ուսանողները սովորում են կապակցված ուսումնական ծրագրով՝ վերաճելով գիտակից ուսումնառողների, ովքեր իրենք են ուղղորդում և վերահսկում իրենց ուսումնառության գործընթացը: Սա կերտում է մի միջավայր, որտեղ առաջին պլան են մղվում գնահատմանն ուղղված ջանքերը, ինչպես նաև խրախուսվում են պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում քննարկումները ուսանողների ուսումնառության գործընթացի վերաբերյալ:

**Ուսումնառության արդյունքները** սահմանումներ են, որոնք նկարագրում են այն կարևորագույն և էական գիտելիքները, որ ուսանողները պետք է ստանան: Ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցումը կրթության ոլորտում նշանակում է կառուցել ՄԿԾ-ի և ուսումնական ծրագրի մշակման, բովանդակության ընտրության, դասավանդման և գնահատման ողջ գործընթացը այն վերլուծության հիման վրա, որն արտացոլում է, թե ուսանողներին և հասարակությանը ինչ գիտելիքներ, հմտություններ և արժեքներ են անհրաժեշտ: Ուսումնառության արդյունքներն ավելի ուսանողակենտրոն են և նկարագրում են, թե սովորողը ինչ պետք է իմանա և կարողանա անել կոնկրետ իրավիճակում: Ձևակերպված ուսումնառության արդյունքների միջոցով ուսանողները նաև տեղեկանում են, թե իրենք ինչպիսի փոփոխություն են կրելու ուսումնառության արդյունքում:

Ուսումնառության արդյունքները պետք է սահմանեն ուսանողների նվաճումների նվազագույն մակարդակը: ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները սահմանում են, թե ուսանողը ինչ պետք է իմանա, հասկանա և կարողանա անել ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո:

Այսպիսով, ՄԿԾ-ի մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն խոշոր փոփոխությունը, որ տեղի է ունեցել բարձրագույն կրթության համակարգում, որի արդյունքում սովորողը տեղափոխվել է դասավանդման և ուսումնառության բոլոր գործընթացների կենտրոն ոչ միայն որպես սպառող կամ շահառու, այլ նաև որպես ակտիվ մասնակից/գործող անձ: Հաշվի առնելով ուսանողակենտրոն ուսուցումը և ուսումնական ծրագրի մշակման՝ ուսումնառության

արդյունքների վրա հիմնված մոտեցումը, նպատակահարմար է կիրառել երկկողմանի ցիկլիկ/շրջափուլային մոտեցում. *վայրընթաց/վերևից ներքև շարժ* առավել ընդհանրական ուսումնառության արդյունքներից դեպի ՄԿԾ-ի բաղկացուցիչ միավորի անհատական ուսումնառության արդյունքներ, և *վերընթաց/ներքևից վերև շարժ*, որը միտված է փաստելու ավելի ցածր մակարդակի ուսումնառության արդյունքների կուտակումն ու համալրումը ավելի բարձր մակարդակի ուսումնառության արդյունքների միասնական մակարդակին:

Միավորը ՄԿԾ-ի բաղկացուցիչ մաս է և հնարավորություն է ընձեռում հեռանկարային ուսանողներին յուրացնելու նվազագույն նախանշված ուսումնառության արդյունքները՝ վստահ լինելով համապատասխան կրթական միջավայրի, ուսուցման ձևի, աշխատակիցների աջակցության, սահմանված ծանրաբեռնվածության, ռեսուրսների և նախանշված ուսումնառության արդյունքների գնահատման հարցում:

**ՄԿԾ-ի միավորի ուսումնառության արդյունքները** պետք է կոնկրետ նկարագրեն, թե ուսանողը ինչ պետք է իմանա և կարողանա անել դասընթացի ավարտին, ավելի հստակ՝ դրանք պետք է լինեն չափելի/ պետք է հնարավոր լինի դրանք գնահատել: Բացի այդ, միավորի ուսումնառության արդյունքները սահմանում են դասընթացի բովանդակությունը, ինչպես նաև ուսանողի անցած դասավանդման և ուսումնառության փորձառության շրջանակն ու տեսակները: Միավորի ուսումնառության արդյունքները նաև գնահատման գործընթացի հիմքն են և ներկայացնում են ուսանողներին, թե իրենցից ինչ է ակնկալվում, նաև նպաստում են մեկ կամ ավելի ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների ձեռքբերմանը:

Ակնհայտ է, որ ուղղահայաց համապատասխանեցման երկրորդ փուլը տեղի է ունենում ՄԿԾ-ի և ՄԿԾ-ի միավորի ուսումնառության արդյունքների միջև: ՄԿԾ-ի միավորի մակարդակում, ծրագրի յուրաքանչյուր միավոր նույնպես ունի հստակ ձևակերպված ուսումնառության արդյունքներ, որոնք նույնպես բնութագրված են ՈԱՇ-ի համապատասխան մակարդակում, և նրանց հատկացված են որոշակի կրեդիտներ, որոնք արտացոլում են ինչպես լսարանային, այնպես էլ անհատական աշխատանքի ծանրաբեռնվածությունը:

**Հորիզոնական կամ կառուցողական համապատասխանեցում**

Հորիզոնական կամ կառուցողական[4] (Biggs, 1999) համապատասխանեցումը սահմանվում է իբրև «դասընթացի մշակման հիմնարար սկզբունք բարձրագույն կրթության ոլորտում»: Սա ուսումնառության արդյունքների և գնահատման չափանիշների ներկայիս կիրառման, ինչպես նաև ՄԿԾ-ի տեխնիկական նկարագրի մշակման հիմնարար հայեցակարգ է: Սա արտացոլում է այն փաստը, որ ուսուցման գործընթացում անհրաժեշտ է շեշտարել ուսումնառության դերը, եթե ուսումնառության արդյունքը դեռ պետք է յուրացվի/ձեռք բերվի, և ապա գնահատման դերը՝ փաստելու, որ ուսումնառության արդյունքն արդեն իսկապես յուրացվել է: Այսպիսի համապատասխանություն հնարավոր է ապահովել միայն այն դեպքում, երբ դասավանդման/ուսումնառության և գնահատման գործընթացում նախանշված ուսումնառության արդյունքները հստակ սահմանված են:

Հորիզոնական համապատասխանեցումը ենթադրում է համահունչություն ընդհանուր ուսուցման ռազմավարության, գնահատման քաղաքականության և ռեսուրսների միջև՝ խթանելու ուսանողի ուսումնառությանը, ծրագրի նախանշված ուսումնառության արդյունքներով սահմանված գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորմանը: Այլ կերպ ասած, ստեղծվում է կառուցողական համապատասխանություն ուսումնառության արդյունքների և դասավանդման մեթոդաբանության, ինչպես նաև գնահատման մեթոդների միջև (Բիգս և Թենգ, 2007), ինչը ուսանողներին հնարավորություն է ընձեռում ցուցադրել իրենց կողմից ուսումնառության արդյունքների յուրացումը:

Դասավանդման և ուսումնառության գործընթացների և գնահատման միջև համահունչություն ապահովելու համար նպատակահարմար է հակիրճ ներկայացնել դասավանդման այն ձևերն ու մեթոդները, որոնք սովորաբար կիրառվում են բուհերում: դասավանդման ձևերի ու մեթոդների ընտրությունը հաճախ պայմանավորված է ուսուցման

[4] Կառուցողական համապատասխանեցման շրջանակը մշակել է Ջոն Բիգսը: Այն կանգնած է երկու հիմնաքարերի վրա: Այն անդրադառնում է թե ուսանողի ուսումնառությանը («կառուցողական»), թե «լավ» կրթական գործընթաց ներդնելու սկզբունքին՝ տատանվելով դասից մինչև դասընթաց, դասընթացից մինչև ծրագիր («համապատասխանեցում»): Բիգսի մոտեցումը ուսանողի ուսումնառությանը ոգեշնչված է կոնստրուկտիվիզմից: Ասել է թե՝ ուսանողները իրենց գործողություններով պետք է «կառուցեն» գիտելիքներ՝ ավելացնելով արդեն իսկ առկա գիտելիքների պաշարը: Վիճելի է, թե արդյոք կոնստրուկտիվիզմը օգտակար գործիք է թե ոչ դասավանդման պրոցեսին անդրադառնալիս, քանի որ այն շեշտադրում է, թե ուսանողը ինչ պետք է անի գիտելիք կառուցելու/ձևավորելու համար: Բիգսը շարունակում է պնդել, որ եթե պետք է իրականացվի նշանակալից խորության ուսումնառություն, անհաժեշտ է բավարարել որոշակի կարևոր պայմաններ. գործողությունը պետք է ունենա հստակ նպատակ: Ուսանողները այս նպատակը պետք է իմաստալից համարեն: Գնահատման համակարգը պետք է պատշաճ կերպով ստուգի այս նպատակի իրականացումը, ինչպես նաև ուսանող-դասախոս հարաբերությունները պետք է ներառեն ազատ երկխոսության հնարավորություն: Միևնույն ժամանակ, կառուցողական համապատասխանեցումը ավելի լայնորեն կիրառվում է որպես կրթության որակի բարելավման ընդհանրական մոտեցում:

եղանակով (օրինակ՝ ամբողջ կամ կեսօրյա ուսուցում, դեմ-առ-դեմ ուսուցում, կարճաժամկետ ծրագրեր/ low-residence/, հեռակա ուսուցում, առցանց ուսուցում, խառը ուսուցում, խտացված ամառային դպրոց, համագործակցային (գործատուների, մասնագիտական ասոցիացիաների և/կամ այլ բուհերի հետ)):

Դասավանդման ձևերին և մեթոդներին վերաբերող մի բաժին՝ մանկավարժական պրակտիկայի զանազան մեթոդների անավարտ ցանկով, ներկայացված է Հավելվածներում:

Ակնհայտորեն, հորիզոնական համապատասխանեցման մասին խոսելիս դասավանդման և ուսումնառության բոլոր պարամետրերի միջև համահունչության ապահովումը մեծ դերակատարում ունի դասավանդման և ուսումնառության ձևերի ընտրության հարցում՝ միտված բարելավելու դասավանդման որակը ուսուցման տվյալ եղանակի շրջանակում: Նշված գործընթացների և գնահատման միջև ներդաշնակության ապահովումը անչափ կարևոր է և ծառայում է որպես միջոց՝ փաստելու ուսանողի կողմից ուսումնառության արդյունքների յուրացումը: Հետևաբար, անհրաժեշտ է ունենալ համապարփակ պատկերացում գնահատման բոլոր ձևերի վերաբերյալ՝ «ուսումնառության գնահատում, գնահատում՝ սովորելու համար և գնահատումը՝ իբրև ուսուցում»: Գնահատման այս երեք տեսակները իրականացվում են ձևավորող և ամփոփիչ գնահատման միջոցով:

- Ձևավորող գնահատում. ընթացիկ լսարանային գնահատում, որն իրականացվում է դասընթացի ամբողջ ընթացքում: Սա ապահովում է հետադարձ կապ յուրաքանչյուր ուսանողի կատարած աշխատանքի վերաբերյալ և օգնում դասախոսին՝ դասավանդման գործընթացում շարունակաբար կատարել անհրաժեշտ ճշգրտումներ: Ձևավորող գնահատումը, ներառյալ գնահատման ոչ-ֆորմալ լսարանային և բենչմարքային ձևերը, դասախոսներին հնարավորություն են ընձեռում փոփոխելու իրենց դասավանդման մեթոդները, ուսանողին կրկին սովորեցնելու/փոխանցելու կարևորագույն ինֆորմացիան, ինչպես նաև ուսանողների համար ստեղծելու ուսումնառության լայնամասշտաբ հնարավորություններ՝ երաշխավորելով, որ ուսանողները յուրացրել են կարևորագույն ինֆորմացիան:
- Ամփոփիչ գնահատում. գնահատման այս տեսակն իրականացվում է՝ փաստելու ուսանողի կողմից անհրաժեշտ բովանդակության յուրացումը: Երբեմն կապվելով

հաշվետվողականության հետ՝ գնահատականները տրվում են՝ փաստելու ուսանողի կատարողականը, ինչպես նաև հաստատության կամ տվյալ շրջանի գործունեության արդյունավետությունը դասընթացի կամ կիսամյակի ավարտին: Գնահատման թե՛ ձևավորող, թե՛ ամփոփիչ ձևերը կարող են խթանել ՄԿԾ-ի շարունակական բարելավմանը, ինչպես նաև ուսանողների աշխատանքի տեղավորմանը՝ ՄԿԾ-ի և իր բաղադրիչ միավորների միջև համահունչության ապահովման համատեքստում:

Հստակ և կապակցված գնահատման քաղաքականության շնորհիվ ապահովվում է ՄԿԾ-ի հուսալիությունը կրթական գործընթացի բոլոր մասնակիցների համար: Նախապես սահմանված ուսումնառության արդյունքներին համապատասխանության ապահովումը շատ կարևոր է՝ գնահատման այնպիսի մոտեցումների և ռազմավարության ընտրության տեսանկյունից, որոնք ոչ միայն երաշխավորում են ուսումնառության արդյունքների չափելիությունը, այլ նաև ապահովում են արդյունքների չափման/հաշվարկման գործընթացի արդարությունը, վստահելիությունն ու թափանցիկությունը: Այսպիսով, ՄԿԾ-ը և դասընթացի ուղեցույցները պետք է պարունակեն տեղեկատվություն գնահատման քաղաքականության կամ ռազմավարության մասին՝ ուսանողներին ներկայացնելով գնահատման կարգն ու պայմանները:

Գնահատման քաղաքականությունը սովորաբար ներառում և հստակեցնում է այն գործողություններն ու առաջադրանքները, որոնք ուսանողներն իրականացնում են իրենց ուսումնառության գործընթացին խթանելու համար: Այս քաղաքականությամբ ապահովվում է հետադարձ կապը՝ որպես ուղեցույց ուսանողների ուսումնառության գործընթացում, նրանով կարգավորվում է գնահատման մեթոդների արդիականացումը, մեկնաբանվում է գնահատականների բաշխման գործընթացը, ինչպես նաև սահմանվում են ավարտական աշխատանքի գնահատականի որոշման և նշանակման չափանիշները:

ՄԿԾ-ի գնահատման քաղաքականությունը հավասարակշռություն է սահմանում ձևավորող և ամփոփիչ գնահատման գործընթացների միջև: Գնահատումը, սովորաբար, հիմնվում է մոդուլի/դասընթացի/միավորի ընդհանուր ծանրաբեռնվածության վրա, և գնահատման գործընթացի վրա ծախսված ժամանակը նույնպես հաշվում են իբրև ուսանողի ծանրաբեռնվածության մաս: Օրինակ՝ 10 կրեդիտից կազմված միավորը կարող է ներառել երկու մեծ առաջադրանք և մեկ քննություն (տևողությունը՝ 2 ժամ), մինչդեռ 5 կրեդիտից կազմված միավորը կարող է ներառել ընդամենը մեկ առաջադրանք և մեկ քննություն (տևողությունը՝ 1.5

ժամ)։ Բաշխումը կարող է տարբեր լինել. որոշ դեպքերում ձևավորող գնահատման և համապատասխան քննության 50% - 50% մասնաբաժնով, այլ դեպքերում ավելի մեծ բաժին կարող է հատկացվել ձևավորող, այլ ոչ ամփոփիչ գնահատմանը։ Հետազոտական աշխատանքով ավարտվող ուսումնական միավորներում գնահատման բաժինը որոշվում է՝ հիմնվելով կոնկետ դեպքի վրա։ Ինտեգրված, խաչաձև գնահատումն օգտագործվում է, ըստ անհրաժեշտության՝ մեկ առաջադրանքի միջոցով ապահովելով գնահատական մի շարք ուսումնական միավորների համար։ Ավարտական աշխատանքի գնահատմամբ, սովորաբար, ամփոփվում են մի շարք ուսումնական միավորներ/առարկաներ (ընդգրկելով կրեդիտների ավելի մեծ թիվ, օրինակ՝ 20 կրեդիտ)։ Ավարտական աշխատանքի գնահատումը, որպես կանոն, միտված է գնահատելու կուտակային գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, այդ իսկ պատճառով այն իրականացվում է ուսումնառության շրջափուլի վերջում, ավելի մոտ բուհն ավարտելու շրջանին։

Չնայած, որ ուսումնական միավորի մակարդակում գնահատման մեթոդները մշակվում են անհատ դասախոսների կողմից, դրանք պետք է համապատասխանեն ամբողջական ՄԿԾ-ի գնահատման քաղաքականությանը և ծածկեն ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները։ Գնահատման գործընթացի արդարացիությունն ու վստահելիությունը (քննական թեստեր, զեկույցներ) հաստատվում է ընդհանուր հաստատության և առանձին բաժինների կանոնակարգերին համապատասխանությամբ և վերանայվում/ստուգվում է հաստատության աշխատակիցների և արտաքին դիտորդների կողմից։

Արդարացի և թափանցիկ գնահատման պահանջներին համապատասխանելու համար գնահատման ժամանակացույցն ու չափանիշները, ինչպես նաև ցանկացած այլ խնդիր, որը կապված է գնահատման գործընթացի հետ, ինչպես օրինակ՝ քննության ամսաթվեր և ընթացակարգեր, վերահանձնման ընթացակարգեր, հանձնման վերջնաժամկետներ, հնարավոր հետաձգման դեպքեր, ակադեմիական անազնվության հետևանքներ, գնահատման պայմաններ և հետադարձ կապ, բողոքարկումներ և այլն, նախապես ներկայացվում/հաղորդվում է ուսանողներին։

Այսպիսով, հորիզոնական կամ կառուցողական համապատասխանեցման մասին խոսելիս կարևոր է նշել, որ այն իրականացվում է մոդուլի/դասընթացի/միավորի նախանշված ուսումնառության արդյունքների մակարդակում։ Շատ կարևոր է ճիշտ ընկալել ՄԿԾ-ի միավորի նախանշված ուսումնառության արդյունքները, քանի որ դրանք են սահմանում, թե ուսանողը ինչ

պետք է սովորի՝ կապ ստեղծելով դասավանդման և ուսումնառության պրոցեսների նախագծման և գնահատման գործընթացի միջև: Մինչ գնահատմանն անցնելը, կարևոր է հաշվի առնել, որ երբ նախանշված ուսումնառության արդյունքները ներառում են այնպիսի բայեր, ինչպես «մշակել», «արտացոլել», «առաջադրել թեզ», «ընդհանրացնել» և այլն, կարևոր է կիրառել դասավանդման բացատրական մեթոդներ, ինչպես օրինակ՝ դասախոսություն, ուսանողին առաջադրանքը ներկայացնելու համար, բայց, միանշանակ, կպահանջվեն դասավանդման և ուսումնառության այլ մեթոդներ՝ օգնելու ուսանողին կատարել առաջադրանքը: Բանալին հետևյալն է. անհրաժեշտ է ապահովել այնպիսի համատեքստ, որտեղ ուսանողը կկատարի ճիշտ նույն գործողությունը, որն արդեն նկարագրված է նախանշված ուսումնառության արդյունքը սահմանող բայում՝ այսպիսով ապահովելով նախասահմանված ուսումնառության արդյունքների և իրական ուսումնական գործընթացի միջև հետևողականություն և շարունակականություն: Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները այսպիսի առաջադրանքի պարագայում, օրինակ՝ «Լուծել խնդիրները անծանոթ բնագավառում», ենթադրում են խնդիրների առաջադրում այնպիսի համատեքստում, որը ուսանողներին անծանոթ է (ուսանողներին ուղղակիորեն չեն սովորեցրել, թե ինչպես պետք է լուծել խնդիրը տվյալ բնագավառում): Այս առաջադրանքը, հավանաբար, անհրաժեշտություն կստեղծի օգտագործելու դասավանդման, ուսումնառության և գնահատման որոշ հնարավորություններ, օրինակ՝ տրամադրել զգուշորեն ձևակերպված հուշումներ կա՛մ ուղղակիորեն, կա՛մ համակարգչային տարբերակով: Այնուհետև, ուսանողները կարող են խմբային քննարկման ժամանակ հայտնել իրենց կարծիքը յուրաքանչյուր հուշման վերաբերյալ, և հիմնվելով խնդրի վերաբերյալ ընդհանուր դատողություններից և առկա տեղեկատվությունից՝ շարունակել աշխատել խնդրի լուծման ուղղությամբ: Պետք է հիշել, որ ուսանողին դեպի առաջադրանքի ինքնուրույն կատարումն ուղղորդելը ոչ միայն հուսալի կրթական պրակտիկա է, այլ նաև անմիջականորեն վերաբերում է ցկյանս ուսումնառության մոտեցումներին, և դասախոսին ազատում է տեղեկատվության մշտական/անփոփոխ աղբյուր լինելու անհրաժեշտությունից: Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները կարող են իրականացվել ինչպես դասախոսների, այնպես էլ համապատասխան աշխատակիցների կողմից, նաև լինել ինքնաբավ: Յուրաքանչյուրն ունի իր տեղը՝ միտված լինելով տարբեր նախանշված ուսումնառության արդյունքների իրականացմանը:

Ուսանողների հետադարձ կապը շատ կարևոր է ուսումնառության, ինչպես նաև նախանշված ուսումնառության արդյունքների յուրացման աստիճանը չափելու տեսանկյուններից (Բիգս և Թենգ, 2007):

## ԳԼՈՒԽ 2: ԲՈՒՀԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ համապատասխանեցումը ներկայացվում է որպես ուսումնառության արյունքների վրա հիմնված կրթական միջավայրում իրականացվող շարունակական, շրջափուլային, տվյալների և փաստերի վրա հիմնված բարեփոխում, այն պետք է իրականացվի գործողությունների որոշակի հաջորդականությամբ, ինչը պայմանականորեն կարելի է դասակարգել հետևյալ փուլերի՝ համապատասխանեցմանը նախորդող, բուն համապատասխանեցման և համապատասխանեցմանը հաջորդող քայլեր:

**Համապատասխանեցմանը նախորդող գործողություններ**

Անհրաժեշտ է սկսել համապատասխանեցմանը նախորդող գործողություններից՝ մինչև համապատասխանության ապահովման գործընթացի իրականացման համար սահմանված քայլերին անցնելը:

1. **Ձևավորել աշխատանքային խմբեր, ինչպես նաև գործունեության ծրագիր և համապատասխանության ապահովման ժամանակացույց**

Ուսումնառության արդյունքների մշակման համար պատասխանատու աշխատանքային խումբը պետք է ներառի բարձր որակավորմամբ աշխատակիցներ և ոլորտի մասնագետներ (պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերից): Անդամներից մեկը կարող է նշանակվել խմբի առաջնորդ և համակարգել գործընթացի արդյունավետ իրականացումը: Աշխատանքային խումբը պատասխանատու է մանրամասն գործողությունների ծրագրի մշակման համար, ինչը պետք է հաստատվի հաստատության կողմից: Աշխատանքային խմբի ձևավորման մասին պաշտոնական որոշումը պետք է ընդունվի՝ համապատասխան ղեկավար մարմինների և անհրաժեշտ ռեսուրսների ներգրավմամբ: Համապատասխանության ապահովման աշխատանքային խմբի ընտրությունը ծառայում է որպես ողջ գործընթացի և ՄԿԾ-ի իրականացման սկզբնակետ: Համապատասխանության ապահովման աշխատանքային խումբը

պետք է ներառի տվյալ ՄԿԾ-ի հետ առնչվող դասախոսներ: Հաշվի առնելով, որ ՄԿԾ-ի մշակման կամ բարելավման որոշումը, ինչպես նաև ողջ գործընթացի շրջանակն ու ծավալը սահմանվում են գործընկերների/անդամների ավելի լայն շրջանակի կողմից, համապատասխանության ապահովման աշխատանքային խմբում, առաջին հերթին, ներգրավվում են բովանդակային փորձագետներ ՄԿԾ-ի յուրաքանչյուր բաղկացուցիչ միավորի համար: Համապատասխանության ապահովման աշխատանքային խմբի անդամները կատարում են իրենց աշխատանքը անհատապես և խմբերով՝ կախված ցանկալի արդյունքից: Ամենակարևորը գործունեության այնպիսի ծրագրի մշակումն է, որը խմբի անդամներին հնարավորություն է ընձեռում կատարել իրենց աշխատանքը ամենամեծ արդյունավետությամբ: Գործընկերների ավելի լայն շրջանակի անդամները, այդ թվում՝ վարչական աշխատակիցները, ուսումնական ծրագրի մշակման մասնագետները, աշխատաշուկայի և արդյունաբերության ոլորտի ներկայացուցիչները, կարող են աջակցել ՄԿԾ-ների բովանդակության համապատասխանության ապահովման և դասընթացների մշակման գործընթացում: Ակնկալվող ուսումնառության արդյունքների շուրջ քննարկումները կխթանեն աշխատանքային խմբի ներգրավմանը ուսումնական ծրագրի համապատասխանեցման գործընթացում: Աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամի դերի սահմանումը՝ անկախ նրանից, թե վերջինս պատասխանատու է հորիզոնական թե ուղղահայաց համապատասխանության ապահովման համար, ստեղծում է հստակ պատկեր, թե խումբը ինչպիսի անհատների կարիք ունի:

2. **Ձևավորել արդյունաբերության համապարփակ ոլորտային ընկերակցություն:** Այս ընկերակցությունը, որը ներառում է կրթության, աշխատաշուկայի, արդյունաբերության ոլորտի առաջատարներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, սահմանում է այն հիմնական մարտահրավերներն ու խնդիրները, որոնք առկա են արդյունաբերության կոնկրետ ոլորտում կամ համապատասխան ծրագրերում: Ոլորտային ծրագրերում առկա խնդիրները վերհանելուց հետո, ողջ ընկերակցությունը և նրա յուրաքանչյուր անդամ պարտավորվում է լուծել այն՝ տրամադրելով ժամանակ և անհրաժեշտ ռեսուրսներ՝ երաշխավորելով, որ ծրագրում կատարվել են համապատասխան բարելավումներ, ինչը նպաստում է ուսանողների կատարողականի և առաջադիմության բարձրացմանը: Եթե հնարավոր չէ հոգալ կրթական ծրագրում առաջացած խնդիրները առկա ուսումնական ծրագրի պայմաններում, ընկերակցությունը կարող է առաջարկել մշակել նոր մասնագիտության կրթական ծրագիր, որը

կբավարարի աշխատաշուկայի պահանջները: ՄԿԾ-ի ակնկալվող ուսումնառության արդյունքները սահմանվում են ընկերակցության կողմից:

3. **Սահմանել, ընտրել և վերլուծել ուսանողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ տվյալները**: Այս քայլը ներառում է տվյալների հավաքագրում՝ որոշելու, թե ինչպիսի առաջադիմություն/վարքագիծ են ցուցաբերում ուսանողները տվյալ ՄԿԾ-ի շրջանակներում, ինչպես նաև՝ թե ինչպես են ծրագրի շրջանավարտները գործում աշխատաշուկայում: Այս գործընթացով վերհանվում են բացթողումները/թերացումները ուսանողների առաջադիմության և կատարողականի մեջ: Աշխատանքային խումբը ապա վերլուծում և մեկնաբանում է ուսանողների ունեցած արդյունքները՝ ուշադրությունը հրավիրելով այն խնդրի(-ների) վրա, որոնք վերհանվել էին բարելավմանն ուղղված ջանքերի/քայլերի սկզբնական փուլում:

**4. Կատարել ազգային և միջազգային փորձի բենչմարքինգ տվյալ որակավորման/ՄԿԾ-ի շրջանակում (ինչպես պլանավորման, այնպես էլ վերանայման փուլում գտնվող):** ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների մշակման/վերանայման գործընթացում առաջնային է լավագույն փորձի ուսումնասիրությունն ու վերլուծությունը: Այս փուլում իրականացվում է բենչմարքինգ՝ համակարգված գործընթաց, որը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել տարբեր հաստատություններում առկա լավագույն փորձը և վերցնել/յուրացնել որոշ ընթացակարգեր և մոտեցումներ՝ հաստատության ուսումնական գործընթացները, իր առաքելությանը համահունչ, բարելավելու նպատակով: Բենչմարքինգի համապատասխան փուլերն ու ձևաչափը ներկայացված են համապատասխան Հավելվածում:

**5. Մշակել/վերանայել ՄԿԾ-ի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները:** ՄԿԾ-ի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ուսումնառության արդյունքները պետք է ծառայեն որպես հիմք շահառուների համար և հնարավորություն ընձեռեն՝ ապահովելու համապատասխանություն մատուցվող դասընթացների և ՈԱՇ-ի միջև:

6. **Մշակել/վերանայել ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները**: ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները սկսվում են հետևյալ հստակ ձևակերպմամբ, «Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո ուսանողը պետք է…», ինչին հաջորդում են այն ակտիվ բայերը, որոնցով դուք արտահայտում եք համապատասխան գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: Համապատասխան ձևաչափերն ու աղյուսակները, որոնք բայերը դասակարգում են ըստ շնորհվող որակավորման մակարդակի, ինչպես նաև խմբերի և ենթախմբերի, կարող է օգտակար լինել ուսումնառության

արդյունքների մշակման/վերանայման գործընթացում: Յուրաքանչյուր խմբում նախատեսելով առնվազն երկու ուսումնառության արդյունք՝ երաշխավորվում է մակարդակի սպեկտրի համեմատաբար ամբողջական ծածկումը: Հաճախ կարող է պահանջվել ավելի քան մեկ նախադասություն ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքն արտահայտելու համար, քանի որ նրանք ունեն բավականին լայն շրջանակ:[5]

**Գործողություններ՝ ուղղված համապատասխանության ապահովմանը**

ՄԿԾ-երի համապատասխանության ապահովման իրական գործողությունները պետք է ուղղորդվեն և կառուցվեն վերոնշյալ հղման կետերի համաձայն: Մասնավորապես, գործնական որոշում կլիներ սկսել ՈԱՇ-ի բնութագրիչների և ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների միջև համապատասխանության ապահովումը՝ երաշխավորելու, որ ուսումնառության արդյունքները ներառում են այնպիսի գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, որոնք սահմանված են ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի բնութագրիչներով: Սա հնարավոր է իրագործել միայն մանրակրկիտ ուսումնասիրություն և վերլուծություն կատարելուց հետո (ինչպես նկարագրված է համապատասխանեցմանը նախորդող քայլերում), ինչպես նաև իրականացնելով ՄԿԾ-ի ինքնավերլուծություն՝ հիմված հստակ մշակված չափանիշների վրա, անհրաժեշտ է նաև հետևել շահակիցների խորհրդատվություններին, իրականացնել տվյալների համալրում, ազգային և միջազգային բենչմարքինգ, ինչպես նաև առկա իրավիճակի վերլուծություն:

Բոլոնիայի հռչակագիրը, Որակավորումների Եվրոպական շրջանակը, ինչպես նաև հայաստանյան օրենսդրությունն ու ՈԱՇ-ը, բոլոր շահառուների՝ ներառյալ աշխատաշուկայի ներկայացուցիչների սպասումները, հիմնավորում և պայմանավորում են ուսումնական ծրագրի (որն, իր հերթին, պետք է անցնի խորքային բենչմարքինգ այլ, նախընտրելի է, միջազգային նմանատիպ ծրագրերի հետ) մշակման ընթացքում ընդունվող որոշումները: Վերոնշյալ բոլոր դրույթների և պարամետրերի համադրումը երաշխավորում է հստակ պատկերացում այն

---

[5] Ուսումնառության արդյունքների հստակ ձևակերպման և ուսանողներին արդյունավետ հաղորդման համար խորհուրդ է տրվում մշակել և տարածել ծրագրի ձեռնարկ, որը կարող է ներառել ծրագրի առանձնահատկությունների կաղապարը և ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների նկարագիրը, ինչպես նաև՝ ՄԿԾ-ի միավորի ուսումնառության արդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությունը, ինչը արտացոլում է ՄԿԾ-ի և ՄԿԾ-ի միավորի ուսումնառության արդյունքները, յուրաքանչյուր ծրագրի շրջանակում շնորհվող կրեդիտները՝ համապատասխան ընդունված կրեդիտների սանդղակի, որը ներառում է որակավորման տեսակը, անվանումը, կրեդիտի հասանելիությունը, փոխանցման ու բարեկավման գործընթացները: Եվ այս ամենը հստակ նկարագրված ՄԿԾ-ում կամ այլ առընթեր փաստաթղթերում:

պահանջների վերաբերյալ, որոնց բավարարումը կհեշտացնի և կխթանի ակադեմիական շարժունության ապահովումը՝ առաջնորդվելով կրթության բարձր որակի և համապատասխանեցված սկզբունքներով: ՄԿԾ-ի՝ կարողությունների վրա հիմված նախանշված ուսումնառության արդյունքները պետք է ներառեն ՈԱՇ-ի նկարագրիչներում արտացոլված կարողությունները, մասնագիտական գործունեություն ծավալելու համար պահանջվող կարողությունները (այն է՝ գործատուների միության պահանջներն ու ակնկալիքները), ինչպես նաև այն գիտելիքները, որոնք վերհանվել են ուսանողների կողմից՝ այլ համանման միջազգային ծրագրերի հետ իրականացված խորքային բենչմարքինգի արդյունքում:

- ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները համապատասխանում են ՈԱՇ-ի որակավորման տվյալ տեսակ/մակարդակի նկարագրիչներին,
- ՄԿԾ-ի միավորի ուսումնառության արդյունքները ապահովում են ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների ձեռքբերումը,
- Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները արտացոլում են ՄԿԾ-ի և ՄԿԾ-ի միավորի ուսումնառության արդյունքները,
- Յուրաքանչյուր ծրագրին հատկացված կրեդիտները համապատասխանում են տվյալ որակավորման համար սահմանված կրեդիտների բաշխմանը:

Ստորև ներկայացված են այն քայլերը, որոնք անհրաժեշտ են ՄԿԾ-երի համապատասխանությունն ապահովելու համար.

1. **Որոշել, թե որքանով են ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները ծածկում ՈԱՇ-ի՝ այդ մակարդակի համար սահմանված նկարագրիչները,** մասնավորապես, «գիտելիք»-ի համար առանձնացված խմբերում և ենթախմբերում ներկայացվող մանրամասները: Այս վարժությունը նպաստում է վերհանելու բացը ՈԱՇ-ի՝ տվյալ մակարդակի համար սահմանված նկարագրիչների և իրականացվողՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքների միջև:

2. **Որոշել, թե ինչ մակարդակի կապ է առկա ՈԱՇ-ի ավելի բարձր մակարդակի նկարագրիչների և ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների միջև:** Սա հնարավոր է իրականացնել ՈԱՇ-ի նկարագրիչների հետևողական/խորքային վերլուծության միջոցով՝ վերհանելու այն հիմնական բառերը, որոնք նկարագրում են գիտելիքի, հմտության և կարողության տեսակը, խորությունը, բարդությունը, ընտրողականությունը, համատեքստը և այլ

առանձնահատկություններ: Քանի որ ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների համընդհանուր նկարագրերը արտացոլում են, թե շրջանավարտներն իրենց ուսումնառության արդյունքում ինչ պետք է կարողանան անել, դրանք չեն անդրադառնում գիտելիքի կոնկրետ բովանդակությանը (ներառյալ հմտություններն ու կարողությունները): Ահա թե ինչու է անհրաժեշտ մշակել այնպիսի մի մատրից, որը կվերհանի ՈԱՇ-ի նկարագրիչների, ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների և գիտելիքի բովանդակության (ՄԿԾ-ի բովանդակության) միջև առկա կապը՝ համապատասխանությունը փաստելու կամ երաշխավորելու նպատակով:

3. **Փոխկապակցել ՄԿԾ-ի միավորի ուսումնառության արդյունքները ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների հետ:** Սա արտացոլում է ուսումնառության արդյունքների միջև կապը երկու տարբեր մակարդակներում: Ինչպես նկարագրիչների և ուսումնառության արդյունքների իմաստաբանական վերլուծության դեպքում, գիտելիքներն ու կարողություններն արտացոլող բայերը թույլ են տալիս վերհանել և ուսումնասիրել կապը և ներազդումը վերից վար հաջորդականությամբ, ինչը, հակառակ հերթականությամբ իրականացնելիս, նպաստում է ՄԿԾ-ի մակարդակում ընդհանրական ուսումնառության արդյունքների ձևավորմանը այն միավորների ամբողջությունից, որոնք միտված են սահմանված գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը: ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների և ՈԱՇ-ի նկարագրիչների, հիմնարար ծրագրի բովանդակության և ՄԿԾ-ի միավորի ուսումնառության արդյունքների փոխկապակցումը/քարտեզագրումը հանգեցնում է հաջորդ տրամաբանական քայլին՝ համապատասխանության ապահովման գործընթացի գնահատմանը:

4. **Գնահատել համապատասխանության ապահովման գործընթացը՝ թերացումները/բացթողումները և ավելորդ կրկնությունները վերհանելու նպատակով:** Որակավորումների և վարքագծային/ուսումնական նպատակների վերանայումը (այսինքն՝ հստակեցնել, թե այդ նպատակներն ինչպես են բավարարվում, վերհանել թերացումներն ու հստակեցնել դրանց վերացման մարտավարությունը) իրականացվում է հետևյալ կերպ: Այս գործընթացը երաշխավորում է բովանդակության թարմությունը, իրականացվում է ուսումնառողների համար խելամիտ տարբերակով և հնարավորություն ընձեռում ձեռք բերելու նախանշված ուսումնառության արդյունքները: Բացթողումներ գնտելու դեպքում համապատասխանության ապահովման աշխատանքային խումբը պետք է նախաձեռնի նոր

կրթական միավորների ներդրման կամ առկա միավորների և դրանց բովանդակության վերանայման գործընթաց՝ իրականացնելով կրեդիտների վերահաշվարկ կամ վերաբաշխում:

5. **Վերանայել ուսումնական ծրագիրը՝** արտացոլելու դասընթացների ցանկալի հաջորդականությունը, կրեդիտները և ուսանողների ուսումնական փորձառությունը, ինչը պետք է հասանելի լինի/ներկայացվի ՄԿԾ-ի յուրաքանչյուր մակարդակում: Նոր ուսումնական ծրագրում բաշխվում են այն վարքագծային/ուսումնական նպատակները, որոնք վերհանվել էին՝ ՄԿԾ-ում ներգրավվելու համար, սակայն դեռևս չեն իրականացվում ՄԿԾ-ի բաղկացուցիչ միավորների կողմից: Այս դեպքում հստակեցվում է՝ արդյոք ծրագրում անհրաժեշտ է ավելացնել նոր միավորներ, թե կարելի է վերափոխել առկա միավորները՝ նոր գիտելիքները, հմտություններն ու կարողությունները ապահովելու համար: Ամբողջովին նոր ծրագրի դեպքում որակավորումներն ու վարքագծային/ուսումնական նպատակները համապատասխանեցվում են բոլոր միավորների հետ, ինչպես նաև ուսանողների ուսումնական փորձառությունը ընդգրկվում է որպես դասընթացի իրականացման մաս:

6. **Մկսել ուսումնական ծրագրի քարտեզագրում:** Ուսումնական ծրագրի քարտեզագրման միջոցով յուրաքանչյուր դասավանդող մշակում է սահմանված չափորոշիչներին և նպատակներին համապատասխանող դասավանդման միավորների շրջանակ՝ ձևավորելով տեսլական, որը կարելի է զարգացնել և քննարկել միևնույն ոլորտի, ինչպես նաև այլ բնագավառներում դասավանդողների հետ՝ նպաստելով միջառարկայական կապերի հաստատմանը:[6]

7. **Համապատասխանեցնել բազային գիտելիքներն ու կարողությունները** (ՄԿԾ-ի միավորի պահանջներին, գնահատման, որակավորման շնորհման գործընթացներին, ինչպես նաև յուրաքանչյուր դասընթացի ավարտին ստացվող հավաստագրերին) և սահմանել, մշակել կամ ադապտացնել գնահատման այնպիսի գործընթաց, որն ապահովում է վավեր և հուսալի արդյունքներ բոլոր ուսանողների համար: Այս քայլը ենթադրում է կրթական ծրագրի դիտարկում՝ ամենաարդիական դասընթացների և ՄԿԾ-ի ավարտին ձեռքբերվող որակավորումների /հավաստագրերի համեմատ. այս գործընթացը կոչվում է «արդյունքների վրա հիմնված քարտեզագրում/ back-mapping»: Այս մոտեցումը պատկերացում է ձևավորում ՄԿԾ-ի

---

[6] Այլ առավելություններին զուգահեռ, ուսումնական ծրագրի քարտեզագրումը կարող է աջակցել ա) դասավանդման յուրաքանչյուր միավորին ժամանակի հատկացնելու գործընթացում, բ)սահմանելու, թե երբ է պետք կիրառել դասախոսակենտրոն և երբ՝ ուսանողակենտրոն ուսուցում, գ) ընտրելու գնահատման այն տեսակները, որոնք կարող են օգտակար լինել, և դ) ռեսուրսների բաշխման գործընթացում:

յուրաքանչյուր միավորում բազային գիտելիքների և հմտությունների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնում է դասավանդման այն մակարդակը, որն անհրաժեշտ է դրանց յուրացման/ձեռքբերման համար: Բացի այդ, այս ուսումնասիրությունն արտացոլում է այն առանցքային հասկացություններն ու հիմնարար թեմաները, որոնք ամբողջացնում են մասնագիտության կրթական ծրագիրը, ինչն անհրաժեշտ է՝ կարիերիայի վրա հիմնված կողմնորոշիչ դասընթաց ձևավորելու կամ բարելավելու համար:

8. **Մշակել ՄԿԾ-ի միավորի նկարագիրը և սահմանել դասավանդման ռազմավարությունը՝** շեշտադրելով հստակ/կոնկրետ համատեքստում, աշխատանքի[7] և խնդրի վրա հիմնված ուսուցման հնարավորությունները, երբ բոլոր բացթողումները/թերացումները վերհանվել և շտկվել են մեղմացնող որոշումների կայացման փուլում: Ահա թե որտեղ է սկսվում հորիզոնական համապատասխանեցումը: Այս քայլի ընթացքում սահմանվում է, թե ինչպես պետք է դասավանդվեն գիտելիքները, հմտությունները և վարքագծային/ուսումնական խնդիրները: Ուշադրություն է դարձվում, թե բովանդակության յուրացման ինչ մակարդակ է անհրաժեշտ ապահովել, ինչպես նաև ուսանողների ուսումնառության ոճերի զանազանությանը: Շատ կարևոր է երաշխավորել, որ առկա են միևնույն բովանդակությունը ծածկող բազմաթիվ մոտեցումներ, հատկապես, երբ առնչվում ենք մի մակարդակի/միավորի հետ, որով պետք է յուրացվի հստակ/կոնկրետ թեմա/բովանդակություն:

9. **Կոնստրուկտիվ կերպով համապատասխանեցնել ուսումնառության արդյունքները մանկավարժական մեթոդաբանության և գնահատման մեթոդները** (Բիգս և Թենգ, 2007): Ուսումնառության արդյունքների համապատասխանեցման ջանքեր գործադրելիս հետևյալ մոտեցումը կարող է օգտակար լինել.

- սահմանել նախանշված ուսումնառության արդյունքները
- ընտրել այնպիսի ուսումնառության գործընթացներ, որոնք կհեշտացնեն ուսումնառության արդյունքների ձեռքբերումը,

[7] Աշխատանքի վրա հիմնված ուսուցումը ծրագրերի կարևոր բաղադրիչ է: Դասավանդման ռազմավարությունը այն բանալին է, որը միտված է նախապատրաստելու ուսանողներին՝ հասնելու հաջողության: Աշխատանքի վրա հիմնված ուսուցման բոլոր ձևերը ներառում են արդյունաբերության կամ համայնքի համապատասխան մասնագետների հետ համագործակցություն և կապված են ուսանողների ունեցած արդյունքների հետ: Ռեսուցման այս տեսակի շրջանակներում կազմակերպվում են համապատասխան հրավիրված մասնագետների դասախոսություններ լսարանում, ոլորտի շրջանակում գործուղումներ, խտացված պրակտիկաներ համապատասխան աշխատավայրերում՝ որպես ավարտական աշխատանքի իրականացման կրթական փորձառություն:

- սահմանել համապատասխան գնահատման գործընթացներ, որոնց միջոցով ուսանողները կկարողանան ցուցադրել իրենց կողմից ուսումնառության արդյունքների ձեռքբերումը,
- դիտարկել, թե որքանով են կապված ՄԿԾ-ի միավորի ուսումնառության արդյունքները ամբողջական ՄԿԾ-ի և այլ միավորների ուսումնառության արդյունքների հետ՝ խորհրդակցելով ծրագրի իրականացման խմբի հետ, և
- վերանայել և թարմացնել ուսումնառության արդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:

10. **Որոշել գնահատման ձևերը,** որոնք անհրաժեշտ են՝ չափելու ուսանողի առաջադիմությունը/կատարողականը, ինչպես նաև ՄԿԾ-ի անհրաժեշտ բարեփոխումները, որոնք ի հայտ են եկել համապատասխանեցման գործողությունների հետևանքով: Սա է ՄԿԾ-ի շարունակական բարելավման բանալին: Քայլերի հետևյալ հաջորդականությունը կարող է օգտակար լինել.

- Կատարել ուսանողների գնահատականների ինվենտարիզացիա ողջ հաստատության մակարդակով (բենչմարք և ամփոփիչ գնահատում)՝ սահմանելով, թե երբ են դրվում այդ գնահատականները: Այս ինվենտարիզացիայի միջոցով սահմանվում է, թե որ գիտելիքները, հմտությունները, կարողությունները և չափորոշիչներն են ենթակա չափման/գնահատման, ինչպես նաև ներկայացվում է, թե ինչպես կարելի է ապահովել ՄԿԾ-ի հաջող իրականացումը;
- Վերանայել առկա գնահատման գործընթացները՝ ապահովելու քննական գործընթացի և ծրագրի բովանդակության և ՄԿԾ-ի հետ առնչվող մասնագիտական չափորոշիչների միջև համահունչություն; և
- Սահմանել և թարմանցնել գնահատման գործընթացները՝ ուսումնական ծրագրի և գնահատման գործիքների միջև առկա բացերը/թերացումները վերացնելու նպատակով:

11. Սահմանել, թե ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ առկա ուսումնական ծրագրերի վերանայման և նոր ծրագրերի մշակման, ինչպես նաև դասավանդման ռեսուրսների հասանելիության ապահովման համար, և, անհրաժեշտության դեպքում, մշակել շրջանառության գրավոր համաձայնագրեր: Բովանդակության մեջ առկա բացթողումներն ու թերացումները ծրագրի մակարդակում վերհանելուց, ինչպես նաև ուսումնական ծրագրի և դասավանդման ռազմավարության մեջ վերացնելուց հետո կարելի է քննարկել կրեդիտի շնորհման

այլընտրանքային տարբերակները (կրկնակի կրեդիտ, հստակ սահմանված կրեդիտ, կրեդիտ քննության արդյունքում) և մշակել համագործակցության համաձայնագրեր: Կրեդիտների շնորհման այլընտրանքային տարբերակների ներդրմանը զուգահեռ՝ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակում հնարավոր են քննարկումներ և դատողություններ հետևյալ հարցերի շուրջ. նյութատեխնիկական բազայի համատեղ օգտագործում/կիսում, դասավանդողների համատեղությամբ աշխատանք, աշխատանքի վրա հիմնված ուսումնառության գործընթացի կազմակերպում, մասնագիտական զարգացման ապահովում, աշխատաշուկայի կողմից խորհրդատվության ապահովում, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսավորման և այլ ռեսուրսների հայցում, որոնք անհրաժեշտ են նոր ՄԿԾ-երի իրականացման համար: Այս փուլում համագործակցությունն իրականացվում է՝ սահմանելով, թե կոնկրետ որ ֆակուլտետը, հաստատությունը կամ գործարար անդամն է պատասխանատու համաձայնեցված դասընթացների իրականացման համար:

12. **Սահմանել և մշակել ուսանողների աջակցման ծառայություններ և առաջարկել անհատականացված ռազմավարություն**՝ օժանդակելու ավելի շատ աջակցության և ուղղորդման կարիք ունեցող ուսանողներին: Մշակել այնպիսի ռազմավարություն, որը կաջակցի տարբեր, և հնարավոր է, բոլոր ոլորտներում աջակցության կարիք ունեցող ուսանողներին: Այս փուլում պետք է սահմանել աջակցման ռազմավարություն հաստատության ողջ ծավալով, ինչպես նաև ՄԿԾ-երի վրա հիմնված ռազմավարություն՝ բարելավելու բոլոր ուսանողների՝ անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման պոտենցիալը: Կրկին, այս համատեքստում շատ կարևոր է շեշտադրել/ուշադրությունը կենտրոնացնել ուսումնառության անհատական ձևերի և ուսանողների կարիքների վրա:

**Համապատասխանեցմանը հաջորդող գործողություններ**

Համապատասխանության ապահովման գործընթացը պետք է գնահատել որպես շարունակական բարելավման մաս: Այս փուլում սահմանվում են գնահատման մոտեցումները՝ բարելավման ռազմավարության արդյունավետությունը որոշելու նպատակով, տվյալ դեպքում՝ նոր և բարելավված համապատասխանեցման գործընթաց: Ուսանողների առաջադիմության մասին տվյալները, որոնք ստացվում են ամփոփիչ գնահատման արդյունքում, հավաքագրվում և վերլուծվում են համապատասխանության ապահովման աշխատանքային խմբի կողմից և

ներկայացվում տեղական/ներքին ընկերակցության անդամներին՝ ՄԿԾ-ի առջև դնելով նոր մարտահրավերներ և վերհանելով առկա հնարավորությունները:

## ԳԼՈՒԽ 3: ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Հաշվի առնելով, որ համապատասխանեցման նպատակը հաստատության որակի ապահովումն է, ակնհայտ է, որ այն պետք է ստուգել՝ որպես որակի ապահովման գործընթացի մաս: Այս առումով, ինքնագնահատումը այն գործընթացն է, որի նպատակն է իրականացնել համակարգված և քննադատական ինքնավերլուծություն՝ դուրս բերելով համապատասխան դատողություններ և/կամ խորհրդատվություններ ՄԿԾ-ի որակի վերաբերյալ:

Այս գլուխը վերաբերում է ՄԿԾ-ի գնահատմանը: Որպես որակի բարելավմանը միտված հավաքական գործիք՝ այս գործընթացը կավարտենք զեկույցով, որը նույնպես տեղեկատվություն կապահովի արտաքին փորձագիտական խմբի համար՝ հնարավորություն ընձեռելով կատարել անկախ արտաքին գնահատում (արտաքին փորձատետների վերապատրաստման նյութը կցված է Հավելվածներում): ՄԿԾ-ի ինքնագնահատումը, որպես կանոն, իրականացնում է ծրագիրը ապահովող աշխատակիցների կողմից և որակի կառավարման աշխատակիցների աջակցությամբ, և դրա հիմնական և առաջնային գործառույթը որակի ներքին ապահովման գործիք լինելն է:

Որպես փաստերի վրա հիմնված գործընթաց՝ ինքնագնահատումը ենթադրում է ՄԿԾ-ի արդյունավետության արտացոլում՝ ներառելով պարբերական կերպով հավաքագրվող վարչական տվյալների, ուսանողների և շրջանավարտների կողմից ՄԿԾ-ի գնահատման արդյունքների և ծրագրի վերլուծություն՝ ձևաչափային հետազոտությունների կամ ֆոկուս-խմբային քննարկումների, դասախոսների և ուսանողների հետ թիրախային հարցազրույցների միջոցով: **Սա հավաքագրված տեղեկատվության կառուցողական վերլուծություն է (ոչ նկարագրություն կամ վերաձևակերպում)՝ հիմնված ՄԿԾ-ի հաստատման (ուսումնառության արդյունքների համապատասխանեցման) համար անհրաժեշտ հստակ չափանիշների վրա**: Այս գործընացը կարող է ապահովել 2 արդյունք՝

- Գրավոր զեկույց՝ համապատասխան փաստերով և բարելավման խորհրդատվություններով, որի հիման վրա կատարվում է դատողություն ՄԿԾ-ի առկա վիճակի և համապատասխանության ապահովման աստիճանի մասին,

- ՄԿԾ-ի Ձեռնարկ/ ՄԿԾ-ի փաստաթուղթ, ինչը ապահովում է փաստեր համապատասխանեցման վերաբերյալ:

**Համապատասխանության ապահովման գործընթացի ստուգման քայլեր**

ՄԿԾ-ի համապատասխանության ապահովման գործընթացի ստուգման չափորոշիչները հիմնականում դասվում են բուհի ներքին բարելավման, հատկապես, ՄԿԾ-ի մշակման և ինքնավերլուծության միջոցով ներքին գնահատման գործընթացներին: Այս առումով համապատասխանության ապահովումը կարելի է ստուգել՝ ի դեմս երկու հիմնական գերակշռող չափանիշների.

1. Համահունչության ապահովում ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների և ստորև նշված կետերի միջև.
    - Համապատասխան առարկայի/ մասնագիտական ոլորտի չափորոշիչներ, և
    - Որակավորումների ազգային շրջանակ,
    - ընդունելության հստակ սահմանված նախապայմաններ:
2. Դասավանդում, ուսումնառություն և գնահատում
    - պատշաճ ակադեմիական միջավայրում,
    - դասավանդման և ուսումնառության համապատասխան ձևերով,
    - համապատասխան գնահատման քաղաքականությամբ և գործընթացներով,
    - պատշաճ ծանրաբեռնվածությամբ,
    - աշխատակիցների աջակցությամբ, և
    - ռեսուրսներով:

ՄԿԾ-ի ինքնագնահատման չափանիշները բավարարելու համար կարևոր է հաշվի առնել չափանիշների սահմանման հիմքում ընկած բազմաթիվ հասկացություններ և մանրամասներ: Հնարավոր հարցերի ցանկը (նաև այն հարցերը, որոնք կարող է տալ արտաքին փորձագիտական խումբը), որն ուղղված է համապատասխանության ապահովման գնահատմանը որակի ներքին ապահովման շրջանակում, ներկայացված է ստորև: Ինքնագնահատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել տրված հարցերի պատասխանները:

Պատասխանեք հարցերին և տրամադրեք ստորև բերված չափանիշներին համապատասխանության փաստեր՝ ինչպես նկարագրված է «Ինքնավերլուծության հարցեր» բաժնում.

1.1 Արդյո՞ք առկա է համահունչություն ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքների և ցանկացած կիրառելի ազգային/միջազգային առարկայական/մասնագիտական ոլորտի չափորոշիչների և ՈԱՇ-ի միջև:

1.2 Արդյո՞ք ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքները բավարարում են ցանկացած կիրառելի ազգային/միջազգային առարկայական/մասնագիտական ոլորտի պահանջները:

1.3 Արդյո՞ք ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքները համապատասխանում են ՈԱՇ-ի Բակալավրի/ Մագիստրոսի աստիճանների նկարագրերին:

1.4 Արդյո՞ք ՄԿԾ-ի ընդունելության պահանջները հստակ են և համապատասխանում են ազգային նորմերին:

1.5 Արդյո՞ք հնարավոր է հստակ ցուցադրել, որ ՄԿԾ-ի համար նախապայման հանդիսացող բազային կրթության սահմանումը ներառում է այն գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, որոնք սահմանված են առավել ստորին Շրջանակի մակարդակներում:

1.6 Արդյո՞ք նախանշված ուսումնառության արդյունքները համահունչ են ազգային օրենսդրությանն ու միջազգային խորհրդատվություններին:

1.7 Արդյո՞ք ՄԿԾ-ի և ՄԿԾ-ի առանձին միավորի ուսումնառության արդյունքները ձևակերպված են այնպես, որ արտացոլեն, թե ուսանողը ինչ պետք է իմանա և կարողանա անել ՄԿԾ-ի/ կամ դրա միավորի ավարտին:

1.8 Արդյո՞ք նախանշված ուսումնառության արդյունքները համապատասխանում են տվյալ մասնագիտական ոլորտում (աշխատաշուկայում) ՄԿԾ-ի շրջանավարտին առաջադրվող պահանջներին:

1.9 Արդյո՞ք ուսումնառության արդյունքները բավարարում են կոնկրետ ոլորտի սկսնակ մասնագետի կարիքները:

2.1 Արդյո՞ք պատշաճ ուշադրություն է դարձվել ուսումնական ծրագրի և ՄԿԾ-ի մշակման գործընթացին և բովանդակությանը:

2.2 Արդյո՞ք ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները հիմնված են ՄԿԾ-ի միավորի ուսումանռության արդյունքների վրա:

2.3 Արդյո՞ք ՄԿԾ-ը այնպես է մշակված, որ վերջինի ուսումնառության արդյունքները հստակ արտացոլվեն կոնկրետ մոդուլներում կամ ՄԿԾ-ի համապատասխան միավորներում:

2.4 Արդյո՞ք ՄԿԾ-ի բովանդակությունը և ուսումնական միջավայրը բավարար են ծրագրով նախանշված ուսումնառության արդյունքների ձեռքբերման համար: Մասնավորապես՝

(ա) Արդյո՞ք ՄԿԾ-ն իրականացնում են կոմպետենտ և իրենց առարկայական ոլորտում հարուստ փորձառությամբ աշխատակիցներ (գնահատման մասնագետներ, դասախոսներ և այլն)՝ ուսանողներին հնարավորություն ընձեռելով ձեռք բերելու ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքները և գնահատելով վերջիններիս կրթական նվաճումները:

(բ) Արդյո՞ք այն աշխատակիցները, որոնք ՄԿԾ-ի իրականացման գործընթացում ապահովում են ակադեմիական և վարչական աջակցություն, ծանոթ են որևէ ազգային չափորոշիչների:

(գ) Ինչպիսի՞ վերապատրաստումներ են իրականացվել նշված աշխատակիցների համար:

(դ) Ո՞րոնք են նրանց հստակ դերն ու պարտականությունները:

(ե) Արդյո՞ք նշանակված են կոմպետենտ մասնագետներ՝ իրենց դերն իրականացնելու համար:

(զ) Արդյո՞ք ՄԿԾ-ի և բաղադրիչ միավորների իրականացման համար ապահովված է համապատասխան կրթական միջավայր (ֆիզիկական, սոցիալական, մտավոր, և արդյո՞ք բուհում ընդունում են, որ միջավայրը կարող է լինել վիրտուալ);

- և ռեսուրսներ, ինչպես օրինակ գրադարաններ և առցանց տվյալների բազաներ, լաբորատորիաներ, սարքավորումներ, լսարաններ և արհեստանոցներ,
- և մարդկային ռեսուրսներ՝ դասախոսներ, խորհրդականներ/աջակից աշխատակիցներ, խորհրդատուներ և արտաքին գործընկերներ, կիրառելի դեպքերում,
- և այլ աջակցություն՝ միտված բավարարելու ՄԿԾ-ի և ՄԿԾ-ի միավորի նախանշված ուսումնառության արդյունքները:

(է) Ինչպե՞ս են ուսանողները ներկայացված/ ո՞րն է ուսանողների դերը/, և ինչպե՞ս է ապահովվում հետադարձ կապը:

(ը) Արդյո՞ք ՄԿԾ-ի/միավորի բովանդակությունը ներառում է գրականության ցանկ, դասախոսության կոնսպեկտներ կամ համապատասխան ՄԿԾ-ի/միավորի կողմից օգտագործվող ցանկացած այլ նյութեր:

(թ) Արդյո՞ք ՄԿԾ-ի/միավորի շրջանակում ստեղծված են անհրաժեշտ հարմարություններ հատուկ կարիքներ/հաշմանդամություն ունեցող անձանց համար:

2.7 Արդյո՞ք ՄԿԾ-ի/միավորի կողմից ստեղծված են արժանահավատ ուսուցման հնարավորություններ՝ երաշխավորելով ուսումնական ծրագրով նախանշված ուսումնառության արդյունքների ձեռքբերումը:

2.8 Արդյո՞ք ՄԿԾ-ի/միավորի կողմից Կրեդիտների կուտակման և փոխանցման Եվրոպական համակարգի կամ այլ Կրեդիտային համակարգի և դրույթների օգտագործումը՝ միտված նախնական ուսուցման ճանաչմանը, համապատասխանում է այս ոլորտը կարգավորող որևէ ազգային քաղաքականության:

2.9 Արդյո՞ք ՄԿԾ-ը/միավորը բավարարում են ժամանակակից կրությանը և վերապատրաստմանը առաջադրվող պահանջները:

(ա) Արդյո՞ք բուհն ապահովում է փաստեր, որ տվյալ ՄԿԾ-ը/միավորը բավարարում է թիրախային ուսանողի կրթական և վերապատրաստման կարիքները:

(բ) Արդյո՞ք ՄԿԾ-ը՝ որպես գործընթաց, և ծրագրի նախանշված ուսումնառության արդյունքները արտացոլում են համապատասխան շահակիցների, ինչպես օրինակ ՝ուսանողներ, շրջանավարտներ, դասախոսներ, գործատուներ, համապատասխան խորհրդատու մարմիններ, հասարակության և համայնքի ներկայացուցիչներ, տեսակետները:

2.10 Արդյո՞ք ուսուցման ձևը՝ հեռակա, էլեկտրոնային, ամբողջօրյա, կեսօրյա, խառը և այլն, հստակ ձևակերպված է, համապատասխանում է կանխորոշված մասնակիցների պահանջներին և ապահովում նախանշված ուսումնառության արդյունքների ձեռքբերումը:

2.11 Արդյո՞ք մշակվել է գնահատման ռազմավարություն ինչպես ընդհանուր ՄԿԾ-ի, այնպես էլ յուրաքանչյուր առանձին միավորի համար:

2.12 Արդյո՞ք ընդհանուր ՄԿԾ-ի և ՄԿԾ-ի յուրաքանչյուր առանձին միավորի գնահատման ռազմավարությունը (և՛ ձևավորող, և՛ ամփոփիչ գնահատման համար) հստակ և համապատասխան է: Արդյո՞ք այն տրամադրում է նախանշված ուսումնառության արդյունքների ձեռքբերման վերաբերյալ փաստեր:

2.13 Արդյո՞ք բոլոր ՄԿԾ ի/միավորի ուսումնառության արդյունքները գնահատելի են:

2.14 Արդյո՞ք գնահատման բոլոր գործընթացները ազնիվ, վավեր, վստահելի և թափանցիկ են: Արդյո՞ք գնահատման գործընթացը երաշխավորում է նախանշված ուսումնառության արդյունքների գնահատումը:

2.15 Արդյո՞ք գնահատման մեթոդաբանության մշակմանը, բարելավմանն ու զանազանության ապահովմանը վերաբերող որոշումներն ընդունվում են՝ համապատասխան ՄԿԾ-ի համատեքստին և շեշտադրում են ուսումնառության արդյունքները:

2.16 Մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակում, արդյո՞ք առկա է թեզ, որով ուսանողը ցուցադրում է իր վերլուծական կարողությունը կամ առանձին խնդիրների լուծման կարողությունը՝ ինչպես սահմանված է ՈԱՇ-ի համապատասխան նկարագրիչներում:

2.17 Արդյո՞ք ՄԿԾ-ի՝ ուսանողների գնահատման ընթացակարգերը համապատասխանում են հաստատության կամ ազգային որևէ գնահատման կանոնակարգի՝ լիարժեք/ամբողջական համաատասխանություն ապահովելու նպատակով:

2.18 Արդյո՞ք մոդուլի/միավորի նպատակներն ու խնդիրները համահունչ են ՄԿԾ-ի նպատակներին և խնդիրներին:

2.19 Ինչպե՞ս է հիմնավորվում միավորի ներդրումը ՄԿԾ-ի մեջ/ ինչպե՞ս է միավորը ձուլվում ՄԿԾ-ի հետ:

2.20 Արդյո՞ք բուհը կարող է ցուցադրել, որ իր կողմից իրականացվող կրթական միավորը մրցունակ է այլ բուհերի համապատասխան միավորների հետ (արտաքին բենչմարքինգ):

2.21.1 Արդյո՞ք ՄԿԾ-ի ուսումնական միավորը իրագործելի է:

2.22 Արդյո՞ք ուսումնական միավորի դասախոսական կազմը ծանոթ է ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներին:

2.23 Արդյո՞ք սահմանված են ավարտական/ելքային ուսումնառության արդյունքներ:

2.24 Արդյո՞ք միավորի նախանշված ուսումնառության արդյունքները համահունչ են ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքներին:

2.25 Արդյո՞ք սահմանված է ընդունելության շեմ/չափորոշիչ: Արդյո՞ք սահմանվում է բազային կրթության պահանջ կրթական միավոր ընդունվելու համար, կամ արդյո՞ք առկա են հստակեցված պահանջներ՝ կապված ՄԿԾ-ի պոտենցիալ ուսանողների հետ:

2.26 Արդյո՞ք միավորի ուսումնառության արդյունքները սահմանվել են՝ նկարագրելով, թե ուսանողը ինչ պետք է իմանա և կարողանա անել միավորի ավարտին: Արդյո՞ք օգտագործված լեզուն և բայերը ճշգրիտ և հստակ են:

2.27 Արդյո՞ք ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները սահմանվել են՝ նկարագրելով, թե ուսանողը ինչ պետք է իմանա և կարողանա անել ծրագրի ավարտին: Արդյո՞ք օգտագործված լեզուն և բայերը ճշգրիտ և հստակ են:

2.28 Արդյո՞ք պատշաճ ուշադրություն է դարձվել մոդուլի բովանդակությանը:

2.29 Արդյո՞ք միավորի մակարդակում ուսումնառության արդյունքները նպաստում են ընդհանուր ծրագրի ուսումնառության արդյունքների ձեռքբերմանը:

2.30 Արդյո՞ք միավորն այնպես է մշակված, որ վերջինի ուսումնառության արդյունքները հստակորեն համահունչ են ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներին:

2.31 Ինչպիսի՞ փաստեր են առկա՝ վկայելու, որ թիրախային ուսանողները ունակ են ձեռք բերել միավորի նախանշված ուսումնառության արդյունքները:

2.32 Արդյո՞ք միավորն այնպես է իրականացվում, որ ապահովի ուսանողների կողմից ուսումնառության արդյունքների հուսալի եղանակով և արդյունավետ ձեռքբերումը:

2.33 Արդյո՞ք խելամիտ է ակնկալել, որ բոլոր սովորողները, որոնք հաղթահարել են տվյալ մոդուլի/միավորի ընդունելության շեմը, պետք է ի վիճակի լինեն ավարտելու այն՝ գործադրելով խելամիտ ջանքեր և բավարարելով մոդուլի/միավորի պայմանները:

2.34 Արդյո՞ք մոդուլը/միավորը մրցունակ է բենչմարքինգի շրջանակում (որտեղ հնարավոր է):

2.35 Արդյո՞ք ուսանողների համար մշակվել է հստակ տեղեկատվություն մոդուլի/միավորի նախանշված ուսումնառության արդյունքների, բովանդակության, դասավանդման և ուսումնառությանվ մեթոդաբանության, գնահատման, կրեդիտների և ուսումնական նյութերի վերաբերյալ՝ ներկայացվելով հստակ ուսուցման ծրագրի ձեռնարկում:

2.36 Արդյո՞ք ուսանողների ծանրաբեռնվածությունը կազմվել է մանրակրկտորեն, և սահմանվել են իրատեսական կրեդիտներ (օրինակ՝ օգտագործելով Գոնսալեսի և Վագենարի Թյունինգի փաստաթղթերը):

2.37 Արդյո՞ք հաստատվել է, որ չկան այնպիսի գնահատման գործընթացներ, որոնք չեն ծածկում որևէ ուսումնառության արդյունք:

2.38 Որտեղ հնարավոր է, արդյո՞ք որոշվել է, որ այն միավորների շրջանակում, որոնք չեն համապատասխանում ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներին, գնահատական չի տրվելու հաճախման կամ միավորն ավարտելու համար:

2.39 Արդյո՞ք հաստատվել է, որ մոդուլի/միավորի ուսումնառության արդյունքները հստակորեն/ուղղակիորեն համահունչ են ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներին:

2.40 Արդյո՞ք հաստատվել է, որ մոդուլի/միավորի բոլոր ուսումնառության արդյունքները գնահատվում են, և արդյո՞ք հստակեցվել է, թե ինչպես են գնահատվում:

2.41 Արդյո՞ք գնահատման մեթոդաբանության շրջանակը հասանելի է բոլորին, և արդյո՞ք այն համապատասխանում է տվյալ մոդուլին/միավորին:

2.42 Արդյո՞ք «գնահատում սովորելու համար» մոտեցումը շեշտադրվում է «ուսուցման գնահատում» մոտեցման համեմատ:

2.43 Արդյո՞ք գնահատման գործընթացը ուսանողներին հասանելի տարբերակով արտացոլում է, թե արդյոք վերջիններս ձեռք բերել են ուսումնական ծրագրով սահմանված ուսումնառության արդյունքները թե ոչ:

2.44 Արդյո՞ք տվյալ մոդուլի/միավորի շրջանակում կիրառվող ուսանողների գնահատման գործընթացը համապատասխանում է ՄԿԾ-ի և հաստատության՝ ուսանողի գնահատման կանոնակարգերին:

2.45 Արդյո՞ք կա վստահություն, որ գնահատման գործընթացները սահմանում են ուսումնառության բարձր շեմ:

2.46 Արդյո՞ք գնահատման և հետադարձ կապի ապահովման գործընթացները պլանավորվում են մոդուլի/միավորի մակարդակում՝ երաշխավորելու ուսանողների պատշաճ նախապատրաստում և փորձառություն՝ մինչ ամփոփիչ գնահատում իրականացնելը:

2.47 Արդյո՞ք շեշտադրումն արվում է «գնահատում սովորելու համար» մոտեցման վրա՝ «ուսուցման գնահատում» մոտեցման փոխարեն:

2.48 Արդյո՞ք ուսանողներին խրախուսում են՝ ներգրավվել ոլորտային՝ գործնական ընկերակցությունների:

2.49 Արդյո՞ք կարևորվում է ուսանողների՝ գնահատման գործընթացի իմացությունը՝ կազմակեպելով ուսուցման այնպիսի ընթացք, որում նրանք կարող են յուրացնել, կիրառել և արձագանքել գնահատման չափորոշիչներին:

2.50 Արդյո՞ք առկա են ուսանողների ներկայացուցչականությունն ու հետադարձ կապն ապահովող հնարավորություններ: Այն դեպքերում, երբ մոդուլը/միավորը դասավանդվում է մեկից ավելի վայրում, ներառյալ այլ իրավազորության շրջանակը, ինչպե՞ս է դա կառավարվում/իրականացվում:

2.51 Արդյո՞ք բավարարված են դասավանդման տարբեր եղանակների կոնկրետ պահանջները, օրինակ՝ հեռակա, կեսօրյա, առցանց ուսուցում:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համապատասխանեցումը կարևոր տեղ է զբաղեցնում ՄԿԾ-ի մշակման և բարելավման գործընթացում և «լայն իմաստով, կարող է սահմանվել որպես՝ աստիճան, թե որքանով են կրթական համակարգի բաղադրիչները, ինչպես օրինակ՝ չափորոշիչները, ուսումնական ծրագիրը, գնահատման մեթոդները և դասավանդումը, փոխկապակցված իրականացվում ցանկալի նպատակներին հասնելու համար» (Փիրսոնի գնահատման զեկույց, էջ 2): Համապատասխանության ապահովման գործընթացները բուհերին համագործակցության հնարավորություն են ընձեռում, որի շրջանակում սահմանվում է, թե երբ, որտեղ և որքանով է անհրաժեշտ անդրադառնալ այս կամ այն որակավորումներին, չափորոշիչներին և ՄԿԾ-ի բովանդակությանը: Համապատասխանության ապահովման փուլերը, ինչպես նշված է սույն ուղեցույցում, սովորաբար գծային են, բայց կարող են նաև դիտարկվել միաժամանակ:

Հետազոտողները նշում են, որ շատ կարևոր է փոխկապակցումը համապատասխանության ապահովման գործընթացի և ուսանողների առաջադիմության բարելավման միջև: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ դասավանդման և ուսումնառության գործընթացների հիմնական թիրախը անհատ ուսանողն ու իր կարիքներն են, և այս ամենը ամրապնդվում է բարեհաջող համապատասխանեցման գործընթացներով: Համագործակցային աշխատանքի միջոցով դասախոսները, որոնք ձգտում են ապահովել ՄԿԾ-ի համապատասխանեցումը, գտնում են տարբերակներ՝ բովանդակության մեջ որոշակի տրամաբանական հաջորդականություն մտցնելու և նպաստելու ուսանողների ձեռքբերումներին և առաջընթացին այնպես, որ բոլոր ուսանողներն ունենան հաջողության հասնելու հնարավորություն:

Այսպիսով, համապատասխանության ապահովման գործընթացը ուղղված է ՄԿԾ-ի հիմք հանդիսացող հիմնական կետերին ու բաղադրիչներին՝ շեշտադրելով ընդհանուր կրթական միջավայրը և միավորելով ազգային մակարդակում առկա կրթության պահանջները, ինչպես նաև մասնագիտական ոլորտի սպասումները, որը աշխատատատեղեր է ստեղծում ՄԿԾ-երի համապատասխան որակավորմամբ շրջանավարտների համար: ՄԿԾ-երի համապատասխանության ապահովումը, առաջին հերթին, դիտարկվում է որպես որակի ներքին և արտաքին ապահովման հիմնական գործընթաց, որը բարելավվում է տարբեր ներքին և արտաքին շահակիցների հաղորդակցության շնորհիվ: Հաղորդակցության շնորհիվ վերլուծվում են

բացթողումները և վերհանվում են խնդիրները, որոնք առաջանում են բարձրացված հարցերի շուրջ թիմային/խմբակային որոշում կայացնելու փորձերի և այլ գործընթացների ընթացքում: Այս Ուղեցույցում սահմանվել են մի շարք քայլեր՝ աջակցելու գործընկերներին ՄԿԾ-ի համապատասխանության ապահովման գործընթացում տարբեր առաջադրանքների շուրջ միասին աշխատելիս:

Մինչ համապատասխանության ապահովման գործընթացին անցնելը շատ կարևոր է նշել, որ բուհերը կրթության ոլորտում պետք է որդեգրեն ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցում: Ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցումը շեշտակի փոփոխություն է մտցնում կրթական ծրագրի մշակման և վերանայման գործընթացներում՝ անցում կատարելով ուսումնական ծրագրի մշակման ներդրումների վրա հիմնված մոտեցումից՝ կառուցված դասընթացի բովանդակության վրա, դեպի այնպիսի մոտեցումը, որում դասընթացի բովանդակությունը/ դասավանդման և ուսումնառության, ինչպես նաև գնահատման գործընթացները մշակվում են՝ հիմնվելով ուսումնառության արդյունքների վրա: Այս շրջանակում ուսանողները տեղեկացված են լինում, թե ինչ պետք է իմանան, հասկանան և կարողանան անել ուսումնական միավորը ավարտելուց հետո, այն է՝ ուսանողներն են ձևավորում իրենց ուսումնառության գործընթացի համատեքստը: Միևնույն ժամանակ, սա ուղղորդում է դասախոսներին՝ մշակելու իրենց դասընթացը քայլերը՝ հիմնվելով ՄԿԾ-ի սահմանված ուսումնառության արդյունքների վրա:

Այս Ուղեցույցում առաջարկում ենք "Մշակել վերևից ներքև, իրականացնել ներքևից վերև/ Design Down, Deliver Up" մոտեցումը: 'Վերևից ներքև մշակումը/Designing down'-ը մի մոտեցում է, որն անցում է կատարում որակավորման ուսումնասիրությունից դեպի ՄԿԾ-ի և ելքային ուսումնառության արդյունքներ, և վերջապես, դեպի ուսումնառության արդյունքի, դրա գնահատման չափանիշների և այլ համապատասխան տեղեկատվության խորքային ուսումնասիրություն: Քանի որ ՄԿԾ-ը, սովորաբար ներառում է մի քանի (մինչև 15) ուսումնառության արդյունքներ, հիմնական միտքն է՝ ամբողջությամբ վերլուծել յուրաքանչյուր ուսումնառության արդյունք, և ապա համադրել կատարված վերլուծությունները՝ վերհանելու համար կրկնություններն ու այն կետերը, որտեղ կարելի էր համադրել/միավորել ուսումնառության և գնահատման գործընթացները:

Կարևոր է նշել, որ ուսանողը յուրացնում է ուսումնական ծրագրի բովանդակությունը՝ հիմնված ՄԿԾ-ի ընդհանրական ուսումնառության արդյունքների վրա, և ձեռք է բերում ելքային ուսումնառության արդյունքներ՝ հիմնված որակավորման նպատակի վրա: Ահա թե ինչու է կարևոր մշակումը սկսել՝ սահմանելով որակավորման կամ ՄԿԾ-ի նպատակը, երաշխավորելով դրա շեշտադրումը, երբ մենք պլանավորում ենք ուսումնառության արդյունքների գնահատման կամ ուսումնառության գործընթացները:

**‘Վերևից ներքև մշակում/Designing down’ մոտեցումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.**

1. Ո՞րն է որակավորման նպատակը:
2. Ինչպե՞ս կարելի է իրականացնել այս նպատակը: Ի՞նչ պետք է իմանան և կարողանան անել ուսանողները այս նպատակին հասնելու համար: Ի՞նչ արժեքներ է կրում այս նպատակը:
3. Ինչպե՞ս եք ստուգում՝ արդյոք ուսանողները ձեռք են բերել ուսումնառության արդյունքները: Ինչպիսի՞ փաստեր պետք է փնտրեք: Այլ կերպ ասած, ինչպե՞ս եք գնահատելու՝ արդյոք ուսանողները ձեռք են բերել ուսումնառության արդյունքները թե ոչ:
4. Ինչպե՞ս եք ուսանողներին նախապատրաստելու գնահատման գործընթացին: Ինչպիսի՞ դասավանդման և ուսումնառության գործընթացներ են անհրաժեշտ նախանշված գիտելիքները, հմտություններն ու կարողությունները ապահովելու համար:

‘Վերևից ներքև մշակման/Designing down’ մոտեցումն իրականացնելուց հետո գործի է դրվում մեկ այլ մոտեցում՝ “Իրականացնել ներքևից վերև/ Deliver Up”, ինչը նշանակում է իրականացնել այնպիսի ուսումնառության գործընթացներ, որոնք ուսանողներին կնախապատրաստեն գնահատմանը: Այս գործընթացն, իր հերթին, կապահովի փաստեր, որ ուսանողները բավարարում են ուսումնառության արդյունքների պահանջներին և, հետևաբար, որակավորման նպատակը իրականացված է:

Հենց այս ընդհանրական մոտեցման շրջանակում էլ փորձ է արվել այս Ուղեցույցով մշակել համապատասխան գործիքակազմ այն անձանց համար, ովքեր կանգնած են համապատասխանության ապահովման անհրաժեշտության և մարտահրավերի առջև:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1- ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼՈՂ ԲԱՅԵՐ

Ստորև բերված բայերի ցանկի օգտագործումը օգնում է հստակեցնել և սահմանել հմտությունները՝ ըստ իրենց ծավալի և բարդության:

**Գիտելիք. ծավալը և տեսակը**

Նկարագրել, սահմանել, ցուցակագրել, մեջբերել, մտաբերել, պատմել, ճանաչել, գրել, վերարտադրել, ընտրել, սահմանել

**Հմտություններ (ծավալը և տեսակը)** – կիրառել, գնահատել, հարաբերել, ընտրել, հստակեցնել, դասակարգել, հաշվել, հակադրել, ավարտել, կառուցել, փոխակերպել, վերծանել, պաշտպանել, ցուցադրել, նկարագրել, մշակել, տարբերակել, բացահայտել, զատորոշել, քննարկել, զանազանել, բեմականացնել, վարձել, գնահատական տալ, քննել, բացատրել, փորձարկել, արտահայտել, երկարացնել, հաշվարկել, ընդհանրացնել, օրինակներ բերել, սահմանել, արտացոլել, ցույց տալ, մեկնաբանել, մոդիֆիկացնել, գործել, կազմակերպել, վարժվել, արտադրել, ճանաչել, զեկուցել, վերանայել, ընտրել, մասնավորեցնել, խթանել, լուծել, ամփոփել, թարգմանել, օգտատործել:

ՈԱՇ-ում առկա է բայերի երեք խումբ, որոնք արտացոլում են **կարողությունների** համապատասխան ենթախմբերը:

**Ինքնավարություն և պատասխանատվություն (խորաթափանցությունը)** – ընդունել, գնահատել, պարզել, բանավիճել, գնահատել, մարտահրավեր նետել, ընտրել, եզրակացնել, հակադրել, հավաստիացնել, քննադատել, պաշտպանել, զանազանել, քննարկել, վիճարկել, տարբերակել, բացատրել, արժևորել, նախաձեռնել, մեկնաբանել, դատել, արդարացնել, կանխատեսել, համոզել, հարցնել, խորհուրդ տալ, լուծել, ընտրել, ստանդարտացնել, ամփոփել, սինթեզել, իմաստավորել:

**Ինքնազարգացում (սովորել, թե ինչպես է պետք սովորել)** – գիտակցել, փորձել, մարտահրավեր նետել, համադրել, ավարտել, պաշտպանել, ցուցադրել (որևէ բանի շուրջ կարծիք կամ գնահատական), զանազանել, քննարկել, վիճարկել, ընդունել, նախաձեռնել, ինտեգրել, դատել, արդարացնել, վարժվել, հարցնել, վերաբերել, սինթեզել, արժևորել:

**Դերը և համատեքստը** – գիտակցել, գործել, հետևել, հարցնել, ընդունել, պատասխանել, աջակցել, մարտահրավեր նետել, համադրել, ավարտել, համաձայնեցնել, համագործակցել, պաշտպանել,

ցուցադրել (որևէ բանի շուրջ կարծիք կամ գնահատական), զանազանել, քննարկել, ցուցադրել, վիճարկել, ընդունել, նախաձեռնել, ինտեգրել, միանալ, դատել, արդարացնել, մասնակցել, վարժվել, հարցնել, զեկուցել, լուծել, սինթեզել, արժևորել:

## Բլումի տաքսոնոմիայի նկարագրող բայեր

| Գիտելիք | Ընկալում | Կիրառում | Վերլուծում | Գնահատում | Ստեղծում |
|---|---|---|---|---|---|
| Սահմանել | Բացատրել | Լուծել | Վերլուծել | Վերաձևակերպել | Մշակել |
| Ճանաչել | Նկարագրել | Կիրառել | Համեմատել | Քննադատել | Ստեղծագործել |
| Նկարագրել | Մեկնաբանել | Արտացոլել | Դասակարգել | Գնահատել | Ստեղծել |
| Պիտակավորել | Վերաձևակերպել | Մոդիֆիկացնել | Հակադրել | Պատվիրել | Պլանավորել |
| Ցուցակագրել | Ամփոփել | Օգտագործել | Զանազանել | Գնահատական տալ | Համադրել |
| Անվանել | Դասակարգել | Հաշվարկել | Եզրակացնել | Դատել | Ձևակերպել |
| Հաղորդել | Համեմատել | Փոփոխել | Տարանջատել | Աջակցել | Հայտնաբերել |
| Համապատասխանեցնել | Զանազանել | Ընտրել | Բացատրել | Համեմատել | Հիպոթեզ առաջադրել |
| Ճանաչել | Քննարկել | Ցուցադրել | Ընտրել | Որոշել | Փոխարինել |
| Ընտրել | Տարբերել | Բացահայտել | Կատեգորիաների բաժանել | Զատորոշել | Գրել |
| Ստուգել | Ընդարձակել | Փորձարկել | Միավորել | Խորհուրդ տալ | Կազմել |
| Տեղավորել | Կանխատեսել | Վերաբերել | Տարբերել | Ամփոփել | Կառուցել |
| Մտապահել | Հարաբերել | Ցույց տալ | Զատորոշել | Գնահատական դնել | Զարգացնել |
| Մեջբերել | Հակադրել | Ուրվագծել | Կիսել | Ընտրել | Ընդհանրացնել |
| Մտաբերել | Փոխակերպել | Ավարտել | Պատվիրել | Համոզել | Ինտեգրել |
| Վերարտադրել | Ցուցադրել | Կառուցել | Մատնացույց անել | Պաշտպանել | Մոդիֆիկացնել |
| Աղյուսակավորել | Գնահատել | Բեմականացնել | Առաջնահերթություն տալ | Գնահատել | Կազմակերպել |
| Պատմել | Արտահայտել | Մեկնաբանել | Ստորաբաժանել | Գտնել սխալներ | Պատրաստել |
| Պատճենել | Ճանաչել | Շահագործել | Հետազոտել | Աստիճանավորել | Արտադրել |
| Բացահայտել | Նշել | Նկարել | Գովազդել | Չափել | Վերադասավորել |
| Ընդօրինակել | Եզրակացնել | Պատրաստել | Արժեք տալ | Կանխատեսել | Վերաշարադրել |
| Թվարկել | Վերաբերել | Արտադրել | Մասերի բաժանել | Աստիճանակարգել | Դերային խաղ |
| Ունկնդրել | Վերաշարադրել | Զեկուցել | Հաշվարկել | Միավոր շնորհել | Ադապտացնել |
| Դիտարկել | Ընտրել | Սովորեցնել | Եզրակացնել | ԸՆտրել | Ակնկալել |
| Դուրս թողնել/բաց թողնել | Թարգմանել | Գործել | Ամրակցել | Տեստավորել | Կազմակերպել |
| Կարդալ | Հարցնել | Գործերը վարել | Քննադատել | Վիճել | Հավաքվել |
| Արտասանել | Մեջբերել | Շրջանառել | Եզրակացնել | Եզրակացնել | Ընտրել |
| Գրառել | Բացահայտել | Դիագրամ կառուցել | Հնարել | Համարել | Համագործակցել |
| Կրկնել | Ընդհանրացնել | Հավաքել | Դիագրամ կազմել | Քննադատել | Հավաքել |
| Վերապատմել | Օրինակներ բերել | Հաշվել | Ճեղքել | Դեբատի մեջ մտնել | Հնարել |
| Պատկերացնել | Խմբավորել | Որոշել | Գնահատել | Դասակարգել | Արտահայտել |
| | Արտացոլել | Մշակել | Գնահատական տալ | Խմբագրել | Հեշտացնել |
| | Դատել | Վարձել | Փորձարկել | Արդարացնել | Պատկերացնել |
| | Դիտարկել | Հիմնադրել | Կենտրոնանալ | Համոզել | Եզրակացնել |
| | Պատվիրել | Ստուգել | Արտապատկերել | Դրույքաչափ սահմանել | Միջամտել |
| | Զեկուցել | Բացատրել | Կազմակերպել | Կշռել | Արդարացնել |
| | Ներկայացնել | Հարցազրույց անցկացնել | Ուրվագծել | | Անել |
| | Հետազոտել | Դատել | Պլանավորել | | Կառավարել |
| | Վերանայել | Ցուցակագրել | Հարցնել | | Բանակցել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Արտագրել<br>Ցույց տալ<br>Հետևել<br>Փոխակերպել | Գործել<br>Վարժվել<br>Կանխատեսել<br>Արձանագրել<br>Ժանամակացույց կազմել<br>Կեղծել<br>Փոխանցել<br>Գրել | Թեստավորել | | Ծագեցնել<br>Առաջարկել<br>Ճանաչել<br>Զեկուցել<br><br>Վերանայել<br>Կեղծել<br>Լուծել<br>Մտածել<br>Կառուցել<br>Աջակցել<br>Թեստավորել<br>Հաստատել |

Համալսարանական դասավանդման, ուսումնառության և գնահատման կենտրոն

http://uwf.edu/cutla/SLO/ActionWords.

## ՀԱՎԵԼՎԱԾ 2- ՄԿԾ-Ի ԵՎ ՈԱՇ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

| ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՆՔՆԵՐ | ՈԱՇ-Ի ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ | ԱՆ ՈՒ |
|---|---|---|

| | Գիտելիք | | Հմտություն | | | | | Կարողություն | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1.1 | 1.2 | 2.1 | 2.2 | 2.3 | 2.4 | 2.5 | 3.1 | 3.2 | 3.3 | 3.4 | 3.5 | |
| Ուսումնառության արդյունք 1 | 1 | 1 | | | | | | | | | | | **2** |
| Ուսումնառության արդյունք 2 | | 2 | | | | | | | | | | | **2** |
| Ուսումնառության արդյունք 3 | | | 2 | | 1 | | | 1 | | 2 | | | **6** |
| Ուսումնառության արդյունք 4 | | 2 | | 1 | | 2 | | 1 | | | 1 | | **7** |
| Ուսումնառության արդյունք 5 | | | | | | | 2 | | | | | 1 | **3** |
| Ուսումնառության արդյունք 6 | 1 | 1 | | | | | 1 | | 2 | | | | **5** |
| Ուսումնառության արդյունք 7 | | | 2 | | 1 | | 2 | | | 1 | | 2 | **8** |
| Ուսումնառության արդյունք 8 | | | | | | | | | | | 2 | | **2** |
| Ուսումնառության արդյունք 9 | | | | 1 | | 1 | | | 1 | 1 | | 1 | **5** |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | **2** | **6** | **4** | **2** | **2** | **3** | **5** | **2** | **3** | **4** | **3** | **4** | **40** |

ՈԱՇ-ը նկարագրում է ՀՀ-ի յուրաքանչյուր կրթական մակարդակում գիտելիքների, հմտությունների և կարողությունների ընդհանրական մակարդակը: Առաջին հայացքից, գիտելիքների, հմտությունների և կարողությունների համապատասխան մակարդակները նկարագրված են հստակ տեքստերի միջոցով, ինչը տարբերվում է կրթական մակարդակի՝ ուսումնառության արդյունքների հիման վրա նկարարգրման սկզբունքից: Այնուամենայնիվ, տեքստի առավել խորքային ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է ընձեռում դուրս բերելու հիմնական բառեր կամ բառակապակցություններ, որոնք թույլ են տալիս առանձնացնելու ընդհանրական ուսումնառության արդյունքները՝ նկարագրելով տվյալ որակավորման գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, օրինակ՝ վերլուծելու և եզրակացություններ անելու կարողությունը, թիմային աշխատանքի հմտությունները, քննադատական մտածողությունը և այլն: ՈԱՇ-ի ուսումնառության արդյունքները տեղադրելով աղյուսակի վերևում, իսկ ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները՝ ձախ կողմում, մենք կստանանք ՈԱՇ-ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների մատրից: Մատնանշելով համապատասխանությունը ՄԿԾ-ի յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի և ՈԱՇ-ի ցանկացած ուսումնառության արդյունքի միջև՝ կարելի է եզրակացնել, թե որքանով են ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները ծածկում ՈԱՇ-ի նկարագրիչները, և հետևաբար, թե որքանով է կրթությունը համապատասխանում շնորհված

որակավորմանը: Ծրագրի ուսումնառության արդյունքները 1) «զգալի ներդրում են կատարում» ՈԱՇ-ի ուսումնառության արդյունքների ձևավորման գործընթացում, և 2) արտացոլում են «համահունչությունը» (ամուր հարաբերակցությունը):

## ՀԱՎԵԼՎԱԾ 3- ՈԱՇ. ԿԱՊԸ ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **ԳԻՏԵԼԻՔ-** այն, ինչ շրջանավարտը գիտի և հասկանում է: Գիտելիքը նկարագրվում է ծավալի, խորության, տեսակի և բարդության առումներով: | | | | |
| ՈԱՇ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄԱԿԱՐԴԱԿ | Խումբ | Ենթախումբ | ՈԱՇ-ի նկարագրիչներից դուրս բերված հիմնական բառեր | Գիտելիքի բովանդակություն | ՄԿԾ-ի համապատասխան ուսումնառության արդյունքներ |
| Ցուցաբերում է **համապարփակ գիտելիքներ և տվյալ մասնագիտական ոլորտում առկա տեսությունների և մեթոդների ընկալում,** որոնց մի մասը **առանցքային գիտելիքներ** են և հիմք են ծառայում՝ **անկախ հետազոտությունների** իրականացման համար: | | **Ծավալ**<br>Որքա՞ն ընդգրկուն են սովորողի գիտելիքները: | **Տվյալ մասնագիտական ոլորտ և միջառարկայական տիրույթ** | | |
| | | **Խորություն**<br>Որքա՞ն խորքային և ամբողջական են սովորողի գիտելիքները: | **Համապարփակ գիտելիքներ և ընկալում** | | |
| | | | **Տեսություն և մեթոդներ (փաստացի գիտելիքներ)** | | |
| | Գիտելիք | | **Տեսություն և մեթոդներ (կոնցեպտուալ գիտելիքներ)** | | |
| | | **Գիտելիքի տեսակներ**<br>Ի՞նչ բնույթի կամ որակի գիտելիքների է տիրապետում սովորողը: | **Տեսություն և մեթոդներ (ընթացակարգային գիտելիքներ)** | | |
| | | | **Հիմք՝ անկախ հետազոտությունների** իրականացման համար **(Մետա-ճանաչողական գիտելիքներ)** | | |

| ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ - այն, ինչ շրջանավարտը կարող է անել: Հմտությունները նկարագրվում են ծավալի և բարդության առումներով և ներառում են ճանաչողական, տեխնիկական, հաղորդակցման, ստեղծագործական, միջանձնային հարաբերությունների և ընդհանրական հմտություններ: | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՈԱՇ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄԱԿԱՐԴԱԿ | Խումբ | Ենթախումբ | ՈԱՇ-ի նկարագրիչներից դուրս բերված հիմնական բառեր | Գիտելիքի բովանդակություն | ՄԿԾ-ի համապատասխան ուսումնառության արդյունքներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կարող է համակողմանիորեն կիրառել ոլորտի հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները՝ մասնագիտական բնագավառում (կամ միջառարկայական տիրույթում) ոչ ամբողջական տեղեկատվության պայմաններում կամ նոր և անծանոթ իրադրություններում տեսական և գործնական խնդիրների լուծման համար:<br><br>Կարող է օգտագործել մասնագիտական հաղորդակցման միջոցներ՝ իր եզրահանգումները և հետազոտության արդյունքները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը համակարգված կերպով ներկայացնելու համար:<br><br>Կարող է կիրառել ՏՀՏ-ներ մասնագիտական ոլորտում նոր, բարդ խնդիրներ լուծելու և հետազոտությանը օժանդակելու համար:<br><br>Կարող է վերլուծել և գնահատել տվյալ ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալներ՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվու-թյան պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու համար:<br><br>Կարող է հետազոտել և առաջադրել մասնագիտական ոլորտին առնչվող նոր գաղափարներ, մոտեցումներ, տեսություններ և/կամ հետազոտական հիմնախնդիրներ և առաջարկել նորարարական ու ստեղծագործական լուծումներ, որոնք ընդլայնում են ոլորտի գիտելիքն ու պրակտիկան: | Հմտություն | **Ծավալ**<br>Որքա՞ն լայնածավալ են սովորողի կողմից ցուցադրվող ֆիզիկական, ինտելեկտուալ, սոցիալական և այլ հմտությունները: | • համակողմանիորեն<br>• ոլորտի հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները<br>• համապատասխան ոլորտում<br>• մասնագիտական և ոչ մասնագիտական լսարան<br>• մասնագիտական բնագավառում (կամ միջառարկայական տիրույթում) ոչ ամբողջական տեղեկատվության պայմաններում կամ նոր և անծանոթ իրադրություններում տեսական և գործնական խնդիրների լուծում<br>• համակարգված կերպով ներկայացնել սեփական եզրահանգումները և հետազոտության արդյունքները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը<br>• կիրառել ՏՀՏ-ներ<br>• լուծել նոր բարդ խնդիրներ<br>• խթանել հետազոտական աշխատանքներին<br>• վերլուծել և գնահատել տվյալ ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալները<br>• անել եզրակացություններ և ընդունել որոշումներ՝ տիրապետելով ոչ լիարժեք կամ սահմանափակ տեղեկատվության<br>• հետազոտել և դուրս բերել նոր գաղափարներ, հայեցակարգեր, տեսություններ և/կամ հետազոտության թեմաներ<br>• առաջարկել նորարարական ու ստեղծագործական լուծումներ, որոնք ընդլայնում են ոլորտի գիտելիքն ու պրակտիկան | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ – տվյալ համատեքստում գիտելիքների և հմտությունների կիրառումն է: Այն արտահայտվում է ինքնավարության, պատասխանատվության և հաշվետվողականության առումներով: Համատեքստը կարող է լինել կանխատեսելի և անկանխատեսելի, ծանոթ և անծանոթ, առօրեական և ոչ-առօրեական: | | | | |
| ՈԱՇ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄԱԿԱՐԴԱԿ | Խումբ | Ենթախումբ | ՈԱՇ-ի նկարագրիչներից դուրս բերված հիմնական բառեր | Գիտելիքի բովանդակություն | ՄԿԾ-ի համապատասխ ուսումնառությ արդյունքներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ունակ է լուծելու բարդ խնդիրներ և կատարելու առաջադրանքներ նեղ մասնագիտական կամ կրթական ոլորտում, ինքնուրույն կառավարելու նոր մոտեցումներ պահանջող աշխատանքային իրադրություններ՝ ցուցաբերելով ինքնավարություն/ինքնուրույնություն և մասնագիտական անկախություն, նպաստելու գիտելիքի, մասնագիտական գործունեության և հետազոտության առաջընթացին, պատասխանատվություն ստանձնելու թիմում այլոց աշխատանքի համար և ղեկավարելու այն:<br><br>Ունակ է սահմանելու իր սեփական կրթական պահանջմունքները և ինքնուրույն շարունակելու ուսումնառությունը: | **Կարողություն** | **Ինքնավարություն և պատասխանատվություն**<br>Ինչպե՞ս է սովորողը դրսևորում անձնային և խմբային պատասխանատվություն: Ինչպե՞ս է սովորողը կիրառում ձեռք բերված հմտությունները այլ անձանց հետ շփումը վերահսկելիս կամ ինքնուրույք աշխատելիս:<br><br>**Ինքնազարգացում**<br>Որքանո՞վ է սովորողը կարողանում գործել նոր միջավայրում, ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ, համալրել արդեն իսկ ձևավորած գիտելիքների և հմտությունների բազան:<br><br>**Դերը համատեքստում**<br>Արդյո՞ք սովորողը կարող է կիրառել իր գիտելիքներն ու հմտությունները ստեղծված տարբեր համատեքստերում: | ցուցաբերելով ինքնավարություն/ինքնուրույնություն և մասնագիտական անկախություն<br><br>պատասխանատվություն ստանձնելու թիմում այլոց աշխատանքի համար և ղեկավարելու այն<br><br>սահմանելու սեփական կրթական պահանջմունքները և ինքնուրույն շարունակելու ուսումնառությունը:<br><br>լուծել բարդ խնդիրներ և կատարելու առաջադրանքներ նեղ մասնագիտական կամ կրթական ոլորտում, ինքնուրույն կառավարելու նոր մոտեցումներ պահանջող աշխատանքային իրադրություններ՝ ցուցաբերելով ինքնավարություն/ինքնուրույնություն և մասնագիտական անկախություն, նպաստելու գիտելիքի, մասնագիտական գործունեության և հետազոտության առաջընթացին | | |

## ՀԱՎԵԼՎԱԾ 4- ՄԿԾ-Ի ԵՎ ՄՈԴՈՒԼԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՉԱՓԵՐ

| ՄԿԾ-ի ձևաչափ- 8-րդ մակարդակ |
| --- |
| **ՄԿԾ-ի շիֆրը** |
| **ՄԿԾ-ի անվանումը/ շնորհվող որակավորումը** |
| **Ծրագրի համակարգողը** |
| **Ֆակուլտետը** |
| **ՈԱՇ-ի մակարդակը** |
| **ECTS կրեդիտները** |
| **Ծրագրի տևողությունը** |
| **Ծրագրի նկարագիրը** |

ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ: ՄԱԿԱՐԴԱԿ 8

**Ուղենիշ:** Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար 8-12 ուսումնառության արդյունք, յուրաքանչյուր խմբում (գիտելիք, իմանալ՝ ինչպես, և հմտություն, և կարողություն) առանձնացնելով ՄԿԾ-ի 2 ուսումնառության արդյունք:

Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է.

**Գիտելիք**

**Ենթախմբեր**

***Գիտելիքի ծավալ:*** Ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների վերաբերյալ ընդհանուր գիտելիք և իմացություն:

***Գիտելիքի տեսակ:*** Տվյալ մասնագիտության և հարակից ոլորտների տեսությունների ու մեթոդների վերաբերյալ համակողմանի գիտելիք և իմացություն, որոնց մի մասը այդ բնագավառի վերջին ձեռքբերումներն են:

**Հմտություն (իմանալ՝ ինչպես)**

**Ենթախմբեր**

***Ծավալ:*** Տիրապետում է մասնագիտական ոլորտում անհրաժեշտ համալիր հմտությունների և գործիքների; կիրառելով և հարմարեցնելով իր առաջավոր հմտություններն և գործիքակազմը՝ ղեկավարի անմիջական ուղղորդմամբ անում է հետազոտություն, ծավալում մասնագիտական կամ նորարարական տեխնիկական գործունեություն:

***Ընտրողականություն:*** Պլանավորման, մշակման, տեխնիկական և/կամ կառավարման տարբեր համալիր գործառույթների շրջանակում անում է համապատասխան դատողություններ՝ կապված ապրանքների, ծառայությունների, գործառնությունների կամ գործընթացների, ինչպես նաև ռեսուրսների բաշխման հետ:

<u>Կարողություն</u>

**Ենթախմբեր**

***Համատեքստ:*** Հետազոտական, առաջավոր տեխնիկական կամ մասնագիտական գործունեության մեջ կիրառում է արդիական հմտություններ՝ ստանձնելով որոշումների կայացման ողջ պատասխանատվությունը; տարբեր համատեքստերում փոխանցում և կիրառում է դիագնոստիկ և ստեղծագործական հմտություններ:

***Դեր:*** Որակավորված մասնագետների հետ հարաբերություններում գործում է արդյունավետորեն՝ որոշակի ուղղորդման պայմաններում; ղեկավարում է բազմանդամ և տարասեռ համալիր խմբեր:

***Սովորել՝ ինչպես սովորել:*** Սովորում է գործել ուսումնական զանազան և անծանոթ համատեքստերում; սովորում է իրականացնել առաջադրանքներն ինքնուրույն՝ պահպանելով պրոֆեսիոնալիզմի և էթիկայի նորմերը:

***Ընկալում:*** Արտահայտում է իր համապարփակ անձնական աշխարհընկալումը՝ պահպանելով համերաշխություն այլ անձանց հետ:

| ՄԿԾ-ի ձևաչափ- 9-րդ մակարդակ |
|---|
| ՄԿԾ-ի շիֆրը |
| ՄԿԾ-ի անվանումը/ շնորհվող որակավորումը |
| Ծրագրի համակարգողը |
| Ֆակուլտետը |
| ՈԱՇ-ի մակարդակը |
| ECTS կրեդիտները |
| Ծրագրի տևողությունը |
| Ծրագրի նկարագիրը |

ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ: ՄԱԿԱՐԴԱԿ 9

**Ուղենիշ:** Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար 8-12 ուսումնառության արդյունք, յուրաքանչյուր խմբում (գիտելիք, իմանալ՝ ինչպես և հմտություն, և կարողություն) առանձնացնելով ՄԿԾ-ի 2 ուսումնառության արդյունք:

**Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է.**

**Գիտելիք**

**Ենթախմբեր**

***Գիտելիքի ծավալ:*** Դրսևորում է գիտելիքիների համակարգային ընկալում, որոնց մի մասը այդ բնագավառի վերջին ձեռքբերումներն են:

***Գիտելիքի տեսակ:*** Դրսևորում է առկա խնդիրների և նոր գաղափարների անհրաժեշտ իմացություն, որոնց մի մասը այդ բնագավառի վերջին ձեռքբերումներն են:

**Հմտություն (իմանալ՝ ինչպես)**

**Ենթախմբեր**

***Ծավալ:*** Տիրապետում է հետազոտություն կամ հարցում անելու մի շարք ստանդարտ և մասնագիտական գործիքների և հնարքների:

***Ընտրողականություն:*** Կարողանում է ընտրել տվյալ ուսումնառության ոլորտում պահանջվող բարդ և առաջադեմ հմտություններ; զարգացնում է հմտությունները՝ անցում կատարելով առավել բարձր մակարդակի՝ կիրառելով նոր ու զարգացող հնարքներ:

**Կարողություն**

**Ենթախմբեր**

***Համատեքստ:*** Կարողանում է գործել մասնագիտական լայն, և, հաճախ, անկանխատեսելի մակարդակում և վատ սահմանված համատեքստերում:

***Դեր:*** Ունակ է ստանձնելու զգալի պատասխանատվություն անհատների և խմբերի աշխատանքի համար, առաջնորդել և նախաձեռնել գործողություններ:

***Սովորել՝ ինչպես սովորել:*** Կարողանում է ինքն իրեն գնահատել և պատասխանատվություն ստանձնել շարունակական կրթական/ մասնագիտական զարգացման համար:

***Ընկալում:*** Ունակ է ուսումնասիրել և կարծիք արտահայտել սոցիալական նորմերի և հարաբերությունների վերաբերյալ, ինչպես նաև քայլեր ձեռնարկել՝ դրանք փոփոխելու ուղղությամբ:

| ՄԿԾ-ի ձևաչափ- 10-րդ մակարդակ |
| --- |
| **ՄԿԾ-ի շիֆրը** |
| **ՄԿԾ-ի անվանումը/ շնորհվող որակավորումը** |
| **Ծրագրի համակարգողը** |
| **Ֆակուլտետը** |
| **ՈԱՇ-ի մակարդակը** |
| **ECTS կրեդիտները** |
| **Ծրագրի տևողությունը** |
| **Ծրագրի նկարագիրը** |

ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ: ՄԱԿԱՐԴԱԿ 10

**Ուղենիշ:** Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար 8-12 ուսումնառության արդյունք, յուրաքանչյուր խմբում (գիտելիք, իմանալ՝ ինչպես և հմտություն, և կարողություն) առանձնացնելով ՄԿԾ-ի 2 ուսումնառության արդյունք:

**Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է.**

**Գիտելիք**

**Ենթախմբեր**

***Գիտելիքի ծավալ:*** Ունակ է համակարգային կերպով ձեռք բերել նոր գիտելիքներ և հասկանալ առանցքային գիտելիքի բովանդակությունը, որի մի մասը տվյալ բնագավառի վերջին ձեռքբերումներն են:

***Գիտելիքի տեսակ:*** Ունակ է ստեղծել և մեկնաբանել գիտելիքը իրական հետազոտության և այլ առաջադեմ գիտական գործունեության միջոցով՝ կատարելով այնպիսի որակի աշխատանք, որը բավարարում է վերանայման պահանջները:

Հ

**Հմտություն (իմանալ՝ ինչպես)**

**Ենթախմբեր**

***Ծավալ:*** Տիրապետում է շոշափելի ծավալի հիմնական հմտությունների, հնարքների, գործիքների, փորձառության և/ կամ բովանդակության, որոնք կապված են ուսուցման տվյալ ոլորտի հետ, ունակ է ձևավորելու նոր հմտություններ, հնարքներ, գործիքներ, փորձ և/ կամ նյութեր:

***Ընտրողականություն:*** Ունակ է լուծելու առաջացած վերացական խնդիրները և վերասահմանելու առկա ընթացակարգային գիտելիքները:

**Կարողություն**

**Ենթախմբեր**

***Համատեքստ:*** Ունակ է ստանձնելու անձնային պատասխանատվություն և ցուցաբերելու հիմնականում ինքնաբուխ նախաձեռնողականություն բարդ և անկանխատեսելի իրադրություններում՝ մասնագիտական կամ համապատասխան համատեքստում:

***Դեր:*** Կարող է գործընկերներին ներկայացնել հետազոտական և նորարարական աշխատանքների արդյունքները, ներգրավվել քննադատական երկխոսության մեջ, առաջնորդել և իրականացնել ամբողջական սոցիալական գործընթացներ:

***Սովորել՝ ինչպես սովորել:*** Կարող է սովորել քննադատել որոշակի համատեքստում գիտելիքի կիրառման ավելի ծավալուն փորձերը:

***Ընկալում:*** Ունակ է ուսումնասիրել և կարծիք արտահայտել սոցիալական նորմերի և հարաբերությունների վերաբերյալ, ինչպես նաև ուղղորդել դրանց փոփոխությանը միտված գործողություններ:

| ՄՈԴՈՒԼԻ ՁԵՎԱՉԱՓ |
|---|
| **Մոդուլի շիֆրը** |
| **Մոդուլի անվանումը/ շնորհվող որակավորումը** |
| **Ֆակուլտետը** |
| **ECTS կրեդիտները** |
| **Կիսամյակը** |
| **Մոդուլի համակարգողը** |
| **Արդյո՞ք հասանելի է միջազգային ուսանողներին:** |
| **Արդյո՞ք հասանելի է ընտրված ծրագրի շրջանակից դուրս:** |

| Մոդուլի նկարագիրը |
|---|
| Լրացուցիչ տեղեկատվություն մոդուլի վերաբերյալ (ծրագրային հավատարմագրում) |
| Մոդուլի բովանդակությունը |
| Մոդուլի իրականացման նախադրյալները |
| Մոդուլի ընթացիկ պահանջները (co-requisits) |
| |

| Մոդուլի ուսումնառության արդյունքները |
|---|
| **Մոդուլը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա.**<br>Նշում. 5 կրեդիտից բաղկացած մոդուլի համար 4 ուսումնառության արդյունք |
| Ուսումնառության արդյունք 1 |
| Ուսումնառության արդյունք 2 |
| Ուսումնառության արդյունք 3 |
| Ուսումնառության արդյունք 4 |
| Ուսումնառության արդյունք 5 |
| Ուսումնառության արդյունք 6 |
| Ուսումնառության արդյունք 7 |
| Ուսումնառության արդյունք 8 |

| ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ |
| --- |
| Դասավանդման և ուսումնառության մեթոդները |
| Դասախոսություն (ժամերը) |
| Լաբորատոր/պրակտիկ աշխատանքներ (ժամերը) |
| Անհատական պարապմունքներ/խորհրդատվություններ (ժամերը) |
| Պլանավորված ուսումնառության գործընթացներ (ժամերը) |
| Ուսանողի անհատական աշխատանքներ (ժամերը) |

| ԳՆԱՀԱՏՈՒՄ |
| --- |
| Ընթացիկ գնահատում |
| Ընթացիկ գնահատման %-ը |
| Համալսարանի պլանային գրավոր քննություն |
| Համալսարանի պլանային գրավոր քննության %-ը |
| Գնահատման այլ տեսակներ |
| Գնահատման այլ տեսակների %- ը |
| Ընդհանուր գնահատականներ (total marks) |
| Պատժամիջոցներ |
| Անցողիկ չափորոշիչ |
| Աշնանային լրացուցիչ քննություն |
| Համալսարանի պլանային քննություն (աշնանը) |
| Համալսարանի պլանային աշնանային քննություն տևողությունը (ժամերը) |

## ՀԱՎԵԼՎԱԾ 5- ՄԿԾ-Ի ՁԵՎԱՉԱՓ – ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՍՏԻՃԱՆ (ԴՈՒԲԼԻՆՅԱՆ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ)

| | |
|---|---|
| ՄԿԾ-ի շիֆրը | |
| ՄԿԾ-ի անվանումը/ շնորհվող որակավորումը | |
| Ծրագրի համակարգողը | |
| Ֆակուլտետը և բաժինը | |
| ՈԱՇ-ի մակարդակը/ ԵԲԿՏ-ի մակարդակը/ համապատասխանությունը Դուբլինյան Նկարագրիչներին | |
| Ազգային կրեդիտները | |
| ECTS կրեդիտները | |
| Մոդուլների թիվը | |
| Ծրագրի տևողությունը | |
| Ծրագրի նկարագիրը | |
| Իրականացման եղանակը (օրինակ՝ ամբողջ կամ կեսօրյա ուսուցում, դեմ-առ-դեմ ուսուցում, կարճաժամկետ ծրագրեր/ low-residence/, հեռակա ուսուցում, առցանց ուսուցում, խառը ուսուցում, խտացված ամառային դպրոց, համագործակցային (գործատուների, մասնագիտական ասոցիացիաների և/կամ այլ բուհերի հետ)):) | |
| Ուսանողների ընդունելության թիվը և եղանակը<br>Դասակարգել ուսանողների ընդունելության պլանավորված թիվը (և վարձավճարներից ստացված մոտավոր եկամուտը) և եղանակը (օրինակ՝ ամբողջ կամ կեսօրյա ուսուցում) առաջիկա 5 տարիների համար: | |

## ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներ. մակարդակ X

Ուղենիշ: Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար 8-12 ուսումնառության արդյունք, յուրաքանչյուր խմբում (գիտելիք, իմանալ՝ ինչպես և հմտություն, և կարողություն) առանձնացնելով ՄԿԾ-ի 2 ուսումնառության արդյունք:

Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա.

- Ցուցադրել մասնագիտական ոլորտում **գիտելիքներ և ընկալում**, որոնք հիմնված են միջնակարգ կրթության բազայի վրա և, որպես կանոն, գտնվում են այնպիսի մակարդակում, որում համապատասխան առաջադեմ դասագրքերի կիրառմամբ կարող են ներառել այնպիսի գիտելիքներ, որոնց մի մասը տվյալ բնագավառի վերջին ձեռքբերումներն են;
- **Կիրառել** իր գիտելիքներն ու ընալումը՝ ցուցաբերելով մասնագիտական մոտեցում իր աշխատանքում կամ զբաղվածության ոլորտում, և **ունենալ կարողություններ**, որոնք, որպես կանոն, դրսևորվում են փաստարկների առաջադրելու և հետևելու, ինչպես նաև մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու ունակությամբ;
- **Հավաքագրել և մեկնաբանել** համապատասխան տվյալները (սովորաբար, իր մասնագիտական ոլորտում) և դրանց հիման վրա կատարել դատողություններ տարբեր սոցիալական, գիտական և էթիկական խնդիրների վերաբերյալ;
- **Ներկայացնել/հաղորդել** տեղեկատվությունը, գաղափարները, խնդիրները և համապատասխան լուծումները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը;
- Զարգացնել այն ուսումնական հմտությունները՝ որոնք անհրաժեշտ են հետագա ուսուցման համար՝ երաշխավորելով **ինքնավարության բարձր մակարդակ**:

Բակալավրի աստիճանի ՄԿԾ-ի համար կարող է օգտակար լինել խմբավորել ուսումնառության արդյունքները՝ ըստ գիտելիք, հմտություն, կարողություն բաժինների, ինչպես նաև մատնանշել, թե այն որ Մոդուլի/Միավորի ուսումնառության արդյունքին է համահունչ:

| ՄԿԾ-ի ուսումնառության արդյունք | Տեսակը (Գիտելիք/Հմտություն/Կարողություն) | Ո՞ր Մոդուլի/Միավորի (-ների) ուսումնառության արդյունքին է համահունչ |
|---|---|---|
| 1. | | |
| 2. | | |
| 3. | | |
| 4. | | |
| 5. | | |
| 6. | | |
| 7. | | |
| 8. | | |
| 9. | | |
| 10. | | |
| 11. | | |

| | | |
|---|---|---|
| 12. | | |

**ՄԿԾ-ի Ձևաչափ – Մագիստրոսի Աստիճան (Դուբլինյան Նկարագրիչներ)**

| | |
|---|---|
| ՄԿԾ-ի շիֆրը | |
| ՄԿԾ-ի անվանումը/ շնորհվող որակավորումը | |
| Ծրագրի համակարգողը | |
| Ֆակուլտետը և բաժինը | |
| ՈԱՇ-ի մակարդակը/ ԵԲԿՏ-ի մակարդակը/ համապատասխանությունը Դուբլինյան Նկարագրիչներին | |
| Ազգային կրեդիտները | |
| ECTS կրեդիտները | |
| Մոդուլների թիվը | |
| Ծրագրի տևողությունը | |
| Ծրագրի նկարագիրը | |
| Իրականացման եղանակը (օրինակ՝ ամբողջ կամ կեսօրյա ուսուցում, դեմ-առ-դեմ ուսուցում, կարճաժամկետ ծրագրեր/ low-residence/, հեռակա ուսուցում, առցանց ուսուցում, խառը ուսուցում, խտացված ամառային դպրոց, համագործակցային (գործատուների, մասնագիտական ասոցիացիաների և/կամ այլ բուհերի հետ)):) | |
| Ուսանողների ընդունելության թիվը և եղանակը<br>Դասակարգել ուսանողների ընդունելության պլանավորված թիվը (և վարձավճարներից ստացված մոտավոր եկամուտը) և եղանակը (օրինակ՝ ամբողջ կամ կեսօրյա ուսուցում) առաջիկա 5 տարիների համար: | |

## ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներ. մակարդակ X

Ուղենիշ: Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար 8-12 ուսումնառության արդյունք, յուրաքանչյուր խմբում (գիտելիք, իմանալ՝ ինչպես և հմտություն, և կարողություն) առանձնացնելով ՄԿԾ-ի 2 ուսումնառության արդյունք:

Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա.

- Ցուցաբերել գիտելիքներ և ընկալում՝ հիմնված և ձևավորված Բակալավրի աստիճանում ձեռք բերած գիտելիքների վրա, ինչը հնարավորություն է տալիս դրսևորելու օրիգինալություն/տարբերվող մոտեցում գաղափարների մշակման և կիրառման, ինչպես նաև, հաճախ, հետազոտական համատեքսում;
- Կիրառել գիտելիքներն ու ընկալումը, ինչպես նաև խնդիրներ լուծելու կարողությունը նոր և անծանոթ միջավայրում, մասնագիտական ոլորտին առնչվող ավելի լայն (միջառարկայական) համատեքստում:
- Ցուցաբերել գիտելիքները միախմբելու և բարդ խնդիրներ լուծելու ունակություն, ինչպես նաև ձևակերպել դատողություններ՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում, որոնք ներառում են մտորումներ սոցիալական և էթիկական պատասխանատվության վերաբերյալ, ինչը կապված է գիտելիքի և դատողությունների կիրառման հետ;
- Ներկայացնել սեփական հստակ և միանշանակ դատողությունները և դրանց հիմքում ընկած գիտելիքներն ու հիմնավորումները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը;
- Ցուցաբերել սովորելու հմտություններ՝ ուսումնառությունը, հիմնականում, ինքնուրույն կամ ինքնավար տարբերակով շարունակելու համար:

### Ուսումնառության արդյունքների քարտեզագրում

| | Մոդուլի/միավորի ուսումնառության արդյունքներ (ՈՒԱ)<br>*նախանշված ուսումնառության արդյունք- ՆՈՒԱ | ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներ (ՈՒԱ) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| No | Մոդուլի/միավորի անվանումը | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | ՆՈՒԱ 1-ը համահունչ է ՄԿԾ-ի հետևյալ ՆՈՒԱ-ներին | | | | | | | | |
| 2 | ՆՈՒԱ 2-ը համահունչ է ՄԿԾ-ի հետևյալ ՆՈՒԱ-ներին | | | | | | | | |
| 3 | ՆՈՒԱ 3-ը համահունչ է ՄԿԾ-ի հետևյալ ՆՈՒԱ-ներին | | | | | | | | |
| 4 | ՆՈՒԱ 4-ը համահունչ է ՄԿԾ-ի հետևյալ ՆՈՒԱ-ներին | | | | | | | | |

Մոդուլի/միավորի նկարագրիչներ

Ձևաչափ

| | | |
|---|---|---|
| **1.** | Մոդուլի/միավորի շիֆրը | |
| **2.** | Մոդուլի/միավորի անվանումը | |
| **3.** | Առարկայական ոլորտը | |
| **4.** | Ֆակուլտետը/բաժինը | |
| **5.** | ՄԿԾ (-երը), որի շրջանակում մոդուլը/միավորը իրականացվում է | |
| **6.** | **Pathway(s)** հոսքերը | |
| **7.** | Մակարդակը | |
| **8.** | Ազգային կրեդիտները | |
| **9.** | **ECTS** կրեդիտները | |
| **10.** | Հիմնական կամ կամընտրական | |
| **11.** | Մոդուլի/միավորի պահանջները **(ընդունելության պահանջներ, ընթացիկ պահանջներ, անհամատեղելի մոդուլներ pre-requisites, co-requisites, incompatible modules)** | |
| **12.** | Ընդունելի է... | |
| **13.** | Բացառված համակցությունները | |
| **14.** | Լսարանային ժամերը | Ընդհանուր ժամերի թիվը.<br><br>Ժամերի բաշխումը. |
| **15.** | Ինքնուրույն աշխատանքի ժամերը | Ընդհանուր ժամերը. |
| **16.** | Մոդուլի/միավորի տևողությունը | |
| **17.** | Մասնաշենքի տեղակայումը | |
| **18.** | Մոդուլի/միավորի համակարգողը | |
| **19.** | Մոդուլի/միավորի հակիրճ նկարագիրը | |

| | | |
|---|---|---|
| **20.** | Օրինակելի ուսումնական ծրագիր | |
| **21.** | Մոդուլի/միավորի ուսումնառության արդյունքները<br>*Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա.*<br>**1.**<br>**2.**<br>**3.**<br>**4.**<br>**5.** | *Ինչպե՞ս է գնահատվում* |
| **22.** | ՄԿԾ-ի որ ուսումնառության արդյունքներին են համահունչ Մոդուլի/միավորի ուսումնառության արդյունքները | |
| **23.** | Դասավանդում և ուսումնառություն | |
| **24.** | Գնահատում և հետադարձ կապ<br>*Զևավորող վարժություններ և առաջադրանքներ.* | |
| **25.** | Գնահատում և հետադարձ կապ<br>*Ամփոփիչ գնահատում.*<br>**1.**<br>**2.**<br>**3.**<br>**4.**<br>**5.** | *Ծավալը %* |
| **26.** | Ուսումնառության ռեսուրսները<br>*Հիմնական նյութերը.*<br><br>*Հիմնական առցանց և էլեկտրոնային ռեսուրսները.* | |
| **27.** | Նախապատրաստական աշխատանք և խորհրդատվություն | |

| | |
|---|---|
| | |

**Նշումներ՝ Մոդուլի/միավորի նկարագրիչների ձևաչափի օգտագործման վերաբերյալ**

Մոդուլի/միավորի նկարագրիչները հստակ սահմանում են ՄԿԾ-ի շրջանակում իրականացվող հավատարմագրված կրթական միավորի հիմնական առանձնահատկությունները: Չնայած նրան, որ բոլոր մոդուլները պետք է հաստատվեն բուհի Որակի Կառավարման գործընթացների շրջանակում, Մոդուլի/միավորի նկարագրիչները ուսանողների համար տեղեկատվության և խորհրդատվության կենսական աղբյուր են իրենց ուսումնառությանը նախորդող և ընթացիկ ժամանակահատվածում: Այսպիսով, երբ հնարավոր է, նկարագրիչները պետք է հասցեագրված լինեն «քեզ»՝ ուսանողին:

1. ***Մոդուլի/միավորի շիֆրը***

Սա մոդուլի/միավորի եզակի նույնականացման համար է, որը տեղեկատվություն է ներառում մոդուլի առարկայական ոլորտի և ուսուցման մակարդակի վերաբերյալ:

2. ***Մոդուլի/միավորի անվանումը***

Միավորի/մոդուլի ամբողջական անվանումը:

3. ***Առարկայական ոլորտը***

Սա մոդուլի/միավորի ուսուցման հիմնական բնագավառն է:

4. ***Ֆակուլտետը/բաժինը***

Այն Ֆակուլտետը և բաժինը, որին մոդուլը/միավորը պատկանում է: Անհրաժեշտ է հղում կատարել այն բաժիններին, որտեղ իրականացվում է փորձի փոխանցում (service teaching):

5. ***ՄԿԾ (-երը), որի շրջանակում մոդուլը/միավորը իրականացվում է***

Սահմանել այն ՄԿԾ-երը, որտեղ դասավանդվում է այս մոդուլը/միավորը:

6. ***Pathway(s) հոսքերը***

Անհրաժեշտ է հաշվի առնել ցանկացած պահանջ առանձնացված հոսքերի համար: Note any requirements for named pathways.

7. ***Մակարդակը***

Որակավորումների Շրջանակի առկայության պայմաններում անհրաժեշտ է սահմանել մոդուլի/միավորի համապատասխան մակարդակը: Պարտադիր չէ, որ դա լինի նույնը, ինչ ՄԿԾ-ի մակարդակը: ՄԿԾ-ի շրջանակում բորոլ տարեվերջյան մոդուլները պետք է իրականացվեն նույն ՄԿԾ-ի մակարդակում, այնինչ ավելի վաղ իրականացված մոդուլները կարող են համապատասխանել ավելի ցածր մակարդակի:

8. *Ազգային կրեդիտները*

Նկարագրել կրեդիտների ցանկացած ազգային համակարգ/շրջանակ

9. ***ECTS: Կրեդրտների կուտակման և փոխանցման Եվրոպական համակարգը***

Ներկայացրեք ազգային կրեդիտների և ECTS կրեդիտների միջև համահունչության ապահովման որևէ օրինակ: Ուսանողի ուսումնառության 20-30 ժամը, սովորաբար, հավասարվում է 1 ECTS կրեդիտի:

10. *Հիմնական կամ կամընտրական*

Հիմնական մոդուլը/միավորը պարտադիր է ՄԿԾ-ի տվյալ մակարդակում ուսանող բոլոր ուսանողների համար: Կամընտրական մոդուլը/միավորը (առկայության դեպքում) ուսանողներին հնարավորություն է ընձեռում ընտրելու կամ չընտրելու տվյալ մոդուլը/միավորը՝ ըստ իրենց հետաքրքրությունների:

11. *Մոդուլի/միավորի պահանջները* ***(ընդունելության պահանջներ, ընթացիկ պահանջներ, անհամատեղելի մոդուլներ pre-requisites, co-requisites, incompatible modules)***

Թվարկել այն մոդուլները, որոնք ընդունելության կամ ընթացիկ պահանջ են հանդիսանում ՄԿԾ-ի համար: .

12. *Ընդունելի է...*

Թվարկել բոլոր այն ՄԿԾ-երը, որոնք հաստատել են, որ տվյալ մոդուլը/միավորը ընդունելի է իրենց հաստատության համար:

13. *Բացառված համակցությունները*

Թվարկել ՄԿԾ-ի բոլոր այն մոդուլները, որոնք չեն կարող իրականացվել տվյալ մոդուլի/միավորի հետ համատեղ:

**14.** *Լսարանային ժամերը*

Ամբողջական ժամանակահատվածը (ժամերը), որի ընթացքում յուրաքանչյուր ուսանող, սովորաբար, կապի մեջ է գտնվում իր դասախոսի (-ների) հետ մոդուլի/միավորի ընթացքում: Սա ներառում է դեմ առ դեմ դասավանդման/ուսումնառության ժամերը (օրինակ՝ դասախոսություններ, սեմինարներ, աշխատաժողովներ, լաբորատոր/արհեստանոցային աշխատանք, ոլորտային/ուսումնական այցեր, անհատական պարապմունքներ/խորհրդատվություններ և այլն), և, անհրաժեշտության դեպքում,

համապատասխան առցանց/էլեկտրոնային ուսումնառության ժամերը (օրինակ՝ վեբինարներ, անհատական խորհրդատվություններ Skype-ով):

Ընդհանուր ժամերի բաշխումը պետք է ուսանողներին ներկայացնի, թե նրանք որքան ժամանակ պետք է ծախսեն հիմնական դասապրոցեսների վրա: Օրինակ՝ 20 կրեդիտից բաղկացած մոդուլում/միավորում «լսարանային ժամերը» կարող են կազմել 40 ժամ, բաշխվելով հետևյալ կեպ՝ «5 ժամ դասախոսություններ, 20 ժամ սեմինարներ, 6 ժամ ոլորտային այցեր, 5 ժամ վեբինարներ, 2 ժամ դասախոսություն Skype-ով և 2 ժամ անհատական պարապմունքներ/ խորհրդատվություններ» կամ «16 ժամ երկօրյա գիշերակացով (residential) ուսումնառություն, 20 ժամ վեբինարներ և 4 ժամ Google Hangout-ով պարապմունքներ»:

***15. Ինքնուրույն աշխատանքի ժամերը***
Սա այն ժամանակահատվածն է, որը ուսանողները պետք է ծախսեն սովերելու վրա՝ լսարանային պարապմունքներից զատ: Օրինակ՝ 160-260 ժամ 10 ECT (200-300 ժամ) կրեդիտ պարունակող մոդուլի/միավորի շրջանակում, որը ներառում է 40 լսարանային ժամ:

***Մոդուլի/միավորի տևողությունը***

Այն ժամանակահատվածը, որը ծախսվում է մոդուլի/միավորի իրականացման վրա, օրինակ 30 շաբաթ I, II և III կիսամյակների ընթացքում (PGT), կամ 15 շաբաթ II կիսամյակի ընթացքում (BA/BSc).

***16. Մասնաշենքի տեղակայումը***
Հիմնական մասնաշենքը, որտեղ իրականացվում են պլանավորված դասընթացները:

***17. Մոդուլի/միավորի համակարգողը***
Պրոֆեսորադասախոսական կազմի այն անդամը, ում վրա պաշտոնապես դրված է մոդուլի/միավորի որակի ապահովման պատասխանատվությունը՝ իրականացման, կառավարման, գնահատման և նշանակված գնահատականների որակի ապահովման համատեքստում: Այն դեպքերում, երբ նշանակված համակարգողը անկարող է իրականացնել իր դերը/կամ անհասանելի է (օրինակ՝ հետազոտական գործուղման պատճառով), կարող է նշանակվել փոխարինող համակարգող, ինչը ենթակա է հաստատման հաստատության տնօրենի կողմից:

***18. Մոդուլի/միավորի  նկարագիրը***
Ուսանողների համար մշակել մոդուլի/միավորի նկարագիրը, օրինակ՝ ինչպես է այն կապվում ՄԿԾ-ի ընդհանրական նպատակների հետ; որն է մոդուլի/միավորի հիմնական համատեքստը, ինչ տեսություններ և գաղափարներ, հակասություններ և խնդիրներ է այն ներառում, ինչ օրինակներ և հարցեր են ուսումնասիրվում մոդուլի/միավորի շրջանակում; ուսումնառության ինչ տեսակներ են կիրառվում ուսանողների կողմից; ուսումնառության արդյունքում ինչպիսի գիտական, անձնական և մասնագիտական արժեք կձևավորի ուսանողը:

***19. Օրինակելի ուսումնական ծրագիր***
Ուսումնական ծրագրի հակիրճ նկարագիր:

***20. Դասավանդում և ուսումնառություն***
Ուսանողներին ներկայացնել պլանավորված դասավանդման գործընթացների ծավալը, որում նրանք պետք է մասնակցեն (աշխատաժողովներ, սեմինարներ, պարապմունքներ, ուսումնական այցեր, վեբինարներ և այլն), ինչպես նաև մեկնաբանել, թե ինչպես են նշված գործընթացները կապվում ուսանողների՝ ինքնուրույն ուսումնառության շրջանակում կատարած աշխատանքի հետ, օրինակ՝ նախապատրաստում դասընթացների ընթացքում իրենց կարծիքի արտահայտմանը, ներկայացումների և նախագծերի պատրաստում, ընթերցանություն, լսարանային/լաբորատոր/խմբային աշխատանքներ, ձևավորող առաջադրանքներ և ամփոփիչ գնահատում, նախապատրաստում քննություններին և այլն: Ուսանողներին ուղղորդել, թե ինչպես է պետք ճիշտ օգտագործել և բաշխել իրենց ինքնուրույն աշխատանքի ժամերը, ինչը կօգնի ուսանողներին գործել ավելի արդյունավետորեն և, այսպիսով, բարձրացնել իրենց ուսումնառության որակը:

***21. ՄԿԾ-ի որ ուսումնառության արդյունքներին են համահունչ Մոդուլի/միավորի ուսումնառության արդյունքները***
Սահմանել, թե ՄԿԾ-ի որ ուսումնառության արդյունքները կծածկվեն այս մոդուլը/միավորը բարեհաջող ավարտելու դեպքում:

***22. Ուսումնառության արդյունքներ***
Ուսումնառության արդյունքները պետք է հիմնված լինեն ՄԿԾ-ի նպատակների վրա, նաև հակիրճ ցանկով ներկայացնեն հիմնական ուսումնառության կետերը, որոնք ուսանողները պետք է կարողանան ցուցաբերել ուսումնառության այս մակարդակում: Ուսանողների կողմից ուսումնառության արդյուքնների ձեռքբերումը պետք է ստուգել ամփոփիչ գնահատման միջոցով: Այսպիսով, «Ինչպե՞ս է գնահատվում» խորագիրը կրող սյունը պետք է ներկայացնի այն ամփոփիչ գնահատականը (-ները), որոնք օգտագործվել են յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի յուրացումը ստուգելու համար, օրինակ՝ «ուսումնառության արդյունք 1 – ամփոփիչ գնահատական 3» (բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքները պետք է համահունչ լինեն ՄԿԾ-ի նպատակներին՝ ներկայացված «Ուսանողների ՄԿԾ-ի Ձեռնարկում»՝ արտացոլելով, թե ինչպես է յուրաքանչյուր մոդուլը/միավորը նպաստում մեկ կամ ավելի ՄԿԾ-ի նպատակների իրականացմանը):

***23. Գնահատում և հետադարձ կապ***
*ա. Ձևավորող վարժություններ և առաջադրանքներ.*

Ուսանողներին ներկայացնել այն ձևավորող վարժություններն ու առաջադրանքները, որոնք նրանք կատարելու են: Ձևավորող վարձությունները այնպես են մշակված, որ ուսանողներին հնարավորություն ընձեռեն զարգացնելու իրենց ուսումնառության կոնկրետ ոլորտները՝ մինչ ամփոփիչ գնահատում անցնելը: Բացի նրանից, որ ձևավորող վարժությունները ուսանողներին (անհատապես կամ խմբովին) թույլ են տալիս ուղենշելու իրենց առաջընթացը, նաև պետք է մշակվեն այնպես, որ օգնեն վերջիններիս օգտագործել հետադարձ կապն ու ինքնավերլուծությունը իրենց ուսումնառության կառավարման և զարգացման գործընթացում՝ կազմելով հստակ պատկերացում, թե ինչպես կարող են բարելավել իրենց աշխատանքը/գործունեությունը:

Հետադարձ կապը կարող է լինել դասախոսներից, համակուրսեցիներից, մենթորներից, կամ արտաքին լսարանի ավելի լայն զանգվածից: Ձևավորող վարժությունները կարող են լինել բազում ձևերի, իրականացվել լսարանում կամ լսարանից դուրս, և նրանք պաշտոնապես չեն գնահատվում: Դասախոսները կարող են կիրառել ձևավորող վարժությունները՝ վերահսկելու ուսանողների ուսումնառության տեմպերն ու առաջընթացը մոդուլի/միավորի ընթացքում և ստացված արդյունքներին համապատասխանեցնել դասավանդման տեմպերն ու առանցքը:

*բ. Ամփոփիչ գնահատում.*

Ուսանողների համար մշակել մոդուլի/միավորի ամփոփիչ գնահատման հակիրճ նկարագիրը և գնահատման մոտավոր բաշխումը, օրինակ՝ «30 րոպե տևողությամբ խմբային ներկայացում սեմինարում (20%); հետազոտության թեմայով 3000 բառից կազմված ակնարկ (60%); 1 ժամ տևողությամբ բազմակի ընտրության թեստով գիտելիքի ստուգման քննություն (20%)»: Ամփոփիչ գնահատումը ուսանողի աշխատանքին տրված պաշտոնական գնահատականը/թվանշանն է, որը պետք է մշակվի (հավաքականորեն)՝ ստուգելու, թե ուսանողները որքանով են ձեռք բերել մոդուլի/միավորի բոլոր ուսումնառության արդյունքները: Նշանակված գնահատականները/ թվանշանները կներառվեն յուրաքանչյուր ուսանողի առաջադիմության վերաբերյալ Գնահատման Խորհրդի գրանցամատյանում: Ամփոփիչ գնահատումը պետք է լինի վստահելի, հուսալի և արդարացի բոլոր ուսանողների համար: Գնահատման գործընթացների թիվը, զանազանությունը, բնույթը, ժամանակացույցն ու հաճախականությունը, ինչպես նաև դրաց ուղղված հետադարձ կապը, մեծ ազդեցություն ունեն ուսանողների ուսումնառության բոլոր բնագավառների վրա:

***24.* Ուսումնառության ռեսուրսները**

*ա. Հիմնական նյութերը.*

Այն աշխատություններն են, որոնք բոլոր ուսանողները պետք է ուսումնասիրեն կամ օգտվեն մոդուլի/միավորի ընթացքում (Անհրաժեշտ է ներառել ամբողջական «Գրականության ցանկը» «Մոդուլի/միավորի Ձեռնարկում»): Հնարավորության դեպքում, հիմնական նյութերը պետք է հասանելի լինեն առցանց տիրույթում: Նյութերի հղումները պետք է արված լինեն Հարվարդի համալսարանի ոճով:

*Բ. Հիմնական առցանց և էլեկտրոնային ռեսուրսները.*

Կազմել վստահելի վեբ-կայքերի, համակարգչային ծրագրեր, վիդեո-նյութերի և այլ էլեկտրոնային ռեսուրսների ցանկը, որոնք միտված են՝ խթանելու ուսանողների ուսումնառությանը մոդուլի/միավորի ընթացքում:

***25. Նախապատրաստական աշխատանք***

Հեռանկարային և շարունակական կրթությանը հակված ուսանողները նախընտրում են իմանալ ինչպես կարելի է առավելագույնը նախապատրաստվել դասերին՝ մինչ մոդուլի սկսվելը: Անհրաժեշտ է տրամադրել խորհրդատվություն մեկ-երկու թեմաների շուրջ, ինչը ուսանողները կցանկանային կարդալ կամ անել ինքնուրույն՝ ծրագրի համար նախապատրաստվելիս:

## Մոդուլի ուսումնառության արդյունքների չափանիշներ

Չնայած նրան, որ ուսումնառության արդյունքների մշակման գործընթացը կարող է շատ ուղղաձիգ թվալ, առկա են որոշակի մարտահրավերներ, օրինակ՝

-չափից ավելի ուսումնառության արդյունքների ներառում,

-մեկ ուսումնառության արդյունքի մեջ չափազանց շատ բայերի օգտագործում,

-միևնույն բայի չափից ավել օգտագործում կամ անորոշ տերմինների կիրառում,

-այնպիսի ուսումնառության արդյունքների սահմանում, որոնք իրատեսական չեն՝ հաշվի առնելով ռեսուրսները/ժամանակը/գնահատման մոտեցումը,

-անհամապատասխանություն. երբ մոդուլի ուսումնառության արդյունքները որևէ կապ չունեն ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների հետ,

- անհամապատասխան ճանաչողական մակարդակի կիրառում:

Այս մարտահրավերները կարելի է հաղթահարել՝ ուսումնառության արդյունքների վերանայման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության արդյունքների չափանիշների հետևյալ ցանկը:

*Ուսումնառության արդյունք- ՈՒԱ*

Ակտիվ/գործող. Արդյո՞ք ՈՒԱ-ները նկարագրում են, թե ուսանողները ինչ պետք է կարողանան անել:

Գրավիչ. Արդյո՞ք ուսանողները կցանկական ձեռք բերել այդ ՈՒԱ-ները:

Հասկանալի. Արդյո՞ք ուսանողները/գործատուները կկարողանան հասկանալ այդ ՈՒԱ-ները: understand them?

Համահունչ.Արդյո՞ք օգտագործված բայերը համահունչ են ուսումնառության տվյալ մակարդակին և տիրույթին:

Հասանելի/իրատեսական. Արդյո՞ք կկարողանա ուսանողների մեծամասնությունը ձեռք բերել ՈՒԱ-ները՝ գործադրելով խելամիտ ջանքեր:

Գնահատելի. Արդյո՞ք հնարավոր է ստուգել՝ ՈՒԱ-ները ձեռք են բերվել, թե ոչ:

Համապատասխանեցված. Արդյո՞ք ՈՒԱ-ները համապատասխանում են դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացներին:

Տեսանելի. Արդյո՞ք ՈՒԱ-ները ներկայացված են ուսանողներին:

(Ադապտացում Բաումից, 2009)

**Մոդուլի կառուցողական համապատասխանեցման ձևաչափ**

| Նախանշված ՈՒԱ-ներ | Գնահատում | Դասավանդում և ուսումնառություն |
| --- | --- | --- |
| Մոդուլի բարեհաջող ավարտի դեպքում ուսանողը պետք է կարողանա. | Շարունակական գնահատում %<br>Ավարտական քննության ձևաչափ % | Ուսանողները ի՞նչ պետք է անեն՝ սովորելու համար |
| ՈՒԱ 1 | | |
| ՈՒԱ 2 | | |
| ՈՒԱ 3 | | |
| ՈՒԱ 4 | | |
| ՈՒԱ 5 | | |
| ՈՒԱ 6 | | |
| ՈՒԱ 7 | | |
| ՈՒԱ 8 | | |

## ՀԱՎԵԼՎԱԾ 6- ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (Փաթեթ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԿԾ-Ի ՆԿԱՐԱԳԻՐԸ (Բակալավրի և Մագիստրոսի աստիճանների համար առանձին-առանձին)

- Նպատակ
- Խնդիրներ
- Որակավորում
- Ուսուցման ձև
- Տևողություն

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

- Պահանջներ
- Գնահատում
- Չափանիշեր

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- գիտելիք
- հմտություն
- կարողություն

ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

- Գնահատման մեթոդներ
- Գնահատման սանդղակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
(Բակալավրի և Մագիստրոսիուսումնական ծրագրերի համար)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
ԹՈՂԱՐԿՈՂ ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

## ՀԱՎԵԼՎԱԾ 7- ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

**Դասավանդման ձևերը**

Դասավանդման հիմնական ձևերն են՝ դասախոսություններ, սեմինարներ, լաբորատոր և գործնական (ձեռքից ձեռք) վերապատրաստում; ոլորտային ուսումնասիրություն; կուրսային աշխատանք/նախագիծ; Բակալավրի, Մագիստրոսի և Դոկտորական Թեզեր; խորհրդատվություն և այլն:

**Դասախոսությունը** մի գործընթաց է, որը ներգրավում է թե՛ դասախոսին, թե՛ ուսանողին՝ օգնելու վերջինիս ընկալելու դասավանդվող առարկայի հիմնական հասկացությունները: Այն պահանջում է նյութի ստեղծագործ և կենդանի մատուցում՝ շեշտադրելով հիմնական հասկացությունները, սահմանումները, անվանումները և ենթադրությունները, և ապահովում է հիմնական հասկացությունների գիտականորեն և տրամաբանորեն հաստատուն ընկալումը: Տեսողական միջոցները/հնարքները կօգնեն բացատրել դասախոսության միջոցով փոխանցվող գաղափարը:

Դասախոսության ժամանակ ուսումնասիրված նյութը խթանում է ուսանողի գիտելիքի ամբողջական համակարգի ձևավորմանը վերջինիս **անհատական աշխատանքի** միջոցով: Անհրաժեշտ է խթանել ուսանողներին՝ սովորել ինքնուրույն, ինչը ինքնուրույն մտածողության, վերլուծության և եզրահանգման հիմքն է:

Ուսանողների կողմից դասախոսության ժամանակ մատուցված տեսական նյութի և անհատական ուսուցման սեմինարների ժամանակ ստացված տեղեկատվության յուրացման համար դասավանդման շատ կարևոր ձևեր են լաբորատոր և գործնական վերապատրաստումները:

**Սեմինարների** նպատակն է ուսանողներին հնարավորություն ընձեռել՝ խորացնելու դասախոսության/կամ անհատական ուսուցման շրջանակում ուսումնասիրված թեմաների շուրջ իրենց գիտելիքները, գտնելու և ընկալելու լրացուցիչ տեղեկատվություն, պատրաստելու ներկայացումներ, գրելու շարադրություններ և այլն: Սեմինարի ժամանակ զեկույցները ներկայացվում և քննարկվում են, ինչպես նաև դուրս են բերվում համապատասխան դատողությունները: Սեմինարի ղեկավարը համակարգում է այս գործընթացները:

**Լաբորատոր վերապատրաստումն** ավելի ակներև է և օգնում է ուսանողներին ավելի լավ ընկալել համապատասխան գործընթացները և երևույթները փորձեր կատարելիս: Լաբորատոր վերապատրաստման ժամանակ ուսանողը սովորում է ինչպես օգտագործել, կարգավորել և վերանորոգել լաբորատոր սարքավորումները: Փորձարարական-վերապատրաստողական լաբորատորիաներում ձեռք բերված հմտությունները օգնում են ավելի լավ հասկանալ դասախոսության և անհատական ուսուցման ժամանակ ուսումնասիրված տեսական նյութերը:

**Պրակտիկ վերապատրաստման** նպատակը տեսական նյութի աստիճանական յուրացումն է՝ լուծելով կոնկրետ խնդիրներ. սա անհատական հմտությունների ձևավորման հիմքն է: Դասախոսը պետք է հատուկ ուշադրություն դարձնի խնդիրների լուծման մեթոդներին, նախագծերի, էսքիզների և սխեմաների պատրաստմանը, հաշվարկման համապատասխան տեխնիկաների կիրառմանը:

**Ոլորտի ուսումնասիրությունը** օգնում է ուսանողներին խորացնել և ամրապնդել ձեռք բերած գիտելիքները:Այն ձևավորում է տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև խնդիրների լուծման ժամանակ օգտագործելու ուսումնասիրության առարկային համահունչ մեթոդներ:

**Կուրսային աշխատանքի/նախագծի** իրականացումը ստեղծագործական գործընթաց է: Այն ներառում է և՛ տեսական, և՛ գործնական մասը: Նախագծերը, իրականում, ուսանողի անհատական աշխատանքի առաջին արդյունքն են՝ չնայած որ իրականացվում են դասախոսի ղեկավարման ներքո: **Նախագծի մշակման և, հաջորդիվ, ներկայացման** ժամանակ ուսանողը կիրառում է խնդիրների լուծման հետ կապված գիտելիքներն ու հմտությունները: Դասավանդման այս ձևը մեծացնում է ուսանողի մոտիվացումը և պատասխանատվությունը: Նախագծի վրա աշխատանքը ներառում է պլանավորման, հետազոտության, պրակտիկ գործունեության և արդյունքների ներկայացման փուլերը, որոնք համապատասխանում են առանձնացված խնդրին: Նախագիծը համարվում է ավարտված, եթե արդյունքները ներկայացվում են հստակ, համոզիչ և ստույգ կերպով: Նախագծերը արժեքավոր են, քանի որ կարող են իրականացվել անհատապես, զույգերով և խմբով, ինչպես նաև մեկ կամ ավելի առարկաների շրջանակում (առարկաների ինտեգրում), և ավարտին ներկայացվում են ավելի մեծ լսարանի:

**Թեզը** (Բակալավրի, Մագիստրոսի և Դոկտորական) դասավանդման գործընթացի վերջին փուլն է բուհում: Դրա նպատակն է համակարգել տեսական և գործնական գիտելիքները, որոնք ուսանողները ստացել են, ինչպես նաև տալ կոնկրետ գիտական, տեխնիկական, տնտեսական կամ

արդյունաբերական խնդրի հիմնավորված լուծումը: Թեզը պետք է արտացոլի հետազոտական մեթոդներին տիրապետելու և առաջադրված հետազոտության խնդիրների շուրջ փորձեր կատարելու ունակության մակարդակը, ինչպես նաև ուսանողի պատրաստակամությունը՝ աշխատելու ինքնուրույն իր ապագա մասնագիտության ոլորտում: Թեզի իրականացումը ղեկավարում է որևէ փորձառու դասախոս:

**Խորհրդատվությունների** ժամանակ դասախոսը պետք է օգնի ուսանողներին՝ ձեռք բերել ինքնուրույն աշխատանքի հմտություններ, սովորել՝ ինչպես ճիշտ օգտագործել հետազոտության ռեսուրսները՝ լուծելու իրենց անհատական աշխատանքի ընթացքում ծառացող խնդիրները:

**Դասավանդման և ուսումնառության մեթոդները**

Կատարելով ուսանողակենտրոն ուսուցման և ուսանողների ուսումնառության գործընթացում միջնորդի իրենց դերը՝ դասախոսները համակցում են տարբեր մեթոդներ, որոնք հաճախ լրացնում են միմյանց՝ իրականացնելով կոնկրետ նպատակ:

Ամենատարածված դասավանդման և ուսումնառության մեթոդները, ինչպես նաև նրանց սահմանումները ներկայացված են ստորև: Այնուամենայնիվ, ցանկը ավարտուն/սպառիչ չէ:

- **Քննարկում/բանավեճ.** Սա ինտերակտիվ ուսուցման ամենատարածված տեսակն է, որը մեծապես բարձրացնում է ուսանողների ներգրավման և գործունեության որակը: Քննարկումը կարող է վերաճել փաստարկման՝ զարգացնելով ուսանողների՝ փաստարկման և սեփական գաղափարները հիմնավորելու հմտությունները:
- **Համատեղ ուսուցումը** այն ուսուցման ռազմավարությունն է, որի ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ ոչ միայն պարտավորված է ինքնուրույն սովորել թեման, այլ նաև աջակցել իր դասընկերներին՝ այն ավելի լավ յուրացնելու: Խմբի յուրաքանչյուր անդամ աշխատում է խնդրի վրա, մինչև որ բոլորը յուրացնեն նյութը:
- **Համագործակցային աշխատանքը** ենթադրում է ուսանողների բաշխում առանձին խմբերի և յուրաքանչյուր խմբի իր սեփական առաջադրանքի հանձնարարում: Խմբի անդամներն աշխատում են իրենց հանձնարարված խնդրի վրա անհատապես և միևնույն ժամանակ կիսում են կարծիքներ խմբի մնացած անդամների հետ՝ որոշակիորեն վերափոխելով իրենց խնդիրներն ու գործառույթները: Այս ռազմավարությունը երաշխավորում է ուսանողի առավելագույն ներգրավումը ուսումնառության գործընթացում:

- **Խնդրի վրա հիմնված ուսուցումը** մի մեթոդ է, որը կիրառում է կոնկրետ խնդիր՝ որպես նոր գիտելիքի ձեռքբերման և յուրացման նախնական փուլ:
- **Էվրիստիկական մեթոդը** հիմնված է տվյալ խնդրի քայլ-առ-քայլ լուծման վրա: Սա իրականացվում է դասավանդման գործընթացում փաստերի անկախ ամրագրման և դրանց միջև կապերի հաստատման միջոցով:
- **Որոշակի դեպքի ուսումնասիրություն.** Դասախոսը ուսանողների հետ քննարկում է կոնկրետ դեպք, և նրանք խորապես ուսումնասիրում են խնդիրը: Օրինակ՝ ճարտարագիտական անվտանգության ոլորտում կարելի է ծավալել քննարկում կոնկրետ վթարի կամ աղետի վերաբերյալ, կամ քաղաքագիտության ոլորտում կարող է լինել կոնկրետ խնդրահարույց իրավիճակի ուսումնասիրություն՝ Ղարաբաղյան հիմնահարցը (հայ-ադրբեջանական հակամարտություն), կարող է նաև լինել կլինիկական դեպք՝ իրական կամ ենթադրական հիվանդով:
- **Մտագրոհ**– այս մեթոդը ենթադրում է հնարավորինս շատ և ռադիկալ տարբեր գաղափարների և կարծիքների կազմում և ներկայացում տրված թեմայի վերաբերյալ՝ այսպիսով ստեղծելով խնդրի հանդեպ ստեղծագործական մոտեցման ձևավորման հնարավորություն: Այս մեթոդը արդյունավետ է ուսանողների մեծ խմբում, որտեղ ուսանողները սահմանում են խնդիրը/հարցը, թվարկվում են ուսանողների պատկերացումները խնդրի վերաբերյալ (հիմնականում գրառվում են գրատախտակին) առանց որևէ քննադատության: Երբ բոլորը ներկայացնում են իրենց նախնական մտքերը, սահմանվում են տվյալ գաղափարի և հետազոտության նպատակի միջև համահունչության գնահատման չափանիշները, և բացառման սկզբունքով ընտրվում են առավել համապատասխան գաղափարները՝ տվյալ խնդրի լուծման լավագույն գաղափարը դուրս բերելու համար:
- **Դերային խաղեր և սիմուլյացիա/մոդելավորում.** Նախապես մշակված սցենարի համապատասխան խաղերը ուսանողներին հնարավորություն են ընձեռում գնահատելու խնդիրը տարբեր դիտանկյուններից: Դրանք օգնում են ուսանողներին ձևավորել այլընտրանքային տեսակետ: Այսպիսի խաղերը, ինչպես նաև քննարկումները օգնում են ուսանողներին ձևավորել իրենց գաղափարները ինքնուրույն արտահայտելու և քննարկումներին մասնակցելու հմտություններ:

- Ցուցադրման մեթոդը ենթադրում է տեղեկատվության ներկայացում տեսողական միջոցներով/հնարքներով՝ ցանկալի արդյունքին հասնելու նպատակով: Հաճախ խորհուրդ է տրվում նյութը ներկայացնել միաժամանակ տեսողական և լսողական միջոցներով՝ և՛ դասախոսի, և՛ ուսանողի կողմից: Այս մեթոդը արտացոլում է հարցի/խնդրի էությունը:
- **Ինդուկտիվ մեթոդը** սահմանում է ցանկացած գիտելիքի փոխանցման այնպիսի ձև, որի դեպքում ուսումնառության գործընթացում մտքերի հոսքը ուղղվում է փաստերից դեպի ընդհանրացում, այսինքն՝ նյութը ներկայացնելիս գործընթացը ծավալվում է մասնավորից դեպի ընդհանրականը:
- **Դեդուկտիվ մեթոդը** սահմանում է ցանկացած գիտելիքի փոխանցման այնպիսի ձև, որի շրջանակում իրականացվում է ընդհանրական գիտելիքների հիման վրա նոր գիտելիքների բացահայտման տրամաբանական գործընթաց, այսինքն՝ գործընթացը ծավալվում է ընդհանրականից դեպի մասնավորը:
- **Վերլուծական մեթոդը** օգնում է բաժանել ամբողջական դասավանդման նյութը բաղկացուցիչ մասերի: Այս ձևով հեշտացվում է տրված բարդ խնդրի շրջանակում առանձին խնդիրների մանրակրկիտ մեկնաբանման գործընթացը:
- **Սինթեզի մեթոդը** ենթադրում է մի քանի առանձին խնդիրներից ամբողջական խնդրի ձևավորում: Այս մեթոդը օգնում է ուսանողներին զարգացնել խնդիրը որպես ամբողջություն տեսնելու/դիտարկելու կարողությունը:
- **Խոսքային կամ բանավոր մեթոդը** ներառում է դասախոսությունները, պատմողական դասընթացները, հաղորդակցությունը և այլն: Գործընթացի ընթացքում դասախոսը բացատրում է նյութը բանավոր ձևով, և ուսանողները յուրացնում և սովորում են նյութը՝ ընկալելով և մտապահելով:
- **Գրավոր մեթոդը** ներառում է գործունեության հետևյալ ձևերի կիրառությունը՝ արտագրություն, նշումներ, թեզեր, շարադրություններ և այլն:

  **Բացատրական մեթոդը** հիմնված է դասախոսի ներկայացրած կոնկրետ օրինակների վրա, որոնց մանրակրկիտ վերլուծությունը կատարվում է տրված թեմայի շրջանակում:
- **Գործողություններին միտված դասավանդումը** ներառում է դասավանդման գործընթացում դասախոսի և ուսանողի ակտիվ ներգրավում՝ կատարելով տեսական նյութի գործնական մեկնաբանություն:

- **Էլեկտրոնային ուսուցումը** ներառում է դասավանդման գործընթացում Ինտերնետի և մամուլի տարբեր միջոցների կիրառում: Այն ընդգրկում է դասավանդման գործընթացի բոլոր բաղադրիչները (նպատակը, բովանդակությունը, մեթոդները, միջոցները և այլն), նշված բաղադրիչներն իրականացվում են հատուկ միջոցներով: Առկա է էլեկտրոնային ուսուցման երեք տեսակ.
   - Ամբողջ օրով ուսուցում; երբ դասավանդման գործընթացը տեղի է ունենում այն ժամերին, երբ դասախոսները և ուսանողները առցանց կապի մեջ են գտնվում, և դասավանդման նյութը մատուցվում է էլեկտրոնային դասընթացի միջոցով;
   - Հեռավար ուսուցում, որը ներառում է դասավանդման գործընթացի իրականացում՝ առանց դասախոսի ներկայության: Դասընթացը իրականացվում է հեռավար տիրույթում, էլեկտրոնային ձևաչափով:
   - Հիբրիդային (Ամբողջ օրով/Հեռավար ուսուցում) դասավանդում, որը հիմնականում իրականացվում է հեռավար տիրույթում, բայց դրա որոշակի մաս մատուցվում է առցանց հաղորդակցման/կապի մեջ գտնվելու ժամերին:

# ՀԱՎԵԼՎԱԾ 8- ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## Assessment methods and descriptions

Assessment types for learning, as learning, and of learning




The Higher Education Academy


**References**

QAA (2006) Code of Practice for the Assurance of Academic Quality and Standards in Higher Education, Gloucester: Quality Assurance Agency for Higher Education.

Brown, S., Rust, C., Gibbs, G. (1994) Strategies for Diversifying Assessment Oxford Centre for Staff Development, UK.

# Գնահատման մեթոդները և նկարագրությունները

գնահատում՝ սովորելու համար , գնահատումը՝ իբրև ուսուցում, ուսումնառության գնահատում

*Assessment for learning, as learning, and of learning*

| | | | |
|---|---|---|---|
| **ԲԿՏ Գործիքակազմի Ծրագիր, LEI 2012** | **Քրիս Վիլսոն** | **LTA Խումբ** | |
| **Կուրսային աշխատանք** | Գնահատված աշխատանքի ընդհանուր նկարագիր, որը ենթակա է փոխանցման կամ վերարտադրման: Չնայած, որ կուրսային աշխատանքները հիմնականում կապվում են տպագիր խոսքի հետ (արտացոլելով ավելի լայն մասնագիտական ոլորտում գերակայող համաձայնագրերը ), այնուամենայնիվ, դրանց գնահատման գործընթացում ավելի տարածում են գտնում գրաֆիկական և վիդեոգրաֆիկական միջոցները: Կուրսային աշխատանքը, ընդհանուր առմամբ, երկայնական է և մշակվում է ուսումնառության ժամանակ դասախոսի ուղղորդմամբ՝ երաշխավորելով շարունակական ձևավորող հետադարձ կապ և ապա միայն աշխատանքի վերջնական հանձնում ամփոփիչ գնահատման համար: | | |
| *Հատկորոշում* | *Նկարագրիչ* | *Առավելություններ* | *Դատողություններ* |
| Զեկույց | Առարկայի ուսումնասիրություն՝ կարևորելով լրացուցիչ գրականությունը և կատարելով տրված թեմայի համատեքստի հետազոտություն: | Հարմար է՝ գնահատելու առաջադրված փաստարկները , անդրադարձը, տեղեկատվական գրագիտությունը, դատողություններն ու դրանց արտահայտումը: | Գիտելիքների և փաստերի մակերեսային ուսուցման հնարավորություն՝ գրագողության ռիսկը և գնահատված աշխատանքի մշակման միտումները հասցնելով բացառիկ կամ անհատական դեպքերի: |
| Գրականության/հետազոտական աշխատանքների ուսումնասիրություն | Նախատեսված գիտական նյութերի ուսումնասիրություն, որոնք պետք է վերլուծել, գնահատել համատեքստը, գաղափարները, հետազոտական մեթոդները, ինչպես նաև ապահովել հետազոտական փաստարկների փոխկապակցումը: | Խթանում է երկրորդային հետազոտություններում ներգրավման մակարդակի խորացմանը: Կենտրոնացված և ստանդարտացված ձևաչափը խթանում է գնահատման գործընթացի հետևողականությունը: | Գնահատման գործընթացի նախապատրաստման, ինչպես նաև գնահատման մեթոդների առանձնացված մշակման գործընթացում «պատճենում/copy-paste» մեթոդով խնբագրման հնարավորություն: |
| Շարադրություն/Էսսե | Հնաձնարարված առաջադրանք, որին ուսանողը պետք է մասնակցի և պատրաստի «շոշափելի» գրավոր աշխատանք՝ շարադրված իր սեփական բառերով: | Ճկուն է և կարող է անհատականացվել՝ ընձեռելով ստանդարտ կամ այլընտրանքային վերնագիր ընտրելու հնարավորություն: Կենտրոնացված համատեքստ՝կրթական ոլորտում հղումների տեղադրման տեխնիկայի կիրառման համար: | Դժվար է ուղղակիորեն զուգահեռներ անցկացնել համապատասխան կրթական մեթոդների հետ: Իրականում, չափազանց ակադեմիական ձևաչափի է և բարդացնում է արդյունավետ ուսումնառության կիրառումը: փոխկապակցել ճանաչելի մասնագիտական |
| Դիսերտացիա/ատենախոսություն | Ընդլայնված աշխատություն, որը սահմանվում է որպես առաջնային կամ երկրորդային հետազոտություն: Թեմայի ընտրությունը հաճախ կազմում է նշված առաջադրանքի էական մաս: Հիմնականում կիրառվում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ավարտական շրջանում/փուլում: | Սերտորեն համահունչ է ակադեմիական կոնվենցիաներին և մասնագիտական հետազոտության ոլորտի պահանջներին: Ընձեռում է անհատական ուսումնառության և նորարարությունների իրականացման բաց հնարավորություն: | Որպես կանոն, շատ տեքստային է և հնարավորթյուն է ընձեռում կատարել հետազոտություն և հարցումներ, ինչն իրականացվում է գրելու և տեքստի խմբագրման միջոցով: |

| | | | |
|---|---|---|---|
| Փորձնական թերթի հոդված | Տեղեկատվության ուսումնասիրության, հիմնական տվյալների սահմանման/դուրսբերման գործընթացում լրագրողական մոտեցման կիրառում: | Հասանելի և անհատականացման հնարավորություն ընձեռող ձևաչափ: Խմբային աշխատանքի համադրման հնարավորություն՝ ապահվելով համակուրսեցիների կողմից վերջնական արդյունքի գնահատում: | Ոչ պաշտոնական և քննադատությունից զերծ միջավայրի ապահովում: |
| Նորությունների փորձնական հեռարձակում | Տեսախցիկի առջև հետազոտական նյութի ներկայացում, որը պահանջում է խմբագրում, բանավոր խոսքի ճարտարություն և արտահայտման հստակություն: | Դինամիկ ձևաչափ, որը հնարավորություն է ընձեռում արդյունքներն ավելի լայն շրջանակում տարածելու: | Տեխնիկական առումով բարդ է և պահանջում է ռեսուրսների կիրառում: |
| Ամսագրի հոդված | Ունենալով հստակ խմբագրման և ֆորմատավորման ուղենիշներ՝ ամսագրի հոդվածները լավ ձևավորող կամ ամփոփիչ գնահատման գործիք են: | Ներգրավող և գրավիչ ձևաչափ:<br>Ընձեռում է հնարավորություն՝ զարգացնելու գիտական գրավոր խոսքի տեխնիկա: | Իրականում ենթադրում է չափազանց կարգադրողական/հրահանգչական ձևաչափ: |
| Մատենագիտություն/ գրականության ցանկի կազմում/<br>Annotated bibliography | Երկրորդային հետազոտության իրականացման կամ գրականության ուսումնասիրման գործընթացի հիմնավորման ձևաչափ: Ուսումնասիրված համապատասխան գրականության հակիրճ տեքստային ամփոփում: | Սահմանված նյութերի երկրերդային ուսումնասիրության գնահատման ամենաարդյունավետ ձևաչափ: | Գիտելիքի և ընկալման սինթեզման սահմանափակ շրջանակ: |
| Գրականության ուսումնասիրություն | Երկրորդային հետազոտական ծրագրերի պաշտոնական ձևաչափ: Այն, որպես կանոն, կապվում է կոնկրետ թեմաների և ոչ թե սահմանված տեքստերի հետ: | Ճկունություն և անհատականացման հնարավորության ընձեռում: | Որոշ առումով կենտրոնացված է տեքստի վրա՝ շեշտը առավելապես դնելով գրառման և խմբագրման, այլ ոչ սինթեզման կամ ընկալման գործընթացների վրա: |
| Հետազոտական պաստառ | Մեկ էջից կազմված պաստառի պատրաստում, որը հասանելի ձևով կներկայացնի բարդ հետազոտական տվյալները: | Գաղափարների արտացոլման և տարբեր ոլորտներում գիտելիքի և տեղեկատվության ուսումնասիրման հնարավորություն:<br>Արդյունքները հնարավոր է տարածել: | Լրացուցիչ մշակման, տեսողական գրագիտության, մասնագետի՝ ծրագրային ապահովման գիտելիքների և հմտությունների զարգացման հնարավորություն: |
| Բլոգ կամ վիքի | Առցանց կուրսային աշխատանքների գնահատում՝ մշակված աստիճանական կամ համագործակցային եղանակով: Ընդհանուր առմամբ, ավելի պակաս պաշտոնական է, քան ավանդական կրթական գրավոր առաջադրանքները: | Վիքի էջերը կարող են մշակվել համագործակցային տարբերակով և խթանել խմբային աշխատանքին: Բլոգերի բաց ձևաչափը, ինչպես նաև մեկնաբանություններ անելու և պատասխան տրամադրելու համապատասխան շրջանակը խրախուսում է կենտրոնացված ջանքերի գործադրումը: | Ուսանողների կատարած աշխատանքի բաց ձևաչափը կարող է էմոցիոնալ առումով բարդ լինեն սովորողների համար: |
| Փորձնական հետազոտության ֆինանսավորման հայտ | Առաջնորդվելով ֆինանսավորման որոշակի ուղենիշներով, սովորողները փոխանցում են իրենց հետազոտական գաղափարները տրված գնահատման շրջանակի միջոցով: | Խրախուսում է սովորողների ընկալումը և կարող է օգնել՝ չափելու ուսանողների նորարությունն ու գնահատումը: | Իրականում, բացահայտ կերպով նմանակված ուսումնառության փորձառություն է: |
| Լաբորատոր զեկույց | Լաբորատոր հետազոտական գործունեության փաստաթղթագրված զեկույց: | Խթանում է քննադատական մտածողությունն ու գնահատումը, ինչպես նաև ֆորմալ ձևակերպում է պլանավորման և հետազոտական մեթոդների ադապտացման գործընթացը: | Լաբորատոր զեկույցների մշակման ներուժ՝ ծառայելով որպես շեղող հանգամանք փորձարկման գործընթացում: |
| Մշակված հանրագիտարանային նյութեր<br>Devised encyclopedia entry | Բարդ հասկացությունների, գաղափարների կամ տեսությունների հակիրճ սահմանումների և բացատրությունների մշակում: | Խթանում է լեզվական հմտությունների, տեքստերի խմբագրման և հակիրճ արտահայտման կարողությունների զարգացումը: Շեշտադրումը կենտրոնացնում է հիմնական կետերի վրա: | Իրականում չափից ավելի կենտրոնանում է տեքստի, քան հայեցակարգերի և գաղափարների վրա: |
| Քննադատական ակնարկ | Գրականության ուսումնասիրություն՝ հստակ շեշտադրելով խնդրահարույց հայեցակարգերը, | Խթանում է դեբատները և հայեցակարգերի և գաղափարների քննադատությունը: Կարող է նպաստել | Քննադատական մտածողության արդյունավետ խթանումը կարող է բարդ լինել՝ առանց |

| | | | |
|---|---|---|---|
| | գաղափարները և տեսությունները: | վստահության և քննադատական մտածողության զարգացմանը: | քննադատության համար բաց հստակ աղբյուրների: |
| Խնդիրների լուծում | Սահմանված խնդիրների դիտարկման և խնդիրների հանգուցալուծման խելամիտ տարբերակների մշակման բաց հնարավորություն: | Կարող է խթանել լայնածավալ մտածողությանն ու նորարարություններին: Տալիս է ադապտացման հնարավորություն՝ կախված թեմայի համատեքստից: | Լայնածավալ մտածողության ու նորարարությունների խթանումը կարող է բարդ լինել: |
| Անհատական զարգացման ծրագիր | Համակարգված պլանի մշակում՝ միտված գիտելիքների և հմտությունների զարգացմանը: | Կարող է խթանել ավելի կերտրոնացված պլանավորումը և ուսանողի առաջընթացի և ձեռքբերումների հետագա ընկալումը: | Պլանավորման ներուժ՝ ուղղված ավելի վերացական ու պարզունակ դառնալուն: |
| Ռեֆլեկտիվ օրագիր | Որպես կանոն մշակվում է բլոգի ձևաչափով, ռեֆլեկտիվ էջեր՝ միտված ուսումնասիրության տվյալ ոլորտի զարգացմանը: | Լավ համատեքստ է՝ մշակելու ուսումնառության ավելի ռեֆլեկտիվ մեթեդներ: | Ոչ պաշտոնական և քննադատությունից զերծ միջավայրի ներուժ: |
| Ծրագիր | Բաց, հաճախ սովորողի կողմից ընտրված ուսումնասիրության համատեքստ, որը պահանջում է երկարաժամկետ պլանավորում և իրականացում: Արդյունքը կարող է լինել որոշակի տեքստը, գործնական արտեֆակտը, շնորհանդեսը և այլն: | Կարող է գիանատել ուսանողների ստեղծագործական և նորարարական գաղափարները, որոշակի առարկայում իրենց ունեցած ընկալումը փոխակերպելով՝ լուծել այլընտրանքային խնդիրներ: | Գնահատվող աշխատանքի մշակման ներուժ՝ անհատական մշակման դեպքում ընձեռելով մեկուսացման հնարավորություն, խմբային աշխատանքի դեպքում՝ մշակելով փոխզիջումների վրա կառուցված թիմային ծրագիր: |
| **Գործնական գնահատում** | Ոչ-տեքստային գնահատվող աշխատանքի ընդհանուր նկարագիր, որը ներառում է ավելի շատ ֆիզիկական գործընթացներ՝ հանգեցնելով իրադարձության կամ արտեֆակտի վրա հիմնված արդյունքների: | | |
| *Հատկորոշում* | *Նկարագրիչ* | *Առավելություններ* | *Դատողություններ* |
| Անհատական ներկայացում | Անհատական ներկայացում՝ նյութական միջոցների կիրառմամբ՝ արտացոլելու գիտելիքները, ընկալում ն ու հասկացողությունը: | Էմոցիոնալ առումով բարդ ձևաչափ, որը պահանջում է խորքային ուսումնառություն ու փոխանցելի հմտությունների զարգացումը, ինչպես նաև խթանում է դրանց: | Որոշ ուսանողների համար կարող է լինել շատ բարդ և առաջացնել մեծ անհանգստություն: |
| Խմբային ներկայացում | Խմբով իրականացված ծրագրի արդյունքների կամ հետազոտական աշխատանքի ներկայացում: | Ավելի դինամիկ և ինտերակտիվ է, և կարող է խթանել միասնական ուսումնառությանը: | Կարող է լինել օգտակար միջոց՝ նվազեցնելու անհատական անհանգստությունը կապված ներկայացման հետ: |
| Design pitch | Տվյալ հայեցակարգի ներկայացում մասնագիտական դիտանկյունից՝ սահմանված համառոտագրի համատեքստում: | Համապատասխանում է մասնագիտական ոլորտին և հնարավորություն է տալիս ձևավորելու փոխանցելի հմտություններ: Արդյունաբերական գործընթկերների կողմից ներգրավման ներուժ: | Լոգիստիկայի տեսանկյունից կարող է բարդ լինել մշակել գնահատման համատեքստ՝ վերցված «իրական կյանքից»: |
| Ոլորտային աշխատանք | Գնահատվող աշխատանք՝ կենտրոնացած դինամիկ, արտաքին ոլորտային աշխատանքի վրա: | Դինամիկ և ներգրավող ուսումնառություն տարբեր համատեքստերում և տիրույթներում: | Լոգիստիկայի տեսանկյունից բարդ և կազմակերպչական խնդիրներ: |
| Դիտարկման զեկույց | Ինչպես ազգագրական ուսումնասիրությունների ձևերը, դիտարկման զեկույցները փաստաթղթավորում են որոշակի հետազոտական գործողություններ: | Կարող է խթանել ներգրավման ավելի լայն մակարդակ դիտարկվող հետազոտական միջոցառումներում և գործողություններում: | Դիտարկման փուլերի ժամանակ կատարվող փաստաթղթավորումը կարող է զայրացնող լինել: |
| Դերային խաղի սիմուլյացիա | Տրված ուսումնական սցենարի սիմուլյացիա և գաղափարների նախագծման հնարավորություն: | Շատ դինամիկ է: Խրախուսում է խորքային ուսումնառությունը: | Սիմուլյացիան, իմպրովիզացիան և ավելի թատերական ձևաչափերը կարող են բարդ լինել որոշ սովորողների համար: Կարող է ավելի հարմար լինել որոշակի առարկաների համար: |
| Ցուցահանդես կամ ցուցադրություն | Ավելի հաճախ կապվում է արվեստի ուղղվածությամբ առարկաների հետ, բայց հարմար է նաև շատ այլ առարկաների համար, գործնական արդյունքները ներկայացվում կամ ցուցադրվում են ավելի լայն գնահատանքի համար: | Գերազանց համատեքստ է արդյունքների տարածման և քննադատության շրջանակի լայնացման համար: | Տրամաբանական տեսանկյունից կարող է բարդ լինել, սակայն տեխնոլոգիաները ավել շատ վիրտուալ մոտեցումների հնարավորություն են ստեղծում: |
| Ստեղծագործական պորտֆոլիո | Ավելի հաճախ կապվելով արվեստի ուղղվածությամբ առարկաների հետ՝ պորտֆոլիոյի | Մեծապես անձնականացվող և փոխանցելի արդյունքներ: Մեծապես ադապտացվող և ճկուն | Մեծապես փոփոխական արդյունքների ներուժ, ինչը համալրում է ամփոփիչ գնահատումը: |

| | | | |
|---|---|---|---|
| | հետ կապված աշխատանքները համախմբում են սահմանված համառոտագրի շրջանակում մշակված համալիր աշխատանքը: | ձևաչափ: | |
| Ներկայացում | Ավելի հաճախ կապվելով արվեստի ուղղվածությամբ առարկաների հետ՝ ներկայացման միջոցառումները ստուգում են սովորողի ունակությունը՝ կիրառելու ձեռքբերված տեխնիկական հմտությունները՝ լսարանի ազդեցության և պաշտոնական գնահատման պայմաններում: | Ուղղակիորեն համապատասխանում է մասնագիտական համատեքստին և ուսումնառության մոտիվացիայի թիրախային աղբյուր է: | Կարող է բարդ լինել, եթե չիրականացվի անհրաժեշտ արտատպման մեխանիզմների և նախապատրաստական տեխնիկաների մշակում: |
| Տեղակայում մասնագիտական ոլորտում | Պաշտոնական տեղակայում որոշակի մասնագիտական համատեքստում՝ համապատասխան ուղղորդման և վերահսկման պայմաններում: | Աշխատանքային փորձի զարգացման և աշխատանքի տեղավորման շանսերի մեծացման գերազանց հնարավորություն: | Դժվար է կազմակերպես մեծ լսարաններում, ուսումնառության կառավարումը կարող է լինել բարդ լոգիստիկայի տեսանկյունից: |
| Փորձնական հարցազրույց | Փորձնական հարցազրույցի կազմակերպում՝ կապված կոնկրետ աշխատանքի, արդյունաբերական դերի և այլ հնարավորությունների հետ: | Գերազանց համատեքստ փոխանցելի հմտությունների զարգացման համար: | Սիմուլյացիան կարող է հանգեցնել մակերեսային ներգրավման: |
| **Քննություն** | Կարճ ժամկետներում անհատական գնահատման հակիրճ նկարագիր, ինչը ենթադրում է ժամանակային սահմանափակում: Այն դեպքում, երբ ավանդական թղթային քննությունները և բազմակի ընտրության թեստերը շատ կարևոր են՝ գնահատման արդյունավետությունն ու արդյունքների հետևողականությունն ապահովելու հարցում, կան քննության գնահատման բազմաթիվ այլ ձևեր: | | |
| *Հատկորոշում* | *Նկարագրիչ* | *Առավելություններ* | *Դատողություններ* |
| Փակ գիրք | Քննության ավանդական մեթոդ, որը պահանջում է փաստերի և տեղեկատվության արտացոլում, ինչպես նաև գիտելիքի որոշակի սինեզում: | Գնահատման արդարություն և խմբի գնահատման արդյունքների հետևողականություն: | Կարող է օտար լինել որոշ ուսանողների համար և հանգեցնել հմտությունների առավել նեղ շրջանակի ձևավորման և մակերեսային ուսումնառության: |
| Հրապարակված քննական հարցեր | Ֆորմալ  քննություն, որի ժամանակ քննական հարցերը հրապարակվում են նախապես՝ հնարավորություն ընձեռելով նախապատրաստվելու և հետազոտելու: | Ավելի լավ է արտացոլում գիտելիքի կիրառումը «իրական կյանքում» և կարող է նվազեցնել հուզումն ու քննության նախապատրաստման վերացական մոտեցումները: | Կարող է սրել մակերեսային ուսուցման խնդիրները: |
| Բաց գիրք | Քննություն, որը թույլ է տալիս օգտվել հետազոտական աղբյուրներից: | Խթանում է գիտական մոտեցումների մշակումը և ավելի բարդ տեղեկատվության յուրացումը: | Կարող է հարվածի տակ դնել սեփականատիրական զգացողությունը և հանգեցնել մակերեսային ուսումնառության: |
| Էսսեի վրա հիմնված քննություն | Ժամանակային սահմանափակմամբ տրամաբանական տեքստի մշակում՝ համապատասխան սահմանված հարցերին: | Ճկուն է և կարող է անհատականացվել: | Անարդյունավետ է գնահատման տեսանկյունից, բայց կարող է խթանել առավել խորքային ուսումնառության հետազոտության նախապատրաստման գործընթացում: |
| Բազմակի ընտրության հարցեր | Մի շարք տարբերակներից ճիշտ պատասխանի ընտրությամբ քննություն: | Արդյունավետ է  իրկանանացման և եզրափակման առումով: Առկա է հնարավորություն ՝օգտագործելու համապատասխան տեխնոլոգիաներ գործընթացն ավտոմատացնելու նպատակով: | Մակերեսային ուսումնառություն և ոչ հստակ արդյունքներ, ինչը ճիշտ տարբերակը գուշակելու փորձերի   հետևանք է: |
| Համակարգչային քննություն | Ընդհանուր եզրույթ, որը բնութագրում է համակարգչային ծրագրերի լայնամասշտաբ կիրառությունը՝միտված  ավելի դինամիկ քննական | Ապահովվում է ավելի ճկուն և դինամիկ քննական գործընթաց: | Համակարգչային հիմքով գնահատման գործընթացի մշակումը կարող է լինել ժամանականտար և բարդ կազմակերպման |

| | | | |
|---|---|---|---|
| | ձևաչափերի մշակմանը: Կարող է ներառել քննության ավելի դինամիկ գրաֆիկական, վիդեոգրաֆիկական, աուդիո և մեդիա բովանդակություն: | | առումով: |
| Ժամանակային սահմանափակմամբ գործնական քննություն | Համապատասխանում է ավելի մեծ թվով առարկաների համար, ժամանակային սահմանափակմամբ գործնական խնդիրները լուծվում են՝ կախված որոշակի տեխնիկական գիտելիքներից և հմտություններից: | Մասնագիտական առումով համապատասխան և դինամիկ գնահատում: | Կարող է լինել բարդ լոգիստիկայի տեսանկյունից: և պահանջելզգալի մասշտաբի ռեսուրսներ: |
| Բանավոր քննություն | Գնահատում է ուսանողների՝համակարգված տրամաբանական ձևով բարդ գաղափարները ներկայացնելու կարողությունը: | Ճկուն է և կարող է անձնականացվել: | Կարող է ժամանակատար լինել մեծ լսարանի դեպքում: |
| Լսարանային հարցաշար | Արագ ինքնագնահատում, որն օգտակար է՝ շարունակական ուսումնառության համար: | Արագ հետադարձ կապ ապահովելու տարբերակ է՝ ինքնագնահատման միջոցով: Տալիս է հնարավորություն՝ մշակելու ավելի դինամիկ մոտեցումներ՝ նախագծելով հարցման հետարձակվող ձևաչափեր: | Կարող է բարդ լինել արագ կազմակերպել: |
| Ուսանողների մշակած հարցաշար | Ուսանողների կողմից մշակված հարցաշար՝ համագործակցային տարբերակով անհատական հարցերը ներկայացնելու միջոցով: | Դինամիկ, ներառական և զվարճալի գնահատման ձևաչափ: | Կազմակերպումը կարող է բարդ լինել և չծածկել անհրաժեշտ թեմաների ամբողջ ծավալը: |
| Դեբատ | Ֆորմալ քննարկման գործընթաց, որի շրջանակում ուսումնասիրվում են տրված թեմաներն ու առարկաները: | Կարող է խթանել քննադատական մտածողությունը, հռետորական կարողություններն ու տարբեր դիտակետերի գնահատման կարողությունը: | Ժամանակատար է և կարող է նպաստել ճարտար խոսք ունեցող ուսանողների հանդեպ կանխակալ վերաբերմունքի ձևավորմանը: |
